



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 120 2020

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գևորգ Բաղդասարյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դոցենտ (գլխավոր խմբագիր)

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Հովհաննես Սարգսյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (խորհրդի նախագահ)

Արթուր Չախոյան ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999 թ.) և դոկտորական (2002 թ.) ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-640
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,
orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 03.12.2020 թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Շավաղ՝ 6 պայմ. տպ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է
«Տիր» հրատարակչության տպարանում
Երևան, Ա. Միկոյան 2/2

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2020 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արամ Թամրազյան, Մարիամ Բաղդասարյան Առանձին դաժանությամբ կատարված սպանությունների օրենսդրական ամրագրումները պատմական զարգացման ընթացքում-2.....	3
Դավիթ Թումասյան Ընտանիքում բռնության տեսակներն ըստ ՀՀ օրենսդրության.....	13
Սևակ Պողոսյան Հանցագործություն կատարողի հարցի շուրջ.....	26

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գառնիկ Մաթևոսյան, Սամվել Հակոբյան Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի միջամտության քրեադատավարական և օպերատիվ-հետախուզական հիմնահարցերը.....	33
--	----

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արթուր Ղանբարյան, Վահե Թորոսյան Պետության և եկեղեցու տարանջատման սկզբունքը և դավանանքի ազատությունը «Որոգայթ փառաց» սահմանադրության նախագծում.....	39
Վախթանգ Բաբայան Պետության սոցիալական գործառույթի էությունն ու առանձնահատկությունները.....	44
Հայկ Ավետյան Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման դադարեցումը.....	49

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Աշխեն Սողոմոնյան Լուծարումը որպես իրավաբանական անձի դադարման ձև.....	54
Աննա Մկրտչյան Օպերատիվ ներգործության միջոցների և ինքնապաշտպանության հարաբերակցությունը քաղաքացիական իրավունքում.....	62

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արթուր Նազարեթյան Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմքերը ՀՀ քաղաքացիական դատավարությունում.....	67
--	----

ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Անժելա Տոնոյան Աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտը ՀՀ-ում.....	74
--	----

ՄԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts.....	78
--	----

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները.....	92
---	----

ԱՐԱՄ ԹԱՄԱԶՅԱՆ

Արդարադատության պետական խորհրդական,
ՀՀ վաստակավոր իրավաբան,
իրավաբանական գիտությունների դոկտոր

ՄԱՐԻԱՄ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի
իրավական ապահովման և սպասարկման
բաժնի գլխավոր մասնագետ

ԱՌԱՆՁԻՆ ԴՈՒՄՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄՆԵՐԸ ԴԱՏՄԱԿԱՆ ՉԱՐԳԱՅՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ-2

Առանձին դատանությունը որպես հանցավոր վարքագծի դրսևորման անձնական հատկանիշ

Այսպիսով, եթե պատմական տևական ժամանակաշրջանում պետությունները և պետական իշխանությունը հրաժարվեցին պատժամիջոցների առանձին դատան եղանակների կիրառումից, այնուհետև նաև մահապատժի կիրառումից ընդհանրապես, ապա նույնը չի կարելի ասել այդ առումով անձի հանցավոր վարքագծի առանձին դատան դրսևորումների մասին:

Անձի հանցավոր վարքագծի առանձին դատան դրսևորումների և նրա օրենսդրական ամրագրումների մասին իրավունքի տեսությանը հայտնի է շատ վաղուց: Նույնը վերաբերում է նաև առանձին դատանության դրսևորումների օրենսդրական ամրագրումներին:

Մարդկության պատմական զարգացման ընթացքում անձի կյանքի իրավական պաշտպանությունը ունեցել է բազմաթիվ դրսևորումներ, այն քրեաիրավական առումով արժեք չհանդիսանալուց մինչև ամենաթանկ բարիք համարվելը: Ներկայումս կյանքի իրավունքը համարվում է անձի բնական ու գերակա իրավունք:

Ըստ կրոնական պատմագիտության երկրի վրա տեղի ունեցած առաջին հանցագործությունը հանդիսանում է եղբայրասպան Կայենի կողմից Աբելի սպանությունը:

Հռոմեական իրավունքը արդեն իսկ

ընդհանուր սպանությունների թվից առանձնացրել էր առանձին դատանությամբ կատարված սպանությունները, որոնց թվին էին դասվում ավազակային հարձակմամբ, դարանակալմամբ, ողջակիզմամբ, թունավորմամբ և անձին կյանքից զրկելու այլ եղանակներով կատարված սպանությունները: Առանձնապես ծանր էր համարվում մերձավոր հարազատի սպանությունը¹:

Հին եվրոպական շատ երկրների օրենքները սպանության դատանությունը գնահատելիս նախապատվությունը տալիս էին ոչ թե սպանության կատարման եղանակին, այլ սպանություն կատարողի անձը բնութագրող հանգամանքներին: Ինչպես եվրոպական շատ երկրներում, Գերմանիայում նույնպես խստագույն պատիժ էր սահմանվում հարազատի սպանության համար, այն այլ սպանությունների համեմատությամբ համարելով ավելի դատան և բարոյազուրկ արարք: Եվրոպական մի շարք երկրներ էլ սպանության որակյալ հանագամանք էին համարում հանցագործության կատարման եղանակը, օրինակ՝ Բելգիայի և Ֆրանսիայի քրեական օրենքը որակյալ սպանությունների շարքն էր դասում թունավորման եղանակով կատարված սպանությունը, Ավստրիան որակյալ սպանություն էր համարում այլ նենգ եղանակով կատարված սպանությունը²:

Այս տեսակետից խիստ կարևորվում է միջնադարյան հայ իրավունքի խոշորագույն մտածող Մխիթար Գոշի (1130-1213) Դատաստանագիրքը, որն ընդհանրապես իրավունքի,

1. **Есимов С. Н.** Преступление и наказание в древнем праве. - Варшава, 1903, с. 54.
2. Նույն տեղում, էջ 55:

և միջնադարյան հայ իրավունքի և իրավաբաղաքական մտքի բացառիկ փայլուն նմուշ է ոչ միայն գործնական կիրառական իմաստով, այլև գիտական և ճանաչողական առումով և որպես իրավագիտության համընդհանուր պատմության մեջ բացառիկ երևույթի՝ այժմեական բոլոր ժամանակների և հետազոտողների համար³:

Ինչպես նկատել է անվանի իրավագետ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ. Սուքիասյանը «Մխիթար Գոշի Դատաստանագրքի գնահատման համար նախ պետք է նշել, որ բացառությամբ Հուստինիանոսի «Corpus juris civilis» ժողովածուի և հետագա ժամանակներում ընդունված բյուզանդական օրենքների («Էկլոգա», «Պրոխիրոն» և այլն), նրա ապրած դարաշրջանում չեն եղել «Հայոց Դատաստանագրքին» հավասար իրավական հուշարձաններ»⁴: «Այդ տեսակետին կարող է հանգել յուրաքանչյուր հետազոտող, եթե ծանոթանա ժամանակաշրջանի իրավական մյուս հուշարձաններին՝ (Ասլյան օրենք՝ 6-րդ դար, Սաքսոնական դատաստանագիրք՝ 8-րդ դար, անգլիական Կնուտ թագավորի օրենքները՝ 1017-1035 թթ., Սաքսոնական հայելի՝ 1224-1230 թթ., Մագդեբուրգյան օրենքներ՝ 12-14-րդ դարեր, «Դոն Ալֆոնս թագավորի յոթն օրենքները»՝ 1256-1265 թթ., Բովեզի սովորույթները՝ 1232 թ., Կոնրադ Օտտոնի ստատուտները՝ 12-րդ դար, «Ռուսական Պրավդան»՝ 11-13-րդ դարեր և այլք)»⁵:

Ինչպես նկատել են ռուս իրավագետներ Ի. Դ. Լևինը և Վ. Շևցովը «Չնայած միջնադարյան քողին, այնուամենայնիվ, պետական ինքնիշխանության մասին Գոշի հասկացությունը հեռու չէ պետական ինքնիշխանության ժամանակակից գիտական սահմանումից»⁶:

Ինչպես նկատել է ականավոր իրավագետ, ՌԴ ԳԱ ակադեմիկոս Վ. Ս. Ներսիս-

յանցը Մխիթար Գոշը որպես բնական իրավունքի տեսության կողմնակից, ընդունում էր մարդկանց բնական հավասարությունը, հետևաբար նաև օրենքի նկատմամբ իրավունքի առաջնայնության սկզբունքը⁷:

Իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Խ. Ա. Թորոսյանը նշել է. «Դատաստանագրքի պահանջը խիստ էր: Նրա անհրաժեշտությունը զգում էին և հոգևորականները և աշխարհականները, ասենք նաև Ա՝ վերինները և վարինները»: Հեղինակը նկատում է նաև, որ «Քաղաքական ընդհանուր իր կողմնորոշմանն էլ համապատասխան Մխիթար Գոշը ոչ թե օտար օրենքները թարգմանեց հայերեն, այլ ձեռնամուխ եղավ ստեղծելու ազգային օրենսգիրք», և որ՝ «Մխիթար Գոշի Դատաստանագիրքը միջնադարյան Հայաստանում գործող ու կիրառվող օրենսգիրք է եղել»⁸: Այն կիրառվել է նաև հայկական գաղթօջախներում, օրինակ Լեհաստանում, Հնդկաստանում և այլուր: 18-րդ դարում Վրաստանում Մխիթար Գոշի կանոնները օգտագործվել են Վախթանգի կանոններում և դրանում արտացոլվել են առանձին գլխով՝ որպես հայկական օրենքներ:

Անձի, նրա կամքի ազատության, կարգավիճակի, պետության կառուցվածքի, ինքնիշխանության խնդիրներից զատ Գոշը անդրադարձել է նաև սովորույթային իրավունքի խնդիրներին, կանոնական և աշխարհիկ օրենսդրությանը, դատական համակարգին, աշխարհիկ և հոգևոր դատարաններին, անձի սոցիալական և աշխատանքային իրավունքների պաշտպանությանը, նույնիսկ աշխատանքի անվտանգության կանոնների պաշտպանությանը, մասնավոր սեփականության իրավունքին, ժառանգական իրավունքին, ամուսնաընտանեկան հարաբերություններին, հանցագործության և պատժի խնդիրներին, պատժի անհատականացման սկզբունքին,

3. Հաշվի առնելով քննարկվող թեմայի առանձնակի բնույթը՝ մեր կողմից վերլուծվող նյութում տեղ չեն գտել Դատաստանագրքի ստեղծման պահանջին, պատմությանը, նպատակին, կառուցվածքին՝ Ա.Բ.Գ. խմբագրություններին, գործադրմանը, գրչագրերին վերաբերող դրույթներ, որպիսիք չեն առնչվում առանձին դաժանության և առանձին դաժանությամբ կատարված սպանությունների հետ:

4. **Սուքիասյան Ա.Գ.**, Մխիթար Գոշը և «Հայոց դատաստանագիրքը», Երևան, 1965 թ. էջ 61:

5. **Սաֆարյան Գ. Հ.**, Ղազանցյան Լ.Ա. «Հայ իրավունքի պատմության հիմնահարցեր», Երևան, 2019, էջ 13-14:

6. **Левин И.Д.** Суверенитет. М. 1984. էջ 64. Курс международного права, М. 1967, էջ 33. Шевцов В. Государственный суверенитет М., 1979, с. 5.

7. **Нерсисянц В. С.** Философия права, Учебник для вузов М., 2008., էջ 108, Нерсисянц В.С. Право и закон М., с. 87.

8. **Թորոսյան Խ. Ա.** Մխիթար Գոշի Դատաստանագրքի գործադրության մասին միջնադարյան Հայաստանում, «Պատմաբանասիրական հանդես», 1971, թիվ 3, էջ 35-48:

անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտին, քրեական և քաղաքացիական դատավարությանը և այլն:

Գոչը չի ընդունել այն օրենքները, որոնք դաժան էին և չէին համապատասխանում հասարակության և ժամանակի պահանջներին: Նա դեմ է եղել մահապատժի կատարման առանձնակի դաժան եղանակներին և մահապատժին՝ ընդհանրապես:

Հանգամանորեն անդրադառնալով դատավարության հարցերին՝ Գոչը կտրականապես դեմ էր դատավարության ինկվիզիցիոն ձևին և «բացառապես ծեծի, խոշտանգումների և այլ բարբարոսական մեթոդների միջոցով ապացույցներ ձեռք բերելուն»⁹:

Դատաստանագիրքը, ընդհանուր առմամբ, դեմ էր ձևական ապացույցներին, ենթադրություններին, ձևական խոստովանությանն ու երդումներին:

Ինչպես նկատել է իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ. Հ. Սաֆարյանը «Եթե միջնադարյան դատավարական իրավունքում խոստովանությունը համարվում էր «ապացույցների թագուհի», ապա Գոչն ապացույցի այդ տեսակին այնքան էլ կարևորություն չէր տալիս...»¹⁰:

Գոչը զգուշացնում էր, որպեսզի դատավճիռը չկայացվի զրպարտության հիման վրա: Դատաստանագիրքը պահանջում էր դատավորից «ճշգրտել» գործի փաստական հանգամանքները, այդ նպատակով մանրամասն հարցաքննել գործով անցնող վկաներին, հետազոտել գործով տրված եզրակացություններն ու կարծիքները, իրեղեն ապացույցները և արդյունքում կայացնել արդարացի դատավճիռ¹¹:

Մխիթար Գոչը գտնում էր, որ պատիժը չպետք է հետապնդի ֆիզիկական նպատակներ կամ վրեժի նպատակ, այլ պետք է ուղղված լինի զոջմանը, ուղղմանը և մարդու վերադաստիարակմանը: Ինչպես դժվար չէ նկատել՝ ժամանակի մեջ խիստ առաջադիմական, մարդասիրական, նաև այժմեական, սկզբունքային գաղափարներ են:

Գոչը մարդասիրությունը բարոյական

արարքից զատ դիտարկել և քննարկել է նաև որպես իրավական սկզբունք՝ օրինականության, արդարության, պատժի անհատականացման հետ միասին: Նրա մարդասիրությունը միասայրջէր, այն ուներ երկու կողմ՝ մարդասիրություն հանցանք կատարած անձի նկատմամբ և մարդասիրություն հասարակության նկատմամբ, որոնցից յուրաքանչյուրը չէր բացառում և խոչընդոտում մյուսի գործառնական կիրառությունը, այլ հակառակը հավասարակշռում էր մյուսին և գործում փոխկապակցված ձևով:

Գոչը դեմ է եղել նաև արյան վրեժին և դրա գաղափարին: Արյան վրեժը աչքի դիմաց աչք, ատամի դիմաց ատամ, արյունը արյունով լվանալու սովորույթը, վենդետան տոհմային հասարակարգերին բնորոշ երևույթ էր, լայն տարածում ստացած միջնադարյան Եվրոպայում, Հին Ռուսիայում, մերձավոր արևելքի երկրներում, որոշ կովկասյան ժողովուրդների մոտ և այլուր, համաձայն որի՝ սպանություն կատարած անձը կամ նրա ընտանիքի անդամներից որևէ մեկը անպայման ենթակա էր մահվան հատուցման կարգով տուժողի ընտանիքի (տոհմի, ցեղի, խմբավորման) անդամներից որևէ մեկի կողմից՝ ընտանեկան պատիվը վերականգնելու համար: Այս սովորույթի վտանգավորությունն անչափ մեծ էր. նախ որ՝ վերջինս չուներ «վաղեմության ժամկետ», ապա որ՝ այն հղի էր բազմաթիվ վտանգավոր հետևանքներով և որն հաճախ ավելի դաժան էր դառնում, քան դրան նախորդած հանցագործությունը: Արյան վրեժի վտանգավորությունը, որի դեմ պայքարել է Մխիթար Գոչը, նաև նրանում էր, որ այն, ի վերջո, վերածվում էր երկար տարիների ու տասնամյակների արյունալի հակամարտության երկու հակամարտող խմբերի միջև և երբեմն, նույնիսկ, հանգեցնում նրանց ոչնչացմանը: Փաստորեն, արյան վրեժի լուծմամբ կատարվում էր նոր սպանություն, հաճախ ավելի դաժան եղանակով, առանձնակի դաժանության և այլ ծանրացնող հանգամանքների դրսևորմամբ, ու այդպես շարունակ, սերնդեսերունդ, որը ժամանակի ընթացքում հիմնականում վերանալով, այնուամենայնիվ որոշ եվրոպական

9. Սաֆարյան Գ. Հ., Ղազանյան Լ. Ա. «Հայ իրավունքի պատմության հիմնահարցեր», Երևան, 2019, էջ 62:

10. Նույն տեղում, էջ 66:

11. Մ. Գոչ Դատաստանագիրք, էջ 29-34, 35, 37-38, 41, 45, 159-160, 317, 411-412:

և ասիական երկրներում տևեց մինչև 20-րդ դարի սկիզբը, իսկ մերձավոր արևելքի երկրներում, որոշ կովկասյան ժողովուրդների մոտ և այլուր կիրառվում է առ այսօր:

Երևույթի դաժանությունը կայանում է նրանում, որ ի տարբերություն վրեժի շարժառիթով կատարված հասարակ սպանության, արյան վրեժի շարժառիթով կատարված սպանության դեպքում հանցավորը ղեկավարվում է ոչ այնքան, ելնելով տուժողի նկատմամբ ունեցած անձնական անբարյացակամ վերաբերմունքից, որքան իրեն և իր ազգին ամոթով չթողնելու դարերի ընթացքում ձևավորված դաժան սովորույթով:

Փաստորեն, արդեն 12-րդ դարում մերժելով արյան վրեժի գաղափարը, Գոշը դրանով մեկ անգամ ևս ապացուցում է իր մեծ մարդասիրությունը և միջնադարյան Հայաստանի իրավական մտքի բարձր աստիճանը, մի բան, որը հատուկ չէր նույն դարաշրջանի եվրոպական իրավական հուշարձաններին, մասնավորապես՝ «Սաքսոնական կապիտուլյալներ»-ին, գերմանական «Կորոլինա»-ին, որոնք աչքի էին ընկնում իրենց դաժան պատժեհամակարգով, որտեղ տեսակարար կշիռը կազմում էր մահապատիժը¹²:

Մխիթար Գոշի Դատաստանագիրքը չէր ընդունում նաև օրդալիան որպես ապացույց, այն համարելով որպես ապացույցի բարբարոսական ձև: Օրդալիայի բացատրությունը կայանում է նրանում, որ անձն իրեն ենթարկում էր փորձության (օրդալիայի) իր անմեղությունն ապացուցելու համար, դրանով իսկ իրեն հանձնելով «աստվածային դատարանին», ակնկալելով Աստծո օգնությունը: Օրդալիան դրսևորվում էր շիկացած երկաթը ձեռքը վերցնելու, սառը ջուրը մտնելու, անզեն կամ զենքով մեղանարտելու միջոցով, և եթե արդյունքում իրեն փորձության ենթարկողը մարմնական վնասվածք չէր ստանում կամ չէր մահանում, դրանով նա «ապացուցում» էր իր արդարությունը:

Մխիթար Գոշը (հետագայում նաև Սմբատ Սպարապետը) հանցագործության

սուբյեկտներ են ճանաչել միայն որոշակի տարիքի հասած ֆիզիկական մեղսունակ անձանց, այն ինչ որ ներկայումս նույնությամբ ամրագրված է Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի Հանրապետության և բազմաթիվ այլ երկրների քրեական օրենսգրքերում: Ինչպես ասում են «խոսքերն ավելորդ են»:

Ամփոփելով միջնադարյան հայ իրավունքի հուշարձանի մեր կողմից քննարկվող հատվածը, չենք կարող չհիշատակել, Դատաստանագրքի կիրարկման հետ կապված անչափ հետաքրքրական և իրական մի դեպքի մասին, այն է՝ 1930-ական թվականներին Հնդկաստանի Կալկաթա քաղաքում բնակվող մեծահարուստ հայ քաղաքացին իր կտակում հիշատակել է, որ իր թողած ժառանգությունը բաժանվի Մխիթար Գոշի Դատաստանագրքի օրենքների տրամաբանությամբ, և Հնդկաստանի իշխանությունները, հարգելով կտակարարի կամքը, հայ փաստաբանի միջոցով պահանջել և դատավարությունը կայացրել են Մխիթար Գոշի Դատաստանագրքի օրենքների համաձայն¹³: Այս ամենը մեկ անգամ ևս վկայում է Դատաստանագրքի դրույթների այժմեականության և արժեքավորության մասին:

Ռուսական իրավունքը ևս անձի կյանքը գնահատում է որպես առանձնակի արժեք ունեցող անփոխարինելի բարիք և, հետևաբար, կյանքի իրավունքի քրեաիրավական պաշտպանությանը տալիս է առաջնային տեղ: Ռուսական իրավունքում կյանքի իրավունքի պաշտպանության առաջին գրավոր ապացույցներից են Կիևյան Ռուսիայի և Բյուզանդիայի միջև կնքված պայմանագիրը, որտեղ նշումներ կան կյանքի դեմ ուղղված հանցագործությունների մասին, Մեծ իշխաններ Օլեգի (911) և Իգորի (945) ու հույների միջև կնքված պայմանագրերը, որոնք նույնպես պարունակում են համապատասխան նորմեր կյանքի դեմ ուղղված հանցագործությունների մասին: Մասնավորապես, Ռուսիայի և Բյուզանդիայի միջև 911 թ. կնքված պայմանագրի 4-րդ հոդվածը սահմանում էր, որ «Ռուսի կողմից Քրիս-

12. Хрестоматия памятников феодального государства и права стран Европы/ под ред. В. М. Корецкого, М., Госюриздат, 1961, с. 3-34.

13. **Թորոսյան Խ. Ա.** Մխիթար Գոշի Դատաստանագրքի գործադրության մասին միջնադարյան Հայաստանում, «Պատմաբանասիրական հանդես», 1971, թիվ 3, էջ 47, Պ. Սաաթճյան, Մխիթար Գոշ Գանձակեցի, «Ձարթոնք». 1963, թիվ 39, 9 նոյեմբեր:

տոնեային (բյուզանդացուն) կամ Քրիստոնեայի (բյուզանդացու) կողմից ռուսին սպանելու դեպքում հանցավորը պետք է մահանա նույն վայրում, որտեղ կատարել է սպանությունը: Եթե մարդասպանը թաքնվի, ապա նա կգրկվի տանից, և սպանվածի մերձավոր հարազատը կարող է վերցնել օրենքով սպանվածին հասանելի բաժինը, բայց և մարդասպանի կինը ևս կարող է ստանալ օրենքով իրեն հասանելի բաժինը: Եթե սպանություն կատարած և քննությունից թաքնված անձը չունի սեփականություն, ապա նա կփնտրվի մինչև գտնվելը, որից հետո կսպանվի»: Նման երկկողմանի կիրառականություն ունեցող որոշակի սահմանափակ իրավական նորմեր են պարունակում նաև հույների հետ իշխան Իգորի կնքած պայմանագրերը, որպիսիք, սակայն, ըստ բազմաթիվ հետազոտողների ոչ թե օրենսդրական ակտեր էին, այլ սովորույթի հիման վրա համընդհանուր ճանաչում գտած իշխանական պայմանագրեր^{14,15}:

Սպանության և դրա համար նախատեսվող պատասխանատվության մասին ավելի ամբողջական պատկերացում է տալիս Յարոսլավ Իմաստուն իշխանի «Ռուսական Պրավդա»-ն (հնագույն համարը թվագրված է 1016 թվականին), որը հանդիսանում էր Կիևյան Ռուսիայի իրավական նորմերի ժողովածուն և համարվում ռուսական իրավունքի հիմնական գրավոր աղբյուրներից մեկը՝ իր նշանակությունը պահպանելով մինչև 15-16-րդ դարերը: Շարունակելով ճանաչել արյան վրեժի իրավունքը՝ Ռուսական Պրավդան նախ սահմանափակեց մարդասպանին ամբողջովին սպանվածի հարազատների տրամադրությանը հանձնելու հնարավորությունը, ապա և արյան վրիժառուների շրջանակը: Համաձայն Ռուսական Պրավդայի սահմանած արյան վրեժի իրավունքի՝ եղբայրը վրեժ էր լուծում եղբոր համար, որդին՝ հոր համար, հայրը՝ որդու համար, քրոջ եղբայրը՝ քրոջ որդու համար: Կանայք չէին կարող ընդգրկվել արյան վրիժառուների ցուցակում: Հետագայում արյան վրեժը փոխա-

րինվեց գնումով՝ գլխագին վճարելով: Գլխագին վճարումն իր մեջ չէր պարունակում քրեական պատժի տարրեր: Հանցավորին հնարավորություն էր տրվում անձամբ կարգավորել խնդիրները սպանվածի հարազատների հետ՝ վճարելով նրանց կողմից պահանջված գումարը (գլխագինը): Համաձայն հաստատված սանդղակի ազատ քաղաքացու կամ գյուղացու գլխագինը գնահատվում էր 40 գրիվա, բոյարի և այլ անվանի քաղաքացու սպանության դեպքում՝ դրա կրկնապատիկը, ստրուկ ճանաչվածի սպանության դեպքում այդ գինը կրճատվում էր՝ հասնելով մինչև 12 գրիվա, իսկ կողմերի անհամաձայնության դեպքում սպանվածի հարազատները քաղաքացիական հայց էին ներկայացնում դատարան և դատաքննության արդյունքում դատարանը որոշում էր հայցվորի վճարման ենթակա գումարի չափը (գրիվաներով): Մարդասպանի անվճարունակության դեպքում նա «գլխովին» հանձնվում էր սպանվածի հարազատներին, որոնք կարող էին պատժել հանցավորին իրենց հայեցողությամբ, բայց չէին կարող նրան զրկել կյանքից¹⁶:

Ռուսական Պրավդայի առաջադիմական նշանակությունը փաստորեն դրսևորվեց սպանության դեպքում արյան վրեժի սահմանափակման, իսկ հետագայում ամբողջովին վերացման մեջ:

Ռուսական կենտրոնացված պետության ձևավորման պահին անհրաժեշտ էր ընդունել նոր օրենքներ, որոնք կսահմանեին նոր հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումներ: Այդպիսին հանդիսացավ 1497 թվականին ընդունված Դատաստանագիրքը, որը հիմնված էր ծառայողական կանոնագրքերի և «Ռուսական Պրավդա»-ի նորմերի վրա:

Կյանքի դեմ ուղղված հանցագործություններն իրենց ամրագրումն ստացան Ցարական Ռուսաստանի 1649 թվականի Օրենքների ժողովածուում, որտեղ պատասխանատվություն սահմանվեց տարբեր տեսակի սպանությունների համար, առաջին հերթին՝ երեխայի կողմից

14. **Артюшина О. В.**, История законодательства России об ответственности за убийство, совершенное с особой жестокостью// Сборник аспирантских научных работ юридического факультета КГУ - Казань, 2008. Вып 8, էջ 19, Эверс. Древнейшее русское право. СПб., 1835. с. 158-159.

15. **Бородин С. В.**, Проблема возмещения ущерба за умышленное убийство// Государство и право. 1994. N4. с. 94.

16. **Иванищев Н. О.**, Плата за убийство в древнем русском и других славянских законодательствах, в сравнении с германской вирой - Киев, 1840; Российское законодательство, X- XX веков. М. 1984. Т.1 с. 65-66.

ծնողի սպանության և ծնողի կողմից երեխայի սպանության համար: Նույն ժողովածուն սահմանեց նաև սպանությունն, ըստ մեղքի ձևի, դիտավորությամբ կամ անզգուշությամբ կատարվելու մասին: Պատահաբար, առանց մեղքի մահ պատճառելը պատասխանատվություն չէր նախատեսում:

Պետրոս I-ի կառավարման օրոք գործող՝ 1715 թվականի Ռազմական Արտիկուլի բազմաթիվ կետեր վերաբերում էին անձի կյանքի դեմ ուղղված հանցագործություններին՝ տարանջատելով ինչպես սպանության դիտավորությամբ և անզգուշությամբ կատարման ձևերը, այնպես էլ սպանությունների բաժանումը հասարակ և որակյալ տեսակների: Հասարակ սպանության համար նախատեսում էր մահապատիժ՝ գլխատման եղանակով, իսկ որակյալ կամ որնույն է ծանրացնող հանգամանքներում կատարված սպանության դեպքում՝ անվաջարդման եղանակով: Որակյալ սպանությունների շարքին էին դասվում վարձով, շահադիտական դրդումներով կատարված սպանությունը, ծնողի սպանությունը, մանկահասակ երեխայի սպանությունը, թունավորմամբ կատարված սպանությունը և այլն¹⁷:

Օրենսդրական մակարդակով առանձին դաժանությունն առաջին անգամ ամրագրվել է 1715 թվականի Ռազմական Արտիկուլում «առանձնակի տանջալի եղանակ» ձևակերպմամբ: Բոլոր սպանությունները պատժվում էին մահապատժով, տարբեր էին միայն դրանց իրականացման ձևերը:

Քրեականացվեց մենամարտի ժամանակ կատարված սպանությունը, այն դասվելով, նույնիսկ, որակյալ սպանությունների շարքին: Տվյալ դեպքում պատասխանատվություն էր սահմանվում թե՛ հակառակորդին սպանած անձի, թե՛ մարտավկանների համար: Որակյալ սպանությունների թվին էր դասվում նաև ինքնասպանությունը: Որքան էլ տարօրինակ հնչի այս դեպքում «պատժի էր ենթարկվում դիակը, որը պետք է դահիճը քարշ տալով տաներ անպատիվ վայր և թաղեր այն»:

Կյանքի դեմ ուղղված հանցագործությունների օրենսդրական ամրագրման հերթա-

կան իրավական ակտը 1832 թվականի Օրենքների ժողովածուն էր, որտեղ, մասնավորապես փորձարկեց տալ սպանության հասկացությունը, սահմանվեց հասարակ և որակյալ սպանությունների տեսակները՝ իրենց մեջ ամփոփելով ինչպես 1649 թվականի Օրենքների ժողովածուում, այնպես էլ Պետրոս I-ի ժամանակաշրջանի օրենսդրության դրույթները:

Յարական Ռուսաստանի 1845 թվականի Քրեական և ուղղիչ պատիժների մասին և 1903 թվականի Օրենքների ժողովածուներում սպանության ծանրացնող հանգամանք սահմանվեց արարքը **տուժողի համար առանձնակի տանջալի եղանակով կատարելը** (հոդված 1453 կետ 2): Մասնավորապես, 1845 թվականի Օրենքների ժողովածուն խստացված քրեական պատասխանատվություն էր սահմանում այն դեպքերում, երբ «անձը կյանքից զրկվել է խոշտանգմամբ կամ կյանքից զրկվելուց առաջ ենթարկվել է որևէ պակաս կամ շատ դաժան տանջանքների»¹⁸, իսկ 1903 թվականի քրեական օրենքների ժողովածուի մեջ տրված էր հակիրճ և տարողունակ ձևակերպում, այն է՝ **«տուժողի համար առանձնակի տանջալի եղանակով կատարված սպանությունը»**:

Մինչիդեղափոխական Ռուսաստանի քրեական իրավունքի տեսությունը և պրակտիկան սպանության այս տեսակը դիտարկում էր որպես սպանության օբյեկտիվ կողմը բնութագրող հանգամանք՝ պայմանավորված հանցավոր արարքի կատարման եղանակով:

Հայտնի ռուս իրավագետ Ն.Ս. Տագանցկը հանցավորի առանձնակի դաժանության մասին վկայող սպանության հասկացությունը բացահայտելիս այդպիսի սպանությունների շարքին է դասել սպանության այն տեսակները, որոնք զուգորդվել են խոշտանգմամբ, կամ մինչև մահը տուժողի նկատմամբ դրսևորած տանջանքներով և ծայրահեղ դաժանությամբ, միաժամանակ նշելով, որ «1845 թվականի Օրենքների ժողովածուն չի տվել նշված արարքի հստակ պայմաններն ու բնութագիրը, այն թողնելով պրակտիկայի հայեցողությանը, որի պատճառով գործնականում դրանք որակվել են սպանության յուրաքանչյուր դեպքի կոնկրետ

17. **Борисенкова Н. В.** Понятие «жестокость» в российском дореволюционном уголовном праве // Актуальные проблемы российского права: СПб. науч. трудов. Вып. 1. М. 2014. с. 231-232.

18. Уложение о наказаниях уголовных и исправительных // Свод законов Российской Империи Т. 15 Пг. 1916.

փաստական հանգամանքներից ելնելով: Հեղինակը նկատել է, որ 1453 հոդվածի 2-րդ կետը կարող է կիրառվել ոչ միայն այնտեղ, որտեղ խոշտանգումը հանդիսացել է որպես սպանության «հավելում», այլև այն դեպքերում, որտեղ այն հանդես է եկել որպես մահվան առաջացման միջոց»¹⁹:

Վ. Վ. Եսիպովի կարծիքով կյանքից զրկելու այն դեպքերի որակման հիմքը, որոնց իրականացման միջոց է ծառայել խոշտանգումը կամ տանջանք պատճառելը, հանդիսանում է անձի հանցավոր հակումների առանձնակի դրսևորում, որի պարագայում անձը ոչ միայն բացահայտ կերպով ձգտում է իրականացնել իր հանցավոր ծրագիրը, այլև վերջինիս իրականացման համար դիմում է առավելագույն դաժան մեթոդների կիրառման²⁰:

1903 թվականի Օրենքների ժողովածուի խմբագրական հանձնաժողովի անդամները իրենց մեկնաբանության մեջ ընդգծել են, որ այս դեպքում սպանության համար պատասխանատվության խստացման հիմքում դրվել է սուբյեկտիվ գործոնը՝ հանցավորի անձի առանձին չարամտությամբ պայմանավորված ոչ միայն տուժողին կյանքից զրկելու ցանկությունը, այլև նրան ֆիզիկական ցավ, տանջանքներ և տառապանքներ պատճառելը²¹:

Հանձնաժողովը կրակոցով կատարված սպանությունը չի դիտարկել որպես առանձին տանջանք և տառապանք պատճառելու հետ զուգորդված, չնայած վերքի առանձնահատկություններով պայմանավորված տուժողը մահացել է ահավոր ցավերի մեջ: Դրան հակառակ՝ մարմինը այրելու, մարմնից մասեր պոկելով կամ կտրելով կատարված սպանությունը շարունակում է մնալ որակյալ, նույնիսկ այն դեպքում, երբ առաջին իսկ պահից տուժողը կորցրել է գիտակցությունը և զգացողությունը²²:

Ա. Ն. Պոպովի կարծիքով «Համաձայն 1903 թվականի Օրենքների ժողովածուի հեղինակների՝ սպանությունը հարկ էր համարել տուժողի համար առանձնակի տանջալի եղա-

նակով կատարված այն ժամանակ, երբ հանցավորը կյանքից զրկելու ընթացքում կամ դրանից առաջ ունեցել է տուժողին գիտակցաբար հատուկ ֆիզիկական տանջանքներ պատճառելու ձգտում՝ անկախ գործնականում այդ նպատակին հասնելու փաստից»²³:

Արդեն նկատել ենք, որ 1903 թվականի Օրենքների ժողովածուն սովել է օրենքի հակիրճ և տարողունակ ձևակերպում, այն է՝ «սպանությունը տուժողի համար առանձնակի տանջալի եղանակով կատարելը»: Ինչպես դժվար չէ նկատել օրենքի կառուցվածքում անդրադարձ է արվում միայն հանցագործության կատարման եղանակին, մինչդեռ օրենքի մեկնաբանության հեղինակները պնդում էին, որ սովյալ հանցագործությունը կատարվում է հատուկ նպատակով՝ ուղղված տուժողին առանձնակի ֆիզիկական տառապանք պատճառելուն, որը, սակայն, որպես սպանության հատկանիշ տեղ չի գտել հանցակազմի կառուցվածքում: Թե ինչու՞ տանջանք պատճառելու հստակ նպատակը օրենքի մեջ չի արտահայտվել, պարզ չէ: Հնարավոր է, որ հեղինակները օրենքում սպանության կատարման տանջալի եղանակի մասին նշումը համարել են բավարար նաև հանցակազմի սուբյեկտիվ կողմի ներկայացման առումով:

Ընդունելով օրենքի մեկնաբանությամբ արտահայտված դիրքորոշումը, այնուհանդերձ պետք է նշել, որ բոլոր դեպքերում օրենքի նման ձևակերպումը ողջամիտ մտահոգության տեղիք է տալիս արարքների քրեաիրավական գնահատման առումով: Մասնավորապես, առանց տուժողին տանջանք, տառապանք պատճառելու դիտավորության սպանությունը զուտ միայն կատարման տանջալի եղանակով կատարելը պետք է համարել ծանրացնող հանգամանքներում կատարված սպանություն, թե՛ ոչ: Կամ, տուժողին տանջանք, տառապանք պատճառելու դիտավորությամբ սպանությունը առանց այն տանջալի եղանակով կատարման պետք էր համարել ծանրացնող հանգա-

19. Таганцев Н. С. О преступлениях против жизни по русскому праву. Т 2 СПб. 1871. с. 70.

20. Есипов В. В. Уголовное право. Часть Особенная. Преступления против личности и имущества. М. 1913 էջ 32. Андреева Л.А., Константинов П.Ю. Влияние жестокости преступного поведения на уголовную ответственность. СПб. 2002. с. 119.

21. Уголовное уложение. Проект редакционной комиссии и объяснения к нему. с. 63.

22. Նույն տեղում, էջ 64-65:

23. Попов А. Н. Убийства, совершаемые с особой жестокостью, а также общеопасным способом СПб 2001, с. 5.

մանքներում կատարված սպանություն, թե՛ ոչ: Կամ ինչպե՞ս պետք էր արարքը որակել այն դեպքերում, երբ սպանությունը կատարվել է տանջալի եղանակով, սակայն տուժողը հանգամանքներից ելնելով (գիտակցության կամ զգացողության կորուստ), առանձնակի տանջանք կամ տառապանք չի զգացել:

Օրենքի կառուցվածքի և նրա մեկնաբանության մեջ հակասությանը և օրենքի անհամեմատ լայն մեկնաբանությանը անդրադարձել են նաև մի շարք իրավագետներ²⁴:

Ամփոփելով, նկատենք, որ մեր կարծիքով տանջալի եղանակով կատարված սպանությունը վերաբերում է հանցակազմի օբյեկտիվ կողմին, այն է՝ կատարման առանձին տանջալի եղանակին և ենթադրում հանցակազմի սուբյեկտիվ կողմին բնութագրող, այն է՝ դիտավորությամբ տուժողին առանձնակի տանջանք, ցավ և տառապանք պատճառելու նպատակ:

Ռուսաստանի՝ 1922 և 1926 թվականների քրեական օրենսգրքերը, Հայաստանի Հանրապետության 1927 թվականի քրեական օրենսգիրքը դարձյալ սպանության ծանրացնող հանգամանք են սահմանել այն **տուժողի համար առանձնակի տանջալի եղանակով կատարելը**: Այս առումով՝ Ա. Ա. Պիոնտկովսկին նշում էր, որ ցանկացած սպանություն ուղեկցվում է տուժողին ֆիզիկական տառապանք պատճառելով, բայց, 1926 թվականի Ռուսաստանի քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածի «գ» կետով կարող է որակվել միայն այն սպանությունը, որտեղ հանցագործի կողմից դրսևորվել է առանձնակի դաժանություն, ինչը և վկայում է հանցագործի առանձնահատուկ սոցիալական վտանգավորության մասին²⁵:

Պրոֆեսոր Ա. Ա. Ժիժիլենկոն, մեկնաբանելով 1926 թվականի Ռուսաստանի քրեական օրենսգիրքը, նշել է, որ սպանության առանձնապես տանջալի եղանակը պետք է տարբերակել հասարակ դաժանությունից, ինչը ցանկացած հանցագործության ծանրացնող հանգամանք է: Նրա կարծիքով սպանության առանձնակի տանջալի եղանակն առկա է այն դեպքերում, երբ հանցավորը հատուկ տանջել է

զոհին: Հետևաբար, սպանությունը չի կարելի առանձնակի տանջալի եղանակով կատարված համարել, եթե առանձնակի տանջանքները չեն ընդգրկվել հանցավորի գործունեության նպատակի մեջ²⁶:

Փաստորեն, հետհեղափոխական հեղինակները, ինչպես և 1903 թվականի Օրենքների ժողովածուի հեղինակները տալիս էին տուժողի համար առանձնակի տանջալի եղանակով կատարված սպանության նման մեկնաբանումներ:

Ռուսաստանի 1960 և Հայաստանի 1961 թվականների քրեական օրենսգրքերը (համապատասխանաբար 102 հոդվածի «գ» կետ և 99 հոդվածի 6-րդ կետ) տուժողի համար առանձնապես տանջալի եղանակով սպանության փոխարեն որպես սպանությունը ծանրացնող հանգամանք սահմանեցին՝ **սպանությունն առանձին դաժանությամբ կատարելը**: Կատարված փոփոխությամբ ընդլայնվեց նորմի կիրառման շրջանակները, որն ի տարբերություն ՌԴ 1926 և ՀՀ 1927 թվականների քրեական օրենսգրքերի, սպանության ծանրացնող հանգամանքը չէր պայմանավորում միայն կատարման եղանակով: Նորմի օրենսդրական ձևակերպումը հնարավորություն էր տալիս նրանում ներառել ինչպես սպանության կատարման եղանակը, այնպես էլ անձին առանձին ցավ, տանջանք, տառապանք պատճառելու հանցավորի դիտավորությունը, դրանում ընդգրկելով նաև հանցավորի առանձին դաժանության մասին վկայող սպանության բոլոր դեպքերը: Փաստորեն ի տարբերություն ՌԴ 1926 և ՀՀ 1927՝ թվականների քրեական օրենսգրքերի, ՌԴ՝ 1960 և ՀՀ՝ 1961 թվականների քրեական օրենսգրքերը սահմանում էին առանձին դաժանությամբ կատարված սպանությունները, այլ ոչ թե առանձնապես տանջալի եղանակով կատարված սպանությունները: Նկատի ունենալով, որ սպանության առանձնապես տանջալի եղանակն իր մեջ չէր ներառում սպանության այն բոլոր տեսակները, որոնք վկայում են հանցագործի առանձնակի դաժանության մասին, օրենսդիրը ՌԴ 1960 թվականի և ՀՀ

24. Попов А. Н. Убийства, совершаемые с особой жестокостью, а также общепаспным способом СПб. 2001, с. 5-6.

25. Пионтовский А. А. Преступления против личности. М. 1938 էջ 20., Андреева Л.А., Константинов П.Ю. Влияние жестокости преступного поведения на уголовную ответственность. СПб. 2002. с. 120.

26. Жижиленко А. А. Преступление против личности. М., 1927. с. 23-24.

1961 թվականի քրեական օրենսգրքերում ավելի հստակ սահմանեց սպանության կատարման տվյալ եղանակը՝ որպես արարքը որակյալ դարձնող հանգամանք: Օրենսդրական այս հաջողված ձևակերպումը պահպանվեց և տեղ գտավ Ռուսաստանի Դաշնության 1996 թվականի և Հայաստանի Հանրապետության 2003 թվականի քրեական օրենսգրքերում:

Այլ կերպասած «առանձին դաժանություն» եզրույթը ավելի լայն է քան «առանձնապես տանջալի եղանակ» եզրույթը և վերջինս, փաստորեն ներառվում է «առանձին դաժանություն» եզրույթի մեջ՝ կազմելով նրա բաղկացուցիչ մասը:

Տեսական գրականության մեջ միասնական է այն կարծիքը, որ ՌԴ 1960 և ՀՀ 1961 թվականների քրեական օրենսգրքերում տրված «առանձին դաժանության» սահմանումները ավելի հաջողված են, քան 1926 և 1927 թվականների օրենսգրքերով տրված ձևակերպումները:

Ն. Ի. Ջագորոդնիկովը նշում է, որ առանձին դաժանություն ձևակերպումը ավելի հակիրճ և հստակ տալիս է արարքի վտանգավոր բնույթի, եղանակի ու վտանգավոր հետևանքների, այդ թվում՝ տուժողի մինչ մահը կրած տառապանքների ու տանջանքների, ինչպես նաև հանցավորի անձի վառ բնութագիրը²⁷:

Մ. Կ. Անիյանցը նշել է. «Սպանության առանձնակի տանջալի եղանակը չի ընդգրկում հանցավորի առանձին դաժանության մասին վկայող սպանության բոլոր դեպքերը, որը հաճախ դատական պրակտիկայում անհամապատասխանությունների է հանգեցնում: Եվ խոսքը ոչ թե մեկ եզրույթը մյուսով փոխարինելու, այլ այդ հանգամանքի բովանդակության մեջ է: «Առանձին դաժանություն» հասկացությունն ավելի ճիշտ է, ընդարձակ և ընդգրկում է այն բոլոր դեպքերի բազմազանությունը, երբ դիտավորյալ սպանությունը հատուկ վտանգավորություն է ստանում: Մինչև նույն ժամանակ, ինքնին ենթադրվում է, որ տուժողի համար հատկապես տանջալի եղանակով կատարված սպանությունը պետք է որակվի որպես առանձին դաժանությամբ կատարված»²⁸:

Բազմաթիվ այլ երկրների քրեական օրենսգրքեր նույնպես առանձին դաժանությունը սահմանել են որպես սպանությունը որակյալ դարձնող հատկանիշ: Այսպես, Գերմանիայի քրեական օրենսգրքի 211-րդ պարբերության 2-րդ մասի համաձայն, սպանությունը որակյալ դարձնող հանգամանքների շարքին է դասվում առանձնակի դաժանությունը:

Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 221-3 հոդվածի համաձայն կանխամտածված սպանության համար նախատեսվող պատասխանատվությունը մեծանում է, եթե նրան նախորդել են կամ այն ուղեկցվել է տուժողին տանջանքներ պատճառելով, կամ այլ դաժան արարքների կատարմամբ:

Լեհաստանի՝ 1997 թվականի քրեական օրենսգրքը սպանության ծանրացնող հանգամանքների շարքին է դասում այն առանձին դաժանությամբ կատարելը (148-րդ հոդված 2-րդ պարբերություն, 1-ին կետ):

Իսպանիայի քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ կետը նույնպես պատասխանատվություն է սահմանում այլ անձին առանձին դաժանությամբ կյանքից զրկելու համար:

Լատվիայի՝ 1998 թվականի քրեական օրենսգրքը առանձնակի դաժանությունը դասում է հանցագործությունը որակյալ դարձնող հանգամանքների շարքին (117-րդ հոդված, 4-րդ կետ):

Բելառուսի՝ 1999 թվականի քրեական օրենսգրքը սպանությունը առանձին դաժանությամբ կատարելը սահմանել է որպես հանցագործությունը որակյալ դարձնող հանգամանք (139-րդ հոդված 2-րդ մաս, 6-րդ կետ) և այլն:

Այսպիսով, վերլուծելով առանձին դաժանությամբ կատարված սպանությունների օրենսդրական ամրագրումները պատմական զարգացման ընթացքում, ուսումնասիրելով դաժանության դրսևորումները մարդկության պատմության ընթացքում, կարելի է հանգել մի պարզ ձևակերպման, այն է՝ դաժանությունը որպես վարքագծի տեսակ, հատուկ է միայն մարդուն, որը ցավոք սրտի, պատմական զարգացման շատ մեծ ժամանակահատվածում

27. Загородников Н. И. Преступления против жизни, М., 1961, с. 175.

28. Анимянц М. К. Ответственность за преступления против жизни, М., 1964, с. 57.

գրեթե բարձրացվել և հասցվել է օրենքի աստիճանի, որն իր արտացոլումն է գտել և դրսևորվել կատարված հանցագործությունների համար նախատեսվող պատժամիջոցների տեսակներում, այնպես էլ որպես առանձին վերցրած դատավարության տարր: Դաժանությունը մշտապես դրսևորվել է միայն դիտավորյալ գործողություններով: Անզգույշ դաժա-

նություն չի լինում: Դաժանությունը չի կարող նույնացվել ագրեսիվության հետ: Ինչպես նկատել է պրոֆեսոր Յու. Մ. Անտոնյանը. «Շատ կենդանիներ ագրեսիվ են, և դրանով է պայմանավորված նրանց գոյությունը, բայց նրանք երբեք դաժան չեն»²⁹:

29. **Антонян Ю. М.**. Психология убийства. М., 1997. с. 11, Թամազյան Ա. Ա. Սպանությունների որակման հիմնախնդիրները, Երևան, 2011, էջ 130:

ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՅԱՆ,

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դասախոս, փաստաբան, ի.գ.թ., դոցենտ

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՕՐԵՆՍՊՐՈՒԹՅԱՆ

Ընտանիքում բռնությունը բռնության այն ձևերից է, որն առանձնանում է իր ուրույնությամբ, բռնարարի և բռնության ենթարկված անձի ազգակցական, արյունակցական կամ մերձավոր կապով, բռնության ենթարկված անձի հոգեբանական առանձնահատկություններով ու հետևանքների ծանրությամբ:

Բռնության շղթան ընտանիքում բռնության կարևոր առանձնահատկություններից մեկն է: Ընտանիքում բռնություն դրսևորելու վարքագիծը հաճախ ցուցաբերվում է երեք հստակ և կրկնվող փուլերով, որոնք, ներգրավված անհատների անձով պայմանավորված, տարբերվում են ն տևողությամբ, ն ինտենսիվությամբ:

Առաջին փուլը կոչվում է լարվածության աճի փուլ, որի ընթացքում բռնարարը կատարում է թեթև բռնարարքներ և խոսքային (վերբայ)բռնություններ առողջգործողություններ, իսկ անձը, վախից և լարվածությունից ճնշված լինելով, փորձում է լինել հնարավորինս հանգիստ և պասիվ՝ ավելի լուրջ բռնությունը կանխելու նպատակով:

Երկրորդ փուլը լուրջ բռնության միջադեպն է: Առաջին փուլում ձևավորված լարվածությունը դառնում է անտանելի, ինչի արդյունքում լուրջ բռնությունը դառնում է անխուսափելի:

Երրորդ փուլը բնութագրվում է բռնարարի զղջմամբ և սիրալիր վարքագծով: Այդ ժամանակահատվածում բռնարարի կողմից հաճախ ներում հայցելը և նվիրվածության վերաբերյալ հայտարարությունները զուգակցվում են մասնագետի օգնությանը դիմելու, խմելը դադարեցնելու և հետագա բռնությունից ձեռնպահ մնալու խոստումներով¹:

Սակայն, հաճախ այդ շղթան կրկնվում է, երբեմն ստանալով առավել դաժան դրսևորումներ:

Իհարկե, ցանկացած բռնություն, ներառյալ՝ ընտանիքում բռնությունը, հանդիսանում է սոցիալական երևույթ, ինչից ելնելով առանձնացնում են դրա հետևյալ հատկանիշները՝

- բռնությունը գոյություն ունի և դրսևորվում է որպես սոցիալական սուբյեկտների փոխազդեցություն, հարաբերություն, բռնության սուբյեկտներ և օբյեկտներ կարող են հանդիսանալ սոցիալական խմբերը, դասերը, պետությունները,

- բռնությունը բնութագրվում է որոշակի քանակական, զուտ արտաքին դրսևորումներով և որակական, հիմնական բնութագրերով,

- արտաքին կողմից բռնությունը հանդիսանում է մի սուբյեկտի ներգործությունը մյուսի վրա, այն հանդիսանում է ուժի գործադրում, սակայն ուժի գործադրումը համարվում է բռնություն միայն այն դեպքում, երբ ուրիշի վրա ներգործությունը կատարվում է վերջինիս կամքին հակառակ կամ առանց նրա ցանկությունը հաշվի առնելու կամ բռնության օբյեկտի կամքն ու ցանկությունն ընդհանրապես անտեսվում են, ժխտվում են, և նման պարագայում բռնարարի շահերը բավարարվում են ուրիշի շահերի հաշվին,

- ուժը կիրառվում է ոչ միայն կամքին և ցանկությանը հակառակ, այլև՝ օրենքին հակառակ,

- բռնությունը՝ որպես հարկադրանքի ձև, չի նշանակում միայն ինտենսիվության առավել բարձր աստիճան՝ ինչպես նյութական ուժ, այնպես էլ հարկադրանքի այլ միջոցներ կիրառելիս: Բռնությունը կարող է կատարել նաև

1. Բռնության ցիկլը մշակել է 1979թ.-ին Լինոր է. Ուոքերը՝ բռնություն պարունակող հարաբերություններում դրսևորվող վարքի մոդելները բացատրելու նպատակով:

որպես բռնության օբյեկտին ուղղակիորեն ճնշելու կամ ոչնչացնելու գործառույթ²:

Հարկ է նշել, որ բռնության միասնական հասկացություն գոյություն չունի, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշման համաձայն՝ բռնությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, դիտավորությամբ, անձի կամ քին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը գրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք³:

Ընտանիքում բռնությունը ժամանակակից հասարակության բաղկացուցիչ մասն է, ու հատուկ է բոլոր պետություններին առանց բացառության և պետությունն է որոշում այն միջոցներն ու եղանակները, այդ թվում՝ քրեաիրավական պայքարի, որոնք կլինեն արդյունավետ ու կսահմանվեն օրենսդրությամբ:

Ընտանիքում բռնությունը ՀՀ-ում չի հանդիսանում առանձին հանցագործություն և միայն դրա առանձին դրսևորումներն են քրեորեն պատժելի, չնայած որոշ դրսևորումներ էլ հանրորեն վտանգավոր հետևանքների նվազ կարևորության պատճառով հանցագործություն առհասարակ չեն համարվում:

2017 թվականի դեկտեմբերի 13-ին Հայաստանում ընդունվեց «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը, որի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընտանիքում բռնության տեսակներն են՝

1) ֆիզիկական բռնություն՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ծեծը և այլ բռնի գործողությունները, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի գրկելը, դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը:

2) սեռական բռնություն՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության

դեմ ուղղված հանցագործությունները:

3) հոգեբանական բռնություն՝ դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին, արժանապատվության պարբերական նվաստացումը, սոցիալական ծայրահեղ մեկուսացումը, հղիության արհեստական ընդհատման հարկադրանքը:

4) տնտեսական բռնություն՝ անձին հարկադրված նյութական կախվածություն ստեղծելու կամ իշխելու նպատակով նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք) գրկելը, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը:

5) անտեսում՝ ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն), իսկ չափահաս աշխատունակ զավակների կողմից իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարելը, եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչը կամ չափահաս աշխատունակ զավակները տիրապետում են պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են:

Վերը նշված ձևակերպումներն ու սահմանումները բովանդակում են վիճահարույց ձևակերպումներ և մասնակի են ներկայացնում

2. Бужор В. Г. Криминологический анализ и предупреждение тяжкой насильственной групповой преступности: Дис. канд. юрид. наук. М., 1992, с. 23-24.

3. ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ.-ի նոյեմբերի 1-ի Ա. և Ծ. Սահակյանների վերաբերյալ թիվ ԱՐԴ/0176/01/11 քրեական գործով որոշում:

ընտանիքում բռնությունն ընդանրապես՝ երբեմն որոշ դրսևորումներ առհասարակ չդիտարկելով որպես այդպիսին:

Ֆիզիկական բռնություն. Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեն ֆիզիկական բռնության տարբեր բնորոշումներ: Հեղինակների մի խումբ, այդ թվում՝ Ի. Գ. Ֆիլանովսկին, ֆիզիկական բռնության ներքո հասկանում են «տուժողի նկատմամբ ֆիզիկական ուժ կիրառելը»⁴: Սակայն այս ձևակերպմամբ դժվար է տարբերել հանցավոր բռնությունը ոչ հանցավոր՝ իրավաչափ բռնությունից, երբ ֆիզիկական ուժը կիրառվում է հանցագործին բռնելիս, ծայրահեղ անհրաժեշտության և այլ դեպքերում:

Հեղինակների մեկ այլ խումբ, ինչպես, օրինակ, Ա. Ա. Պիոնտովսկին, Վ. Դ. Մենշագինը, ֆիզիկական բռնություն են համարում «ցանկացած ազդեցություն տուժողի մարմնական անձեռնմխելիության վրա»⁵: Նման մոտեցման պարագայում ֆիզիկական բռնության արտաքին կողմը բնորոշվում է որպես ֆիզիկական բռնության հետևանքով տուժողի մարմնի վրա ազդեցություն: Սակայն հարկ է նկատել, որ մարմնական անձեռնմխելիության վրա ազդեցությունը կարող է լինել քրեորեն պատժելի արարք և միևնույն ժամանակ չկրել ֆիզիկական բռնության բնույթ: Օրինակ՝ ֆիզիկական բռնություն չի համարվում կամավոր սեռական ակտի միջոցով ուրիշին վեներական հիվանդությամբ վարակելը:

Մասնագիտական գրականության մեջ կան ֆիզիկական բռնության այնպիսի սահմանումներ, որոնցում բռնության պարտադիր հատկանիշ են հանդիսանում դրա հետևանքները: Այսպես, ըստ Ա. Կ. Շեդրինի՝ ֆիզիկական բռնությունը մարմնի վրա ուղղակի ազդեցությունն է և կարող է դրսևորվել տարբեր ձևերով՝ հասարակ ծեծից մինչև ծանր մարմնական վնասվածքներ պատճառելը և կյանքից զրկելը⁶: Համանման են բնորոշել ֆիզիկական բռնու-

թյունը նաև Յու. Ա. Վորոնինը և Պ. Ֆ. Տելնովը՝ բնորոշելով ֆիզիկական բռնությունը «տուժողի վրա ազդեցություն, որը կարող է արտահայտվել տուժողին հարված կամ հարվածներ հասցնելով, մարմնական վնասվածքներ պատճառելով (ինչպես թեթև, այնպես էլ ծանր), խոշտանգումներով և տանջանքներով, ինչպես նաև մահ պատճառելով»⁷:

Ֆիզիկական բռնության վերոնշյալ սահմանումները քննադատության են արժանացել, քանի որ դրանցում հատուկ ուշադրության էին արժանանում միայն ֆիզիկական բռնության արտաքին կողմը, արարքի կատարման եղանակը, հետևանքները, և չէին մատնանշվում արարքի հանրային վտանգավորությունը, հակահրավակականությունը, արարքի նկատմամբ հանցավորի և տուժողի կամային վերաբերմունքը:

Վ. Ի. Սիմոնովը և Վ. Գ. Շումիլսինը բնորոշում են ֆիզիկական բռնությունը որպես հանցավոր բռնության տարատեսակ՝ ֆիզիկական ուժի կիրառմամբ գիտակցված հակահրավակական ազդեցություն՝ ուրիշի մարմնական անձեռնմխելիությունը խախտելու նպատակով՝ առանց վերջինիս կամքը հաշվի առնելու կամ նրա կամքին հակառակ⁸:

Այսպիսով, հեղինակներն առանձնացնում են ֆիզիկական բռնությունը բնութագրող հատկանիշները՝ արարքի գիտակցված բնույթը, հակահրավակականությունը, արարքն ուրիշի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարելը, ուրիշի մարմնական անձեռնմխելիությունը խախտելու նպատակը:

Հիմնվելով ֆիզիկական բռնության վերոնշյալ սահմանումների վրա, ինչպես նաև հաշվի առնելով, որ ընտանիքում բռնության ոչ բոլոր դրսևորումներն են քրեորեն պատժելի (օրինակ՝ ապտակը), ստորև առաջարկվելու է ընտանիքում ֆիզիկական բռնության այլ սահմանում:

Ֆիզիկական բռնության ներգործության առարկան են ուրիշի օրգանիզմը (անատոմիա-

4. Советское уголовное право. Особенная часть. М., 1962, с. 206.

5. Пионтовский А. А., Меньшагин В. Д. Курс советского уголовного права. Особенная часть. Т.1., М., 1995, с. 722.

6. Щедрина А. К. Ответственность за разбой по Указу Президиума Верховного Совета СССР от 4 июня 1947г. "Об усилении охраны личной собственности граждан"// Вопросы советского уголовного права и процесса: Ученые записки Свердловского юридического института. Свердловск, 1958, Т.VI, с. 24.

7. Советское уголовное право. Особенная часть. М., 1983, էջեր 97-98; Советское уголовное право. Особенная часть. М., 1988, с. 115.

8. Симонов В. И., Шумихин В. Г. Квалификация насильственных посягательств на собственность: Учебное пособие. М., 1993, с. 19.

կան ամբողջականությունը) կամ ֆիզիկական ազատությունը:

Ինչպես երևում է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածից՝ ֆիզիկական բռնությունը փոխկապակցված է ՀՀ քրեական օրենսգրքի հետ և որպես այդպիսին են համարվում՝

- ծեծը և այլ բռնի գործողությունները,
- դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը (ծանր, միջին ծանրության և թեթև),
- ազատությունից ապօրինի զրկելը,
- դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը:

Հետևաբար, ընտանիքում ֆիզիկական բռնություն չի կարող համարվել անձի օրգանիզմի (անատոմիական ամբողջականության) կամ ֆիզիկական ազատության վրա այնպիսի ազդեցությունը, որը ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված չէ: Այսինքն, մեկ ապտակը⁹, ֆիզիկական ոչ ուժեղ ցավ պատճառելը և այլն:

Նաև օրենքով տրված սահմանման մեջ նշված չէ սպանությունը, ինքնասպանության հասցնելը կամ առհասարակ ֆիզիկական բռնության որևէ տեսակ, որը կարող է հանգեցնի մահվան:

Ուստի, ստացվում է, որ նման սահմանումը մասնակի է ներառում ընտանիքում ֆիզիկական բռնության ձևերը, ինչն առաջացնում է գործնական խնդիրներ այս կամ այն արարքը որպես ֆիզիկական բռնություն համարելու գործընթացում:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընտանիքում ֆիզիկական բռնությունը սահմանել հետևյալ կերպ՝ *իշխանություն կամ վերահսկողություն հաստատելու նպատակով ընտանիքի անդամի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք, որի արդյունքում նա զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս*

է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ կամ ֆիզիկական տառապանք:

Սեռական բռնություն. Սեռական բռնությունը հավաքական հասկացություն է և, որպես կանոն, այն իրականացվում է տուժողի նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն կիրառելու միջոցով: Օրինակ՝ ֆիզիկական ուժ գործադրելու սպառնալիքն արտահայտվում է նրանում, որ հանցավորը կնոջ կամքին հակառակ, նրա հետ սեռական հարաբերության մեջ է մտնում՝ նրա կամ այլ անձի նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով տուժողի դիմադրությունը հաղթահարելով, կամ հանցավորն ուղղակիորեն ֆիզիկական ազդեցություն գործելով տուժողի օրգանիզմի վրա՝ նրա հետ սեռական հարաբերության մեջ է մտնում: Այսինքն՝ սպառնալիքի գործադրման կամ ֆիզիկական ուժի կիրառման հետևանքով տուժողը հայտնվում է վախի, տագնապի կամ անելանելի վիճակում, ստիպված է լինում չդիմադրել հանցավորին կամ քարացած լռելյայն համաձայնվել և կատարել սեռական հարաբերության մեջ մտնելու պահանջը:

Սեռական բռնությունը հաճախ նույնացվում է սեռական հանցագործությունների հետ՝ անգամ մասնագիտական գրականությունում: Այսպես, Յա. Մ. Յակովլևը սեռական բռնությունները (հանցագործությունները) բնորոշել է որպես քրեական օրենքով նախատեսված հանրության համար վտանգավոր այնպիսի գործողություններ, որոնք տոնձգում են հասարակության մեջ ձևավորված սեռական կենսակերպին բնորոշ սեռական հարաբերություններին և հանդիսանում են սուբյեկտի կամ այլ անձի կողմից սեռական պահանջները բավարարելու նպատակով դիտավորությամբ կատարված սեքսուալ բնույթի գործողություններ՝ խախտելով տուժողի սեռական իրավունքները կամ նման կենսակերպի համար տարբեր սեռերի անձանց միջև ձևավորված բնական սեռական հարաբերությունները¹⁰:

Սեռական հանցագործությունները հա-

9. ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ.-ի նոյեմբերի 1-ի Ա. և Ծ. Սահակյանների վերաբերյալ թիվ ԱՐԴ/0176/01/11 քրեական գործով որոշման համաձայն մեկ ապտակը չի համարվում ծեծ, եթե ինքնին չի հանգեցրել առողջությանը որևէ ծանրության վնաս պատճառելուն, ինչն արդեն որակվում է դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու համապատասխան հոդվածով:

10. Яковлев Я. М. Половые преступления. Душанбе, 1969, с. 64.

մանման է բնորոշել նաև Բ.Վ. Դանիելբեկը՝ որպես քրեական օրենսգրքով նախատեսված հանրորեն վտանգավոր արարք, որն ունի սեքսուալ բնույթ և որը ոտնձգում է հասարակության մեջ ձևավորված սեռական հարաբերությունների բնականոն կենսակերպին՝ կատարվելով հանցավորի կամ այլ անձանց պահանջները բավարարելու նպատակով¹¹:

Ա. Ն. Իգնատովը, քննադատելով սեռական հանցագործությունների նման սահմանումները, նշում է, որ դրանցում, առաջին հերթին, սեռական բարոյականությունից անջատված է արարքի բնութագրությունը, որը հանդիսանում է սեռական հարաբերությունների հիմնական կարգավորիչ, և երկրորդը՝ բացառվում է ոչ սեքսուալ շարժառիթով կատարված հանրության համար վտանգավոր արարքների ճանաչումը որպես սեռական հանցագործություն¹²: Այդ թերություններին կարելի է ավելացնել նաև հետևյալները. այն դիտարկում է սեռական հանցագործությունները միայն տարբեր սեռերի անձանց միջև ձևավորված բնական սեռական հարաբերությունների առնչությամբ, այն դեպքում, երբ դրանք կարող են իրականացվել նաև նույն սեռի անձանց միջև կամ իրականացվի ոչ միայն բնական սեռական հարաբերությունների առնչությամբ: Ավելին՝ այս բնությունը ոտնձգում է ոչ միայն սեռական իրավունքների, այլ հիմնականում սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ, իսկ լրացուցիչ՝ պատվի, արժանապատվության, առողջության և այլ արժեքների կամ բարիքների դեմ:

Ընտանիքում երեխաների նկատմամբ սեռական բռնություն կիրառելու դեպքում արարքը ոչ միշտ է կատարվում տուժողի կամքին հակառակ՝ ելնելով երեխայի տարիքային և հասունության աստիճանի առանձնահատկություններից: Բռնարարն իր նպատակին հասնում է հիմնականում հոգեբանական բռնություն կիրառելու միջոցով կամ համոզելով, հետաքրքրություն առաջացնելով կամ այլ եղանակով երեխային շահագրգռելով: Ֆիզիկական ուժ կիրառելուց խուսափելը շատ դեպքերում պայ-

մանավորված է բռնարարի՝ երեխայի մարմնի վրա հետքեր թողնելու հետևանքով բացահայտվելու մտավախությամբ, ինչպես նաև հոգեբանական ներազդեցության մեթոդների՝ երեխայի առնչությամբ առավել գործուն լինելու պայմանով:

Ընտանիքում երեխաների նկատմամբ սեռական բռնության տեսակները, մասնավորապես՝ ինցեստը, մեծ դժվարությամբ են հայտնաբերվում, քանի որ այն իր բնույթով հակված է մնալու որպես խիստ պաշտպանվող ընտանեկան գաղտնիք: Դեպի արյունապղծումը տանող ներընտանեկան հանգամանքները ներառում են ծնողների սեռական անհամապատասխանության առկայությունը, ընտանիքից դուրս զուգընկեր գտնելու հոր ցանկության բացակայությունը, զոհի՝ լքված լինելուն և ընտանիքի հնարավոր փլուզմանը վերաբերող վախերը, ավելի հաճախ մոր անգիտակցական թողտվությունը, որը նախադրյալներ է ստեղծում հոր հետ հարաբերություններում երեխայի սեռական դերի համար¹³:

Ինչպես երևում է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածից՝ սեռական բռնությունը ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները:

Այսինքն, ընտանիքում սեռական բռնությունը նույնացվում է սեռական հանցագործությունների հետ և հանդիսանում է ՀՀ քրեական օրենսգրքի 138-142-րդ հոդվածներում նախատեսված արարքների համախումբ, որն իրականացվում է ընտանիքի անդամի կողմից ընտանիքի անդամի նկատմամբ:

Սեռական ազատությունը 16 տարին լրացած հոգեպես առողջ մարդու իրավունքն է՝ ինքնուրույն, առանց որևէ հարկադրանքի որոշելու, թե ում հետ և ինչ ձևով բավարարել իր սեռական պահանջները¹⁴:

Սեռական անձեռնմխելիությունը բարո-

11. Даниэльбек Б. В. Половые извращения и уголовная ответственность. Волгоград, 1972, с. 26.

12. Игнатов А.Н. Квалификация половых преступлений. М., 1974, с. 6.

13. Հարությունյան Կ. Երեխաների չարաշահման և անտեսման կանխարգելման ձեռնարկ: Երևան, 2006, էջ 39:

14. Кудрявцев В. Н., Лунеев В. В. О криминологической классификации преступлений// Государство и право, 2005, N6, с. 55.

յաիրավական արգելք է սեռական շփման մեջ մտնել այնպիսի անձանց հետ, ովքեր օժտված չեն սեռական ազատությամբ, քանի որ ունակ չեն հասկանալու իրենց նկատմամբ կատարվող սեքսուալ բնույթի գործողությունների նշանակությունը և հետևանքները կամ դեկավարելու իրենց գործողությունները սեռական շփման ոլորտում¹⁵: ՀՀ-ում սեռական անձեռնմխելիությամբ օժտված են 16 տարին չլրացած անձինք:

Վերլուծելով վերը նշվածն ակամա ստացվում է, որ 16 տարին լրացած երեխան չի գտնվում լիարժեք պաշտպանության տակ ընտանիքում սեռական բռնությունից և նրա նկատմամբ սեռական ոտնձգությունը կհամարվի սեռական հանցագործություն և հետևաբար նաև ընտանիքում սեռական բռնություն, եթե այն իրականացվի ֆիզիկական բռնության, դրա սպառնալիքի կամ ֆիզիկական կամ հոգեբանական անօգնական վիճակն օգտագործելու դեպքում: Բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքի 138-142-րդ հոդվածները չեն ներառում սեռական ոտնձգությունների այն շրջանակը, որը կարող է համարվել սեռական բռնություն, ինչից ելնելով փաստվում է, որ ընտանիքում սեռական բռնություններն օրենքում սպառնիչ չեն ներկայացվել:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընտանիքում սեռական բռնությունը սահմանել հետևյալ կերպ՝ ցանկացած դիտավորյալ արարք ընտանիքի *անդամին՝ նրա կամքին հակառակ, առանց նրա կամքը հաշվի առնելու կամ անօգնական կամ կախյալ վիճակն օգտագործելով սեռական հարաբերության կամ սեռական բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելը, սեռական հարաբերությունը կամ սեռական բնույթի այլ գործողությունները*:

Հոգեբանական բռնություն. Հոգեբանական բռնության վերաբերյալ գոյություն ունեցող

հետազոտություններում հոգեբանական բռնության հիմնական ձև է համարվում սպառնալիքը¹⁶: Քրեական իրավունքում հոգեբանական բռնությունը հանդես է գալիս տարբեր բովանդակություններով: Որոշ հեղինակների կարծիքով սպառնալիքը հարկադրանք է¹⁷, ոմանց կարծիքով էլ՝ սպառնալիքը վախեցնելն է¹⁸ բնորոշելով հոգեբանական բռնությունը (ֆիզիկական ուժի կիրառման սպառնալիք) որպես հակաիրավական ներգործություն, որն ուղղված է ուրիշի հոգեկանին՝ վերջինիս դիմադրությունը ճնշելու և հանցավորին ենթարկելու նպատակով՝ ֆիզիկական ուժի գործադրումով վախեցնելու միջոցով¹⁹: Շրջանառվում են նաև այն տեսակետները, որ սպառնալիքը մարդու մեջ տազնապի զգացում արթնացնելն է²⁰ կամ հոգեկան ներգործություն²¹:

Ընդհանուր առմամբ, սպառնալիքի ներքո հասկացվում է ազդեցություն ուրիշի հոգեկանի վրա, և սպառնալիքի էությունը կայանում է նրա հարազատների նկատմամբ անմիջապես կամ ապագայում անցանկալի գործողություններ կատարելու մասին տեղեկություններ հայտնելու միջոցով տուժողի հոգեկան գործունեության վրա ազդելու, նրանում վախի զգացում արթնացնելու և նրան որևէ գործողություն կատարելուն կամ չկատարելուն հարկադրելու մեջ:

Համաձայնելով քրեական իրավունքի տեսության մեջ գոյություն ունեցող այն կարծիքին, որ սպառնալիքը հոգեբանական բռնության տեսակ է՝ հատկանշական է, որ հոգեբանական բռնությունը վսաս պատճառելու սպառնալիքի միջոցով ուրիշի հոգեկանի վրա ազդեցությունն է՝ տուժողի կամքը ճնշելու նպատակով և կատարվում է հանցավոր արդյունքի հասնելու համար: Սպառնալիք կարող են լինել ֆիզիկական ուժի գործադրման սպառնալիքը (սպանություն, առողջությանը վսաս պատճա-

15. **Իսրաելյան Գ. Վ.** Սեռական հանցագործությունները և դրանց կանխումը ՀՀ-ում: Մենագրություն: Երևան, 2012, էջ 9-10:

16. **Գալխան Լ. Դ.** Насилие при грабеже, разбое и вымогательстве// Советская юстиция, 1969, №2, էջ 22; **Կոստրով Գ. Կ.** Психическое насилие при разбое и грабеже// Советская юстиция, 1970, №11, с. 9.

17. **Գրիշկո Ա. Ե., Գրիշկո Ե. Ա., Սուրով Ի. Վ.** Уголовное право. Общая часть: Учебное пособие/ Под ред. Н. И. Ветрова. М., 2001, с. 155.

18. **Գալխան Լ. Դ.** Борьба с насильственными посягательствами. М., Юридическая литература, 1969, с. 31.

19. **Տիմոնով Ե. Ի., Շումիլին Ե. Գ.** Квалификация насильственных посягательств на собственность: Учебное пособие. М., 1993. с. 23.

20. Научный комментарий УК РСФСР. Свердловск, 1964, с. 402.

21. **Տերդյուկ Լ. Վ.** Психическое насилие как предмет уголовно-правовой оценки. Дис. канд. юрид. наук. М., 1979, с. 9.

եղը, ազատությունից զրկելը, ծեծելը, բռնաբարությունը և այլն), գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը կամ նշավակող տեղեկություններ տարածելու սպառնալիքը, որոնք կարող են տուժողի իրավունքներին և օրինական շահերին էական վնաս պատճառել²²:

Ֆիզիկական բռնություն գործադրելու սպառնալիքի դեպքում, որպես կանոն, մեղավորը մտադրություն է հայտնում ուղղակիորեն վնաս պատճառել այն անձին, ում հասցեագրված է սպառնալիքը: Սակայն, ինչպես իրավացիորեն նշում է Ն.Ի. Պանովը, ոչ պակաս հանրային վտանգավորություն է ներկայացնում տուժողի հարազատներին և նույնիսկ դեպքի վայրում հայտնված անձանց նկատմամբ ֆիզիկական բռնություն կիրառելու սպառնալիքը²³:

Հարկ է նշել, որ սպառնալիքը պետք է լինի իրական, որի գնահատումն իրականացվում է օբյեկտիվ ու սուբյեկտիվ հատկանիշներով:

Սպառնալիքն իրական է համարվում այն դեպքում, երբ տուժողը բավարար հիմքեր է ունենում վախենալու դրա իրականացումից: Այլ կերպ ասած՝ տուժողը պետք է կարծի, որ սպառնալիքի իրականացումը հնարավոր է: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև սպառնալիքի իրական լինելը հավաստելու համար տուժողի սուբյեկտիվ ընկալման գնահատումը կարևոր է, սակայն արարքի որակման համար այն ածանցյալ նշանակություն ունի, առաջնային օբյեկտիվ իրադրության գնահատումն է: Հնարավոր են դեպքեր, երբ օբյեկտիվ իրադրությունը հիմք չի տալիս սպառնալիքն իրական գնահատելու համար, սակայն անձն իր հոգեկան լարված վիճակի, հոգեկան առանձնահատկությունների կամ այլ պատճառներով իրականությունը խեղաթյուրված է ընկալում՝ կարծելով, թե սպառնալիքն իրական է: Օբյեկտիվ իրադրության գնահատումը ենթադրում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ,

ինչպիսիք են սպառնալիքի բովանդակությունը, սպառնալիք տալու եղանակը, դեպքի վայրը, ժամանակը, հանցավորի և տուժողի միջև հարաբերությունների բնույթը, հանցավորի անձը և այլն: Հետևաբար սպառնալիքի իրական լինելու հարցը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է լուծվի՝ գործի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ տուժողի սուբյեկտիվ ընկալումը հաշվի առնելով²⁴:

Հոգեբանական բռնության ներգործության առարկան այլ անձի հոգեկանն է:

Հոգեբանական բռնության հիմնական դրսևորումներն են՝ խոսքային վիրավորանքներ, ստորացումներ, զրկանքների մատնում, զրպարտություն, անձին

Կրկնվող հոգեբանական բռնությունը հանգեցնում է նշանակալի հոգեկան տառապանքների, հետմասսավածքային սթրեսի, դեպրեսիայի, որը վերափոխվում է վախի զգացման, հաճախ նաև ավելի լուրջ հետևանքների, որոնցից է ինքնասպանությունը: Մասնագետները, ովքեր աշխատում են բռնության ենթարկված անձանց հետ, կարծում են, որ հոգեբանական հետևանքներն ընտանիքում բռնության ենթարկվելու դեպքում ավելի լուրջ են, քան կողմնակի անձանց կողմից ագրեսիայի ենթարկվելու դեպքում:

Ընտանիքի չափահաս անդամների նկատմամբ վերահսկում սահմանելու համար երեխաների օգտագործումը ևս հոգեբանական բռնության ձևերից է, այն կարող է արտահայտվել հետևյալ կերպ.

- ֆիզիկական կամ սեռական բռնություն երեխաների նկատմամբ,
- երեխաներին օգտագործելը որպես պատանդներ,
- երեխաներին մեծահասակ զոհի նկատմամբ ֆիզիկական ու հոգեբանական բռնարարքներ կատարելուն պարտադրելը,
- պայքար ծնողական իրավունքների համար երեխաների նկատմամբ մանիպուլյացիաների և սպառնալիքների միջոցով, երե-

22. Մանրամասն տե՛ս Հունանյան Դ. Բռնությունը քրեական իրավունքի մեջ (իրավահամեմատական վերլուծություն ՀՀ և ՌԴ օրինակով) իրավաբանական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2010:

23. **Панов Н. И.** Квалификация насильственных преступлений. Харьков, 1986, с. 32-33.

24. ՀՀ վճռաբեկ դատարանի Վ. Խաչատրյանի վերաբերյալ 2012թ.-ի հունիսի 8-ի թիվ ԿԴ1/0025/01/112012 քրեական գործով որոշման 12-րդ կետ:

խաների հետ տեսակցության օգտագործումը զոհին վերահսկելու համար, մեղադրանքներ²⁵:

Այն երեխաները, որոնք ներկա են լինում ընտանիքում բռնության ցանկացած դրսևորման, համարվում են հոգեբանական բռնության ենթարկված անձ ու ենթակա են այնպիսի վարքային ու հուզական խնդիրներ ձեռք բերելու ռիսկի, ինչպիսիք են տազնապայնությունը, դեպրեսիան, վատ առաջադիմությունը դպրոցում, ցածր ինքնագնահատականը, գիշերային մղձավանջները, ֆիզիկական թուլությունը: Այդպիսի երեխաները մանկության և դեռահասության տարիքում հակված են ագրեսիայի:

Ինչպես երևում է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածից՝ հոգեբանական բռնությունը դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին, արժանապատվության պարբերական նվաստացումը, սոցիալական ծայրահեղ մեկուսացումը, հղիության արհեստական ընդհատման հարկադրանքը:

Այս սահմանումից բխում է, որ ընտանիքում հոգեբանական բռնությունը դրսևորվում է հետևյալ դիտավորյալ արարքներով՝

- հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը,
- պարբերաբար այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգությանը սպառնացող

վտանգի մասին,

- արժանապատվության պարբերական նվաստացումը,
- սոցիալական ծայրահեղ մեկուսացումը,
- հղիության արհեստական ընդհատման հարկադրանքը:

Վերը նշված 5 դրսևորումներից առաջին երկուսն արդեն վերլուծվել են վերը նշված տեսական մեկնաբանության ժամանակ:

Արարքը որպես արժանապատվության պարբերական նվաստացում համարելու համար պետք է պարզել արժանապատվության բովանդակությունը: Մարդու արժանապատվությունն անմիջականորեն բխում է նրա էությունից: Մարդկային արժանապատվությունը, ինչպես և կյանքը, ընդունված չէ կախման մեջ դնել անձի հասարակական կարևորությունից, տարիքից, սեռից, համոզմունքներից և այլն²⁶:

Մարդկային գիտակցությունն ունակ է արտացոլելու ոչ միայն օբյեկտիվ աշխարհը, այլև ինքն իրեն, իր տեղը և կարևորությունը այդ աշխարհում: Արժանապատվության գիտակցումը հանդիսանում է անհատի ինքնագիտակցման կարևորագույն արդյունքը²⁷:

Արժանապատվության նվաստացում կարող է իրականացվել խոսքի, գործողության, գործունեության, ժեստերի միջոցով կամ այլ եղանակով: Հոգեբանական բռնության այս դրսևորման դեպքում նվաստացումը պետք է կրի պարբերական բնույթ:

Սոցիալական ծայրահեղ մեկուսացումը հանդիսանում է անձի շփման սոցիալական միջավայրի կտրուկ փոփոխություն՝ ընտանիքի անդամին արգելելով շփվել իր մերձավորների, ազգականների հետ, սահմանափակելով ազատ տեղաշարժվելը կամ այն իրականացնելով ֆիզիկական կամ հոգեբանական վերահսկողությամբ:

Ծայրահեղ բառը նշանակում է չափազանց, սաստիկ, չափից դուրս, առավել արմատական, խիստ վճռական²⁸: Այսինքն, մեկուսա-

25. Ընտանեկան բռնություն. Ձեռնարկ ոստիկանների համար: Երևան, 2010, էջ 15:

26. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ/ ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010, էջ 165:

27. **Белявский А. В. Придворов Н. А.** Охрана чести и достоинства личности в СССР. М., Юридическая литература, 1971, с. 8.

28. **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան. Հատոր 1. Երևան, Հայաստանի հրատարակչություն, 1976, էջ 632:

ցումը պետք է լինի առավել արմատական, չափազանց խիստ և պայմանավորված լինի վերահսկողության ցանկությամբ:

Հղիության արհեստական ընդհատման հարկադրելը ՀՀ-ում դեռ քրեորեն պատժելի չէ, սակայն ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծն այն նախատեսել է 174-րդ հոդվածով²⁹:

Հոգեբանական բռնության վերը նշված դրսևորումները հանդիսանում են հոգեբանական բռնությունը մասնակի բովանդակող և հնարավորություն չեն տալիս իրավակիրառողին գործնականում հանդիպող բռնության բազմաթիվ դեպքեր որակել որպես այդպիսին:

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է ընտանիքում հոգեբանական բռնությունը սահմանել հետևյալ կերպ՝ *արտաքին միջավայրի հոգեկան գործոնների կիրառմամբ կատարված ցանկացած դիտարկողյալ արարք՝ ուղղված ընտանիքի անդամի հոգեկանի վրա ներգործելուն՝ վերջինիս կամքը ճնշելու, նրան բռնարարի կամ այլ անձի կամքին ենթարկելու նպատակով, սոցիալապես մեկուսացնելու, կախվածություն առաջացնելու կամ հոգեբանական այլ ծայրահեղ պայմաններ ստեղծելու համար:*

Տնտեսական բռնություն. Տնտեսական բռնությունն ընտանիքի գերիշխող անդամի կողմից ընտանեկան բյուջեի միջոցները կառավարելն ու վերահսկելն է³⁰:

Տնտեսական բռնությունը բնութագրվում է այնպիսի գործողություններով, ինչպիսիք են ընտանիքի անդամից ֆինանսական միջոցները խլելը, վերջինիս բանկային քարտերը պահելը, անհրաժեշտ ֆինանսներ տրամադրելու մերժումը, առողջապահական և այլ ծառայություններից ու խնամքից զրկելը, մշտական վերահսկողությունը, աշխատելու հնարավորությունից զրկելը:

Տնտեսական բռնության պարագայում ընտանիքի անդամներից մեկն արգելում է մյուսին միջոցներ ունենալ, աշխատանքային գործունեություն ծավալել և իր հայեցողությամբ տնօրինել վաստակած դրամը: Ընտանիքի անդամը հաճախ ստիպված է ընտանիքի այլ անդամից խնդրել դրամ և հաշվետու լինել

կատարած ծախսերի համար: Տնտեսական կախվածությունն առավել վտանգավոր է կանանց գործազրկության բարձր մակարդակի պայմաններում, այն կնոջն ավելի խոցելի է դարձնում և մեծացնում ընտանիքում բռնության մյուս ձևերի երևան գալու հավանականությունը: Մյուս կողմից՝ նույնիսկ աշխատող և ամուսնուց ավելի շատ վաստակող կանայք նույնպես բռնության զոհ են դառնում, օրինակ՝ երբ ամուսինը վերցնում է կնոջ ողջ աշխատավարձը:

Ինչպես երևում է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածից՝ տնտեսական բռնություն է անձին հարկադրված նյութական կախվածություն ստեղծելու կամ իշխելու նպատակով նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք) զրկելը, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը:

Այս սահմանումից բխում է, որ ընտանիքում տնտեսական բռնությունը դրսևորվում է հետևյալ կերպ՝

- անձին հարկադրված նյութական կախվածություն ստեղծելու կամ իշխելու նպատակով նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք) զրկելը,

- սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը,

- անձի կրթություն ստանալու իրավունքը սահմանափակելը.

- անձի աշխատանքի ընտրության ազատության իրավունքը սահմանափակելը:

Վերը նշված ձևակերպումների թերու-

29. Այդ հոդվածի համաձայն՝ կնոջն իր հղիությունն արհեստական եղանակով ընդհատելուն կամ անձին ամլացմանը հարկադրելը բռնություն գործադրելով, դա գործադրելու սպառնալիքով, շանտաժով կամ հարկադրանքի այլ եղանակով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով:

30. Малкина-Пых И.Г. Психология поведения жертвы. М., Эксмо, 2006, с. 44.

թյունները հանգեցնում են տնտեսական բռնության լայն մեկնաբանության:

Տնտեսական բռնության 4 դրսևորումներից առաջինն իր մեջ բովանդակում է անտեսման հատկանիշներ, ինչը գործնականում առաջացնում է խառնաշփոթ, և տարբերակման միակ հատկանիշն ընտանիքի անդամների շրջանակն է (ով է իրականացնում և ում նկատմամբ):

Սեփականությունը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու առանձնահատկությունները, առավել ևս ընդհանուր սեփականության վերաբերյալ, կարգավորված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Այդ կարգավորումների խախտմամբ՝ ընտանիքի անդամին պատկանող գույքի հետ վերջինիս կամքին հակառակ գործողություններ իրականացնելը համարվում է տնտեսական բռնություն, եթե բռնարարը նպատակ է հետապնդել դրանով սպառնալ, առաջացնել վախ, տագնապ և այլ նմանատիպ վիճակներ, քանի որ ինչպես հայտնի է ցանկացած բռնության օբյեկտ պետք է հանդիսանա անձը, այլ ոչ թե գույքը:

Անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը մեկնաբանելիս պետք է հասկանալ դրա իրականացման նպատակը, պայմանները և իրադրությունը՝ հաշվի առնելով սահմանափակումների իրականացման դիտավորության ուղղվածությունը, ստեղծված օբյեկտիվ իրականությունը և նման սահմանափակման հետևանքները: Ինքնին, որպես տնտեսական բռնություն պետք է համարվեն այդ իրավունքներից զրկելը կամ կամայական սահմանափակումները, քանի որ որոշ սահմանափակումներ կարող են պայմանավորված լինեն, օրինակ՝ երեխայի խնամքն իրականացնելու և այդ ընթացքում կրթության իրականացման անհնարինությունը (ժամանակավոր սահմանափակում), կամ ամուսիններին տարբեր քաղաքներում աշխատանքի առաջարկության դեպքում՝ ամուսիններից մեկի աշխատանքի ընտրության իրավունքը սահմանափակվում է, ելնելով մյուս ամուսնու աշխատանքի համար վարձատրության և համատեղ այլ քաղաք տեղափոխվելու կամ այլ նպաստավոր պայմաններ

հաշվի առնելով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընտանիքում տնտեսական բռնությունը սահմանել հետևյալ կերպ՝ *ընտանիքի անդամի կողմից սեփականության, ներառյալ՝ ընդհանուր սեփականության, իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, գույքը ոչնչացնելը կամ վնասելը, ինչպես նաև ընտանիքի անդամի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը կամ այդ իրավունքներից զրկելը:*

Անտեսում. Անտեսել նշանակում է որպես անուշադրության մատնել, հաշվի չառնել, նկատի չունենալ³¹:

Մասնագիտական գրականության մեջ անտեսումը նշվում է որպես երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքի ամենատարածված ձևերից մեկը, որն ուղեկցվում է երեխայի կարիքները չհոգալով, թերի խնամք կազմակերպելով, երեխայի կարիքներն անտեսելով և պահանջումները չբավարարելով, որն իրականացվում է ինչպես նյութական, այնպես էլ հոգեբանական և հոգևոր ոլորտներում: Պատմականորեն անտեսումը ոչ միշտ է դիտարկվել որպես բռնություն, սակայն այն հանդիսանում է այնպիսի բռնություն, որն իր անջնջելի հետքն է թողում երեխայի թե՛ ֆիզիկական, թե՛ մտավոր զարգացման վրա:

Սակայն, փաստ է, որ անտեսումը հնարավոր է իրականացնել նաև չափահաս անձանց նկատմամբ, առավել ևս, եթե նրանք անաշխատունակ են, կարիքավոր կամ զրկված են ինքնասպասարկման հնարավորությունից հիվանդության, հաշմանդամության, զարգացման հապաղման կամ այլ վիճակներից ելնելով:

Անտեսումն ուղեկցվում է անձի բազային իրավունքների ոտնահարմամբ, որի արդյունքում անձը, ով ինքնուրույն չունի հնարավորություն ապահովել իր կարիքների բավարարումը, հայտնվում է ծայրահեղ ծանր վիճակում: Անտեսումը կարող է վերածվել բռնության այլ տեսակների: Օրինակ, նորածին երեխայի մայրն անտեսում է երեխային, չի կերակրում

31. Աղայան Է. Արդի հայերենի բացատրական բառարան. Հատոր 1. Երևան, Հայաստանի հրատարակչություն, 1976, էջ 83:

նրան, և որոշակի պահից այն արդեն վերածվում է ֆիզիկական բռնության, քանի որ երեխան զգում է ֆիզիկական ցավ, այնուհետև առաջանում են ֆիզիկական հետևանքներ՝ հյուծվածություն, աղետամոքսային տրակտի ապաճում և վերջում՝ մահ: Կամ ինքնուրույն սպասարկման հնարավորությունից զրկված հաշմանդամություն ունեցող անձին պահում են սենյակում, որտեղից նա ինքնուրույն դուրս գալու հնարավորություն չունի ոչ միայն զբոսնելու, այլ անգամ կողքի սենյակից սնունդ, ջուր, առաջին անհրաժեշտության այլ առարկաներ վերցնելու նպատակով:

Անտեսումը հաճախ ուղեկցվում է նաև հոգեբանական և տնտեսական բռնությամբ, ինչը ձևավորում է բռնության ենթարկված անձի մոտ ծանր հոգեվիճակներ. դեպրեսիա, քարացում, անտարբերություն, ապաթիա և այլն:

Ինչպես երևում է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածից՝ անտեսումը ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն), իսկ չափահաս աշխատունակ զավակների կողմից իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարելը, եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչը կամ չափահաս աշխատունակ զավակները տիրապետում են պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են:

Այսինքն, գործող օրենսդրության համաձայն՝ անտեսումը հնարավոր է իրականացնել կամ երեխաների, կամ անաշխատունակ և կարիքավոր ծնողների նկատմամբ, իսկ բռնարարներն են կամ ծնողները (օրինական ներկայացուցիչները), կամ աշխատունակ չափահաս զավակները: Անտեսումը դրսևորվում է անձին կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշ-

կական օգնություն և սպասարկում, կրթություն) դիտավորությամբ չբավարարելով, եթե բռնարարը տիրապետում է պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են:

Ակնհայտ է, որ գործող օրենսդրությունը չի ներառում ընտանիքի բոլոր անտեսված անձանց և փաստացի ինքնասպասարկման հնարավորությունից զրկված հաշմանդամություն ունեցող անձինք «անտեսված են» օրենքով:

Հարկ է նշել, որ ընտանիքում բռնության տեսակները ներկայացնելիս հաշմանդամություն ունեցող անձանց առնչությամբ որևէ առանձնահատկություն առհասարակ նախատեսված չէ, այն դեպքում, երբ թե՛ հոգեբանական և տնտեսական բռնությունը, թե՛ անտեսումն ունենում են այնպիսի դրսևորումներ որոնք յուրահատուկ են միայն հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում, օրինակ՝ սայլակով տեղաշարժվող անձին զբոսանքից զրկելը կամ դրա սպառնալիքը, ինքնուրույն խնամքն իրականացնելուց զրկված անձին խնամքից զրկելը կամ պատշաճ պայմաններ չապահովելը:

Իհարկե, չի կարելի անտեսումը մեկնաբանել չափից լայն՝ հնարավորություն ընձեռելով աշխատունակ ընտանիքի անդամներին չարաշահելով ընտանեկան կապերը վարել մակաբուծային կյանք ընտանիքի այլ անդամների ֆինանսական միջոցների հաշվին: Այս դեպքում նման վարքագիծը կարող է գնահատվել որպես տնտեսական բռնություն այն անձանց նկատմամբ, ումից կորզվում են այդ դրամական միջոցները:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընտանիքում անտեսումը սահմանել հետևյալ կերպ՝ *համապատասխան պարտավորություն ունեցող ընտանիքի անդամի կողմից հաշմանդամության, տարիքի, անաշխատունակության կամ իր կարիքներն ու սպասարկումն այլ հիմքով ինքնուրույն հոգալու հնարավորությունից զրկված անձի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն) դիտավորությամբ չբավարարելն է, եթե այդ ընտանիքի անդամը տիրապետում է պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան*

ծառայությունները նրանց համար հասանելի են:

Համակցված (խառը) բռնություն. Բռնության այս տեսակը «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում նախատեսված չէ և ներկայացվում է տեսական գրականությունում և պայմանավորված է դրա պրակտիկ անհրաժեշտությամբ, քանի որ ընտանիքում բռնության առանձին տեսակներ հաճախ հանդիպում են համակցված՝ ֆիզիկական բռնությունը ուղեկցվում է հոգեբանական բռնությամբ, սեռական բռնությունը՝ ֆիզիկական կամ հոգեբանական բռնությամբ, անտեսումը՝ հոգեբանական բռնությամբ և այլն: Այս հարցը հատկապես կարևորվում է ընտանիքում բռնության հանցավոր դրսևորումները մեկնաբանելիս:

Օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի 132.2-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգ կամ շահագործում է համարվում շահագործման նպատակով երեխային, հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև այդպիսի անձանց շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը³²:

Երեխայի շահագործման ձևերն են հանդիսանում՝

- սեռական շահագործումը,
- երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը,
- երեխայի ստրկությունը կամ ստրկությանը նմանվող վիճակը,
- երեխայի առքուվաճառքը,
- երեխայի օրգանները կամ հյուսվածքները վերցնելը:

Այս բոլոր դրսևորումները հանդիսանում են բռնության համակցված (խառը) ձևեր, քանի որ առկա է և՛ ֆիզիկական, և՛ սեռական, և՛ հոգեբանական, և՛ տնտեսական բռնություններ, առավել ևս՝ անտեսում:

Ընտանիքում բռնության համակցված ձևերը պետք է հատուկ ուշադրության անդրադառնան՝ հաշվի առնելով դրանց վտանգավորության աստիճանը և բռնության ենթարկված անձանց վրա ազդեցության ուժգնությունը: Ցանկալի է, որ համակցված բռնությունը նույնպես ներկայացվի ՀՀ գործող օրենսդրությամբ:

Ամփոփելով սույն հոդվածը՝ ակնհայտ է, որ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում սահմանվող «ընտանիքում բռնությունը» հիմնովին վերանայման կարիք ունեն՝ ամբողջականացնելով բռնության այս տեսակին բնորոշ բոլոր ձևերն ու դրսևորումները՝ ընտանիքի բոլոր անդամներին հնարավորինս ամբողջական պաշտպանելու նպատակով:

Հետևաբար, առաջարկվում է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը, որի 3-րդ հոդվածի 2-րդ մասում ընտանիքում բռնության տեսակները սահմանել հետևյալ կերպ՝

1) ընտանիքում ֆիզիկական բռնություն՝ իշխանություն կամ վերահսկողություն հաստատելու նպատակով ընտանիքի անդամի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք, որի արդյունքում նա զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ կամ ֆիզիկական տառապանք,

2) ընտանիքում սեռական բռնություն՝ ցանկացած դիտավորյալ արարք ընտանիքի անդամին՝ նրա կամքին հակառակ, առանց

32. ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով, ինչպես նաև նույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածով շահագործում են համարվում այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը:

նրա կամքը հաշվի առնելու կամ անօգնական կամ կախյալ վիճակն օգտագործելով սեռական հարաբերության կամ սեռական բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելը, սեռական հարաբերությունը կամ սեռական բնույթի այլ գործողությունները,

3) ընտանիքում հոգեբանական բռնություն՝ արտաքին միջավայրի հոգեկան գործոնների կիրառմամբ կատարված ցանկացած դիտավորյալ արարք՝ ուղղված ընտանիքի անդամի հոգեկանի վրա ներգործելուն՝ վերջինիս կամքը ճնշելու, նրան բռնարարի կամ այլ անձի կամքին ենթարկելու նպատակով, սոցիալապես մեկուսացնելու, կախվածություն առաջացնելու կամ հոգեբանական այլ ծայրահեղ պայմաններ ստեղծելու համար,

4) ընտանիքում տնտեսական բռնություն՝ ընտանիքի անդամի կողմից սեփականության, ներառյալ՝ ընդհանուր սեփականության, իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, գույքը ոչնչացնելը կամ վնասելը, ինչպես նաև ընտանիքի

անդամի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը կամ այդ իրավունքներից զրկելը,

5) ընտանիքում անտեսում՝ համապատասխան պարտավորություն ունեցող ընտանիքի անդամի կողմից հաշմանդամության, տարիքի, անաշխատունակության կամ իր կարիքներն ու սպասարկումն այլ հիմքով ինքնուրույն հոգալու հնարավորությունից զրկված անձի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն) դիտավորությամբ չբավարարելն է, եթե այդ ընտանիքի անդամը տիրապետում է պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են,

6) համակցված (խառը) բռնություն՝ վերը նշված՝ ընտանիքում բռնության երկու և ավելի տեսակների միաժամանակյա առկայությունն է:



ՍԵՎԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂԻ ՀԱՐՋԻ ՇՈՒՐՋ

«Հ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Կատարող է համարվում այն անձը, ով անմիջականորեն կատարել է հանցանքը կամ դրա կատարմանն անմիջականորեն մասնակցել է այլ անձանց (համակատարողների) հետ համատեղ, ինչպես նաև հանցանքը կատարել է այլ այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել են անզգուշությամբ»:

Պետք է նշել, որ հանցակցությունն առանց կատարողի հնարավոր չէ. մյուս հանցակիցները համախմբվում են հենց կատարողի շուրջ և հանցակցում են (մասնակցում են) կատարողի կողմից կատարվող հանցանքին: Կատարողն է փաստորեն ձևավորում հանցակցությունը. կատարողի բացակայությունը կամ նրա կողմից հանցագործությունից կամովին հրաժարվելը կամ այլ հիմքերով հանցագործությանը ձեռնամուխ չլինելը հանգեցնում է հանցակցության բացակայության:

«Հ քր. օր.-ի 38-րդ հոդվածի 2-րդ մասն առանձնացնում է հանցագործության **կատարողի չորս տեսակ**.

- ա) անձ, ով անմիջականորեն կատարում է հանցանքը,
- բ) անձ, ով հանցագործության կատարմանը մասնակցում է այլ անձի (անձանց) հետ համատեղ (համակատարող),
- գ) անձ, ով հանցանքը կատարում է այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության,
- դ) անձ, ով հանցանքը կատարում է այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր հանցանքը կատարում են անզգուշությամբ:

Հերթականությամբ քննարկենք կատարողի տեսակները:

Առաջինը, ինչպես նշել ենք, այն անձն է, ով անմիջականորեն կատարում է հանցանքը: Ըստ էության կատարողի այս տեսակի հետ կապված քրեական իրավունքի տեսության մեջ խնդրահարույց հարցեր չկան: Անմիջականորեն հանցանք կատարողը այն անձն է, ով իրականացնում է հանցագործության օբյեկտիվ կողմը: Սրա հետ կապված պարզապես պետք է մի ճշտում անել. հատուկ սուբյեկտով հանցագործություններում միայն օբյեկտիվ կողմն իրականացնելը բավարար չէ անձին կատարող ճանաչելու համար: Հատուկ սուբյեկտով հանցագործություններում բացի օբյեկտիվ կողմը կատարելուց անձը պետք է նաև օժտված լինի տվյալ հանցատեսակի հատուկ սուբյեկտին բնորոշ հատկանիշներով: Բացի այդ, մեր կարծիքով, կատարող կարող է համարվել այն անձը, որին, բացի սուբյեկտին բնորոշ հատկանիշներից, բնութագրական են նաև տվյալ հանցակազմին բնորոշ բոլոր հատկանիշները՝ մեղքի ձևը, տեսակը, հանցագործության եղանակը, տեղը, ժամանակը և այլն: Օինակ՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության կատարող կհամարվի այն անձը, որը դիտավորությամբ՝ ուղղակի կամ անուղղակի, գիտակցելով իր ընտրած եղանակի վտանգավորությունը շատերի կյանքի համար, հենց այդ եղանակով կիրականացնի սպանության օբյեկտիվ կողմը: Ուստի, ճիշտ է թվում իրավաբանական գրականության մեջ առաջ քաշված այն թեզը, որ կատարողին մյուս հանցակիցներից սահմանազատելու հարցում ազդում են ոչ միայն օբյեկտիվ կողմի, այլև համապատասխան հանցակազմի բոլոր տար-

● ՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 120 2020

1. Стн Энциклопедия уголовного права. Т. 6, СПб, 2007, с. 133-134:

րերն ու հատկանիշները²: Կարելի է հավաստել նաև, որ միայն անմիջականորեն հանցանքը կատարելը չէ, որ թույլ է տալիս կատարողին սահմանազատելու այլ հանցակիցներից: Բանն այն է, որ հանցանքը անմիջականորեն կատարողը կարող է նաև օժանդակող լինել, եթե հատուկ սուբյեկտի դրոմամբ կատարում է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմը, այսինքն՝ անմիջականորեն կատարում է հանցանքը: Բացի այդ, որոշ դեպքերում կատարող է համարվում այն անձը, որը անմիջականորեն չի իրականացնում հանցանքը: Խոսքը հենց այն դեպքերի մասին է, երբ հատուկ սուբյեկտը հանցանքի օբյեկտիվ կողմի կատարմանը դրդում է հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձի: Ուստի, կարծում ենք, որ կատարող կարող է համարվել այն անձը, որը որպես կատարող ենթակա է քրեական պատասխանատության տվյալ հանցատեսակի համար և կատարում է տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը կամ այն կատարում է միջնորդավորված ձևով:

Կատարողի հաջորդ տեսակը այն անձն է, ով հանցագործության կատարմանը մասնակցում է այլ անձի (անձանց) հետ համատեղ (համակատարող): Խոսքը համակատարման մասին է, երբ հանցագործությանը մասնակցում են երկու կամ ավելի կատարողներ, որոնցից յուրաքանչյուրը կատարում է տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը ամբողջությամբ կան դրա մի մասը: Ընդ որում, հանցագործության բոլոր մասնակիցներն իրականացնում են ամբողջ օբյեկտիվ կողմը կամ նրանցից մեկը կամ մի քանիսը իրականացնում են ամբողջ օբյեկտիվ կողմը, իսկ նրանցից մեկը կամ մի քանիսը օբյեկտիվ կողմի մի մասը կամ էլ բոլորը իրականացնում են օբյեկտիվ կողմի միայն մի մասը³:

Քրեական իրավունքի տեսության մեջ ընդունված է այն մոտեցումը, որ կատարողը նաև այն անձն է, որը իրականացնում է հանցագործության ոչ միայն ամբողջ օբյեկտիվ կողմը, այլև դրա մի մասը: Միևնույն ժամա-

նակ նշվում է, որ այս դեպքում խոսքը համակատարման և ավարտված հանցագործության մասին է⁴: Նշված դրույթները վիճելի են: Նախ՝ պարտադիր չէ, որ հանցագործության օբյեկտիվ կողմի մի մասը իրականացնի միայն համակատարողը: Բանն այն է, որ միայնակ գործող կատարողն էլ կարող է իրականացնել օբյեկտիվ կողմի մի մասը, ինչը բնորոշ է չավարտված հանցագործությանը. չէ որ հանցավորձի դեպքում հիմնականում անձը իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողանում իրականացնել ամբողջ օբյեկտիվ կողմը և ավարտել հանցագործությունը: Բացի այդ՝ պարտադիր չէ, որ գործ ունենանք ավարտված հանցագործության հետ: Համակատարման դեպքում էլ հանցագործությունը կարող է ավարտին չհասնել համակատարողների կամքից անկախ հանգամանքներով: Օրինակ՝ անձին սպանելու դիտավորությամբ երկու համակատարողն էլ կրակում են զոհի ուղղությամբ, սակայն վերջինիս կյանքը փրկվում է բժշկական միջամտության շնորհիվ: Նշվում է նաև, որ համակատարողը անպայման պետք է իրականացնի տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմի թեկուզ մի մասը: Ակնհայտ է, որ եթե համակատարողը չի կարողանում իրականացնել օբյեկտիվ կողմի թեկուզ մի չնչին մասը, նա չի կարող համակատարող համարվել: Գրականության մեջ բերվում է հետևյալ օրինակը: Երկու անձ պայմանավորվում են սպանել մեկին: Այդ նպատակով նրանք գնում են սպազա զոհի բնակարան, պահանջում են վերադարձնել պարտքը: Վեճի ընթացքում նրանցից մեկը հանում է դանակը և սպնում է զոհին, իսկ մյուսը ոչինչ չի անում: Բնականաբար վերջինիս արարքը չի կարող որակվել որպես կատարողի արարք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածով⁵: Հարց է առաջանում, թե ինչպես պետք է որակվի արարքը նման դեպքերում: Չէ որ կատարողը, ինչպես արդեն նշել ենք, կարող է նաև չավարտել հանցագործությունը: Ընդ որում, կատարողի արարքը կարող է խափանվել ոչ միայն հանցավորձի այլև հանցագործության

2. Տե՛ս **Васюков В. В.** Виды соучастников в Уголовном праве России., Автореф., дисс., на соиск. учен., степени канд., юрид., наук., СПб, 2008, с. 5.
 3. Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (Ընդհանուր մաս), Եր., 2012, էջ 266-267:
 4. Տե՛ս Энциклопедия уголовного права. Т. 6, СПб, 2007, էջ 137:
 5. Նույն տեղում, էջ 137-138:

նախապատրաստության փուլում: Ենթադրենք՝ այդ անձը որոշել էր սպանությունը միայնակ կատարել, այդ նպատակով գնացել էր զոհի բնակարան, բայց չէր հանել դանակը՝ կողմնակի անձի կամ անձանց ներկայության հետևանքով: Չէ որ այդ դեպքում արարքը պետք է որակվեր որպես սպանության նախապատրաստություն, եթե ապացուցվեր սպանելու դիտավորությունը:

Բերված օրինակում հանցավորներից մեկը փաստորեն նախապատրաստվել էր մասնակցելու հանցագործությանը. դիտավորությունն ուղղված էր զոհին սպանելուն, այդ նպատակով գնացել էր վերջինիս բնակարան, հնարավոր է որ զենք էր ձեռք բերել, պարզապես ինքը չհասցրեց իր կամքից անկախ հանգամանքներով կատարել սպանությունը, որովհետև ընկերն իրենից առաջ ընկավ: Պետք է նշել նաև, որ իր ներկայությամբ նա փաստորեն ամրապնդում էր իր ընկերոջ վճռականությունը: Կարծում ենք, որ նման դեպքերում արարքը օժանդակություն համարելը ճիշտ չէ, ինչպես դա արվել է նախագծում. մեր կարծիքով նման դեպքերում, երբ երկու հանցավորներից մեկը անմիջականորեն չի կատարում հանցագործության օբյեկտիվ կողմը արարքը պետք է որակվի որպես հանցանքի միայնակ կատարում՝ հղում անելով նախապատրաստության բնորոշումը տվող հոդվածի վրա: Մեր կարծիքով չի կարող միայնակ կատարողի հասկացությունը տարբերվել համակատարողի հասկացությունից. պարզապես այլ հարց է, որ համակատարումը առկա է այն դեպքում, երբ երկու կամ ավելի անձինք անմիջականորեն կատարում են հանցանքը, այսինքն՝ առնվազն հանցափորձ են իրականացնում: Եթե հանցանքի անմիջական կատարում տեղի չի ունենում, ապա համակատարումը և ուրեմն համապատասխան ծանրացնող հանգամանքը բացակայում են: Սրա հետ կապված պետք է նշել նաև, որ հանցափորձ կարող են համարվել ոչ միայն այն արարքները, որոնք նկարագրված են քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում, այլև նրանք, որոնք անմիջականորեն նախորդում են դրանց,

հանդիսանում վերջիններիս բաղկացուցիչ մասը և չեն կարող առանձնացվել: Օրինակ՝ մարմնական վնասվածք հասցնելու համար դանակը գրպանից հանելը, սպանության նպատակով հրազենից նշան բռնելը և այլն պետք է որակվեն որպես հանցափորձ⁶: Ուստի, նշված դեպքերում էլ առկա է համակատարումը:

Փոքր-ինչ բարդ է իրավիճակը այն դեպքերում, երբ սկզբնապես նպատակ ունենալով մասնակցելու հանցագործությանը որպես կատարող անձը, հանցանքի կատարման վայրում, իր կամքով ոչինչ չի անում, այլ միայն հետևում է դեպքերի ընթացքին: Փաստորեն նման իրավիճակներում անձը իր կամքով հրաժարվում է հանցագործությանը որպես կատարող մասնակցելուց: Հենց այս դեպքերում է, որ անձի արարքը պետք է որակվի որպես օժանդակություն, իհարկե ընդլայնվով օժանդակողի օրենսդրական հասկացությունը՝ օժանդակողի արարքների սպառիչ ցանկ չսահմանելով, այլ նշելով, որ օժանդակություն է ցանկաձ ձևով հանցագործությանը նպաստելը: Նման մոտեցում է որդեգրված շատ արտասահմանյան երկրների քրեական օրենսդրություններում:

Մյուս կարևոր հարցը հետևյալն է. ինչպիսի մասնակցության մասին է խոսքը, հանցագործության մեջ մասնակցի ինչ աստիճանի ներդրման մասին է: Բանն այն է, որ քրեական իրավունքի տեսության մեջ այն կարծիքն է արտահայտվում, թե խոսքը այն մասին է, որ մասնակցի արարքը պետք է էական ազդեցություն ունենա ցանկալի նպատակին հասնելու մեջ⁷: Նման դիրքորոշման է նաև Իսպանիայի քրեական օրենսգրքը, որի 28 հոդվածի համաայն՝ կատարող է համարվում նաև այն անձը, որը իր գործողությամբ միանում է արարքի կատարմանը, եթե առանց դրա արարքը չէր կատարվի⁸: Կարծում ենք, որ նման դիրքորոշումը չի ապահովում իրավական որոշակիությունը և հստակ չէ: Ասենք թե անձը առանց ուրիշի մասնակցության էլ կարող էր հանցանքը կատարել, բայց, համենայն դեպս, ընկերոջ հետ է անում դա՝ նրան էլ ընդգրկելով հանցագործությանը: Կարելի է արդյոք ասել,

6. Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (Ընդհանուր մաս), Եր., 2012, էջ 246:
 7. Տե՛ս Энциклопедия уголовного права. Т. 6, СПб, 2007, с. 138.
 8. Տե՛ս Уголовный кодекс Испании. М., 1998, с. 20.

թե քանի որ նա հանցանքը առանց իր ընկերոջ մասնակցության էլ կարող էր իրականացնել, ուրեմն համակատարում չկա: Մեր կարծիքով՝ ոչ. կարևորը օբյեկտիվ կողմի իրականացումն է: Բացի այդ «էական» գնահատողական հասկացությունը խառանշփոթից բացի ուրիշ ոչինչ չի տալիս. որն է էական, որը ոչ էական շատ դժվար, եթե ոչ անհնար է որոշելը: Մեր կարծիքով հանցագործության օբյեկտիվ կողմը կամ դրա մի մասը կատարած յուրաքանչյուր անձի արարք պետք է որակվի որպես կատարողի արարք և հակառակը: Բերենք իրավակիրառ պրակտիկայից մի օրինակ: Շ.-ն և Ջ.-ն որոշել են Գ.-ից որպես իբրև ունեցած պարտքը (իրականում պարտք չի եղել) տալու երաշխիք պահանջել իրենց հանձնել ավտոմեքենան՝ այդ պահանջը զուգորդելով Գ.-ին սպանելու սպառնալիքով: Այդ նպատակով Շ.-ն Գ.-ին կանչել է իր ընկերոջ սրճարան, որտեղ այլ ընկերների ներկայությամբ Գ.-ին է ներկայացրել իր պահանջը և սպառնալիքը: Այդ ընթացքում Շ.-ի ընկերները խոժոռ հայացքներով նայել են Գ.-ին՝ կարծես թե հավաստելով Շ.-ի սպառնալիքների լրջությունը: Կարող ենք արդյոք ասել, որ նրանք համակատարողներ են եղել: Կարծում ենք՝ ոչ: Մեր կարծիքով՝ նրանց արարքը պետք է որակել որպես օժանդակություն՝ օժանդակողի մեր ընկալման համատեքստում: Որպես օժանդակողի արարք պետք է որակվի նաև Ջ.-ի արարքը, ով հաջորդ օրը զանգահարել է Գ.-ին և պարզապես հայտնել է, որ Շ.-ն շատ վտանգավոր մարդ է և շատ լուրջ է տրամադրված: Բանն այ է, որ փաստորեն ո՛չ Շ.-ի ընկերները, ո՛չ էլ Ջ.-ն շորթման օբյեկտիվ կողմը կազմող որևէ արարք չեն կատարել:

Կարևոր է նշել նաև մեկ այլ հանգամանք. համակատարման դեպքում և այն դեպքում, երբ առկա է մի խումբ անձանց կողմից հանցանք կատարելը որպես ծանրացնող հանգամանք, պարտադիր չէ, որ բոլոր համակատարողները նույնությամբ կատարեն հանցագործության օբյեկտիվ կողմը. հնարավոր է դերերի բաշխում: Սա ավելի հաճախ լինում է խմբակային խարդախությունների դեպքերում, երբ կատարողներից մեկը իրականացնում է խաբեությունը իսկ մյուսը վերցնում է գույքը:

Կատարողի հաջորդ տեսակը քրեական իրավունքի տեսության մեջ կոչվում է միջ-

նորդավորված կատարում: Օրենքի համաձայն կատարող է համարվում նաև այն անձը ով հանցանքը կատարում է այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության: Քրեական իրավունքի տեսությանը հայտնի է, որ անձինք, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության, անմեղսունակներն են, քրեական պատասխանատվության տարիքի չհասածները, անձինք ովքեր հասել են քրեական պատասխանատվության տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով չեն կարող ամբողջությամբ գիտակցել իրենց արարքի հանրային վտանգավորությունը կամ ղեկավարել դա, անձինք ովքեր արարքը կատարել են այնպիսի ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ, որը զրկել է նրանց իրենց արարքները ղեկավարելու կամ գիտակցելու հնարավորությունից կամ ստեծել է ծայրահեղ անհարժեշտության վիճակ, անձինք ովքեր արարքը կատարել են առանց մեղքի: Անձինք ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության պետք է ավելի լայն հասկանալ: Այդպիսիք են ոչ միայն արդեն նշված անձինք՝ ովքեր ընդհանրապես ենթակա չեն քրեական պատասխանատվության, այլև այն անձինք ովքեր ենթակա չեն քրեական պատասխանատվության տվյալ հանցագործության համար որպես կատարող: Խոսքը հատուկ սուբյեկտով հանցագործությունների, ինչպես նաև այն դեպքերի մասին է, երբ անձը չի գիտակցում հանցագործության այնպիսի էական տարրի կամ հատկանիշի առկայությունը, որն ազդում է արարքի որակման վրա: Գրականության մեջ բերվում է վերջին իրավիճակը արտահայտող հետևյալ օրինակը՝ սպանությունն անմիջականորեն իրականացնողը համոզված է լինում, որ կատարում է մարդու կյանքի, այլ ոչ թե պետության անվտանգության դեմ ուղղված հանցանք, իսկ իրականում տեղի է ունենում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանություն (որն էլ լինում է պատվիրատուի նպատակը), արարքը պետք է որակվի հետևյալ կերպ. անմիջական կատարողի արարքը՝ որպես ծանրացուցիչ հանգամանքներում սպանություն՝ ՀՀ քր. օր.-ի հոդված 104-ի 2-րդ

մասի 8-րդ կետով (պատվերով սպանություն), իսկ պատվիրատուինը՝ հոդված 305-ով նախատեսված հանցանքի կատարում, այլ ոչ թե դրա դրոշմություն: Այստեղ, փաստորեն, առկա է պետական, քաղաքական կամ հասարակական գործչի, ոչ թե անմիջական, այլ միջնորդավորված սպանություն, քանի որ հանցավորը, ըստ էության, անմիջական մարդասպանին դարձնում է նշված հանցագործության կույր գործիք⁹:

Միջնորդավորված կատարման տեսակ են համարվում նաև հրաման կամ կարգադրություն կատարողին, ինչպես նաև անզգուշությամբ հանցանք կատարողին օգտագործելը: Ինչ վերաբերում է հրաման կամ կարգադրություն կատարելուն, ապա դա ըստ էության առանց մեղքի փաստ պատճատող կամ անզգուշությամբ հանցանք կատարող անձին օգտագործելու մասին է. ուստի, մեր կարծիքով, այն առանձնացնելու կարիք չկա: Ինչ վերաբերում է անզգուշությամբ հանցանք կատարողին օգտագործելու մասին, ապա պարզապես պետք է այս իրավիճակը չչփոթել առանց մեղքի հանցանքը կատարելու հետ. խոսքն այն մասին է, որ հանցավորը օգտագործում է անձի մոլորությունը և ներգրավում է նրան այնպիսի արարք կատարելուն, որն իրենից անզգույշ հանցանք է ներկայացնում և որպես այդպիսին նախատեսված է քրեական օրենքում: Ընդ որում, կարելի է օգտագործել միայն անփութությամբ գործող անձին. հանցավոր ինքնավստահությամբ արարք կատարողին հնարավոր չէ օգտագործել: Անհնար է օգտագործել անձի, որը նախատեսում է հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը և ձգտում է կանխել դրանք¹⁰: Միջնորդավորված կատարման այս տեսակը առանձնացրել ենք՝ սուբյեկտիվ կողմի առանձնահատկության պատճառով:

Միջնորդավորված կատարման հետ կապված է նաև այն հարցը, թե արդյոք համակատարումը հնարավոր է միջնորդավորված իրականացնել: Պետք է

նշել, որ համակատարման դեպքում էլ անձը կարող է մասնակցել հանցագործությանը՝ այնպիսի անձի օգտագործելով, որը ենթակա չէ քրեական պատասխանատվության: Այս հանգամանքը պետք է արտացոլվի կատարողի հասկացության մեջ: Հարց է առաջանում, թե արդյոք հնարավոր է համակատարում այնպիսի անձի օգտագործելով, որը հանցանք է կատարել անզգուշությամբ: Սկզբունքորեն նման իրավիճակը չի բացառվում, թեև գործնականում նման դեպքերը կարող են հազվադեպ լինել:

Միջնորդավորված կատարման հետ կապված մեկ այլ հարց է հետևյալը. արդյոք հանցավորը պետք է անպայման գիտակցի, որ օգտագործում է այնպիսի անձի, որը օրենքի ուժով ենթական չէ քրեական պատասխանատվության, թե բավական է օգտագործելու օբյեկտիվ փաստը: Այս հարցի շուրջ քրեական իրավունքի տեսության մեջ միասնական կարծիք չկա. քրեագետների մի մասը գտնում է, որ օգտագործողը կարող է նաև չգիտակցել սույն փաստը¹¹, իսկ մյուս մասը կարծում է, որ հանցավորը անպայման պետք է գիտակցի այն անձին օգտագործելու փաստը, ով ենթակա չէ քրեական պատասխանատվության¹²: Հարցի հետ կապված տեղին է անդարդառնալ «օգտագործել» բառի ստուգաբանությանը: Էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ի համաձայն՝ «օգտագործել» նշանակում է ծառայեցնել իր նպատակի, օգտվել, օգուտ քաղել, որոշ դիտավորությամբ մեկին իր կամակատարը դարձնել¹³: Կարելի է հավաստել, որ օգտագործելը ենթադրում է դիտավորություն, այսինքն՝ հանցավորը պետք է գիտակցի, որ օգտագործում է այնպիսի անձի, ով ենթակա չէ քրեական պատասխանատվության: Սրա հետ կապված առաջ են գալիս անձի արարքի որակման հետ կապված հարցեր: Իրավակիրառ պրակտիկայում արձանագրվել է մի դեպք, երբ անձը դրդել է մեկ ուրիշին սպանություն կատարելու, որը իրականացրել է դա, սակայն հետագայում պարզվել է, որ սպանությունը

9. Տե՛ս Առաքելյան Ս. Վ., Մկրտչյան Պ. Վ., Հանցագործությունների որակման հիմնախնդիրները, Եր., 2020, էջ 314:
 10. Տե՛ս Энциклопедия уголовного права. Т. 6, СПб, 2007, с. 161.
 11. Նույն տեղում, էջ 157:
 12. Տե՛ս Васюков В. В., նշվ. աշխ., էջ 6:
 13. Տե՛ս Էդուարդ Բագրատի Աղայան: Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» Հրատարակչություն, Երեւան, 1976:

կատարողը եղել է անմեղսունակ, ինչի մասին չի իմացել նրան դրդողը: Հարց է առաջանում, թե ինչպես պետք է որակել անմեղսունակին հանցագործության դրդող անձի արարքը, եթե վերջինս չի գիտակել նրա անմեղսունակության մասին: Ակնհայտ է, որ նա չի կարող կատարող համարվել, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, օգտագործումը նշանակում է դիտավորություն, ուստի նշված հանգամանքի գիտակցում: Քրեական իրավունքի տեսության մեջ այս իրավիճակը համարում են չհաջողված հանցակցության դրսևորում և առաջարկում են արարքը որակել որպես տվյալ հանցագործության նախապատրաստություն: Կարծում ենք, որ նման դեպքերում նախապատրաստության մասին խոսելը ճիշտ չէ մի քանի նկատառումներից ելնելով: Նախ՝ դժվար թե տվյալ դեպքում ճիշտ է ասել թե հանցագործությունը ավարտին չի հասել: Ճիշտ է, եթե առաջնորդվենք այն սկզբունքով, որ չավարտված հանցագործությունն առկա է նույնիսկ այն ժամանակ, երբ հանցագործությունը փաստորեն ավարտվում է, որովհետև քրեաիրավական իմաստով գործ ունենք չավարտված հանցագործության հետ նաև այն դեպքում, երբ չի հաջողվում իրականացնել հանցակազմը: Տվյալ դեպքում փաստորեն սպանությունը տեղի չէր ունեցել, որովհետև բացակայում էր սուբյեկտը: Բայց պետք է նշել, որ ոչ սուբյեկտին օգտագործող փաստորեն հասավ իր նպատակին և իրականացրեց իր դիտավորությունը: Վերջապես նախապատրաստության համար պատժի չափը, կարծում ենք, բոլորովին չի համապատասխանում կատարվածի վտանգավորությանը: Ուստի, նման դեպքերում, կարծում ենք, ճիշտ կլինի կյանքի կոչել հանցակցության փորձի ինստիտուտը, ինչ-պես դա առկա է այլ երկրների քրեական օրենսդրություններում:

Հակառակ իրավիճակում, երբ օգտագործողը կարծում է թե օգտագործվողը հանցագործության սուբյեկտ չէ, բայց հետագայում,

հանցագործությունից հետո պարզվում է, որ օգտագործվողը օժտված էր սուբյեկտի հատկանիշներով, ապա օգտագործողի արարքը պետք է որակվի որպես ավարտված հանցանքի կատարում՝ ըստ իր դիտավորության ուղղվածության¹⁴: Համաձայն չենք այն դիրքորոշման հետ, որ այդ դեպքում առկա է հանցափորձը¹⁵: Ըստ էության տվյալ դեպքում օգտագործողը իր կամքով, իր արարքով հասնում է իր նպատակին:

Հանցագործության միջնորդավորված կատարման այն դեպքերում, երբ օգտագործվող անձը սահմանազանցում է թույլ տալիս, ապա արարքը պետք է որակել սահմանազանցման ընդհանուր կանոններով՝ միջնորդավորված կատարողը պետք է պատասխանատուության ենթարկվի միայն այն հանցագործության համար, որն ընդգրկված էր նրա դիտավորության մեջ (խոսքը քանակական սահմանազանցման մասին է): Այս տեսակետից համաձայն չենք իրավաբանական գրականության մեջ առաջ քաշված այն գաղափարի հետ, որ, եթե սահմանազանցման արդյունքում իրականացվել է միջնորդավորված կատարողի նպատակը (կամ չի իրականացվել), և նա նախատեսել է սահմանազանցման իրական հնարավորությունն ու գիտակցաբար թույլ է տվել այն, ապա նա պատասխանատվություն է կրում սահմանազանցման համար¹⁶: Վիճելի է անուղղակի դիտավորության հնարավորությունը. ինչպես կատարողը կարող է նախատեսել, որ իր կողմից օգտագործվողը սահմանազանցում թույլ կտա: Եթե նույնիսկ պատկերացնենք, որ մեկ ուրիշին օգտագործողը գիտի նրա առանձնահատկությունների մասին և պատկերացնում է, որ օգտագործվողը կարող է սահմանազանցում թույլ տալ, մեր կարծիքով, դա չի կարող նրան մեղսագրվել թեկուզ ապացուցման անհնարինության կամ բարդության պատճառով. չէ որ մեկ ուրիշին օգտագործողը դրդել էր այլ հանցանքի: Այս կարծիքին են նաև «Հանցագործությունների

14. Տե՛ս Առաքելյան Ս. Վ., Մկրտչյան Պ. Վ., նշվ. աշխ., էջ 319:

15. Տե՛ս Գրիգորյան Լ. Ա., Հանցագործության միջնորդավորված կատարման համար քրեական պատասխանատվության տեսական ել գործնական հիմնախնդիրները, Սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի հայցման համար, 2019, էջ 8:

16. Տե՛ս Գրիգորյան Լ. Ա., նշվ. աշխ., էջ 17:

որակման հիմնախնդիրները» աշխատության հեղինակները¹⁷:

Միջնորդավորված կատարման դեպքում օգտագործվողի կողմից սահմանազանցում թույլ տալու կամ օգտագործողի հրահրած արարքը չկատարելու կամ բոլորովին այլ արարք կատարելու մյուս դեպքերին չենք անդրադառնա, քանի որ դրանք մանրամասն լուսաբանված են իրավաբանական գրականության մեջ¹⁸:

Ամփոփելով վերոգրյալը՝ փորձենք տալ կատարողի այնպիսի հասկացություն, որը կարտացոլի հանցանքի կատարման բոլոր դեպքերը. «Կատարող է համարվում այն անձը, ով որպես կատարող ենթակա է քրեական պատասխանատվության տվյալ հանցանքի համար և անմիջականորեն կատարել է հանցանքը կամ դրա կատարմանն անմիջականորեն մասնակցել է այլ անձանց (համակատարողների) հետ համատեղ, կամ այլ

անձանց (համակատարողների) հետ համատեղ մասնակցել է հանցանքի կատարմանը այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ընդհանրապես ենթակա չեն քրեական պատասխանատվության կամ ենթակա չեն քրեական պատասխանատվության տվյալ հանցանքի համար որպես կատարող կամ հանցանքը կատարել են անզգուշությամբ, ինչպես նաև այն անձը, ով հանցանքը կատարել է այլ այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ընդհանրապես ենթակա չեն քրեական պատասխանատվության, կամ ենթակա չեն քրեական պատասխանատվության տվյալ հանցանքի համար որպես կատարող, կամ հանցանքը կատարել են անզգուշությամբ»:

Կարծում ենք, որ այս հասկացությունը կնպաստի քրեական օրենսդրության և իրավա-կիրառ պրակտիկայի կատարելագործմանը:

17. Տես Առաքելյան Ս. Վ., Մկրտչյան Պ. Վ., նշվ. աշխ., էջ 317:

18. Տես նույն տեղում, էջ 315-319, նաև՝ Գրիգորյան Լ. Ա., նշվ. աշխ.:

ԳԱՌԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային
քննչական վարչության
Աբովյանի քննչական բաժնի պետ

ՍԱՄՎԵԼ ՀԱԿՈՐՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի Ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի
4-րդ կուրսի ուսանող

**ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԱՆՃԵՆՆԱՄԻՏԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՄԻՋԱՍՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՕԴԵՐԱՏԻՎ-
ՇԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ՇԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ**

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը հասարակության բնականոն կյանքի ապահովման համար անհրաժեշտ այն կարևորագույն տարրերից է, որը իր ամրագրումն է գտել բազմաթիվ պետությունների սահմանադրություններում: ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք»: Իրավական և ժողովրդավարական պետության կառուցման գործընթացի հիմքում առաջնայինը մարդու իրավունքների ու ազատությունների հարգումն է: Սակայն մարդու իրավունքների և ազատությունների ճանաչումն ու ամրագրումը օրենսդրությամբ դեռևս բավարար չէ, այդ իրավունքները և ազատությունները պետք է իրապես ապահովված լինեն նրանց իրականացման համար ինչպես իրավական, այնպես էլ փաստական պայմաններ ստեղծելու միջոցով: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը սահմանում է. «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են»: Անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի իրաց-

ման կարևորության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ այն իր ամրագրումն է ստացել ոչ միայն ներպետական, այլ նաև միջազգային իրավական ակտերում: Քննարկվող իրավունքի կարևորության դրսևորումներից է նաև այն հանգամանքը, որ այս իրավունքի կրողն են ոչ միայն լրիվ գործունակ¹, այլև սահմանափակ գործունակ, մտավոր հետամնաց անձինք² և երեխաները³:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին վերաբերող ներպետական և միջազգային իրավական ակտերի լույսի ներքո հասկանում ենք, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, որպես համալիր իրավունք, իր մեջ ներառում է մարդու անձնական և ընտանեկան, նամակագրության և բնակարանի անձեռնմխելիության իրավունքները: Հիմք ընդունելով վերոշարադրվածը՝ կարող ենք փաստել, որ անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի այն կարևոր տարրերից մեկն է, որը սահմանում է մարդու սեփական մտքերի, ներաշխարհի, ցանկությունների և զգացմունքների, վարքագծի, ինչպես նաև կրոնի և հավատքի ազատությունները: Սակայն պետք է նշել, որ այս հարցի շուրջ իրավաբանական

1. ՄԻԵԿ, հոդված 8, « Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք...»:
2. Декларация о правах умственно отсталых лиц, 1971г. п.1 “Умственно отсталое лицо имеет в максимальной степени осуществимости те же права, что и другие люди ... ссылаясь на принципы Всеобщей декларации прав человека, Международных пактов о правах человека, Декларации прав ребенка ...»,
3. Конвенция о правах ребенка, 1989г. ст.16 “Ни один ребенок не может быть объектом произвольного или незаконного вмешательства в осуществление его права на личную жизнь, семейную жизнь, неприкосновенность жилища или тайну корреспонденции, или незаконного посягательства на его честь и репутацию...»

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 120 2020

գրականության մեջ միասնական կարծիք չկա⁴:

Վերլուծելով մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի բովանդակությունը, կարևորելով վերոնշյալ իրավունքի իրացման անհրաժեշտությունը՝ գտնում ենք, որ պետությունը այն պետք է պաշտպանության յուրահատուկ օբյեկտ դարձնի: Սակայն ոչ բոլոր դեպքերում է պետությունը պաշտպանում նմանօրինակ հիմնարար իրավունքների անձեռնմխելիությունը. լինում են դեպքեր, երբ պետությունը սահմանափակում կամ այլ կերպ միջամտում է մասնավոր կյանքի իրավունքի անձեռնմխելիությանը՝ որոշակի նպատակների հասնելու համար:

Հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման, հարուցված քրեական գործի ապացուցման խնդիրը լուծելու, ինչպես նաև քրեական դատավարության այլ խնդիրներ լուծելու համար անցկացվում են օպերատիվ հետախուզական միջոցառումներ և քննչական գործողություններ:

Որակյալ և գրագետ քննության անցկացման համար նախաքննության մարմնի ձեռքում կենտրոնացված են որոշակի գործիքներ, որոնցից են հանդիսանում նաև քննչական գործողությունները: Հանցագործության հետքերը հայտնաբերելու, քրեական գործով ապացույցներ ստանալու, ամրագրելու և հետազոտելու համար քրեական դատավարություն իրականացնող նախաքննության մարմինները անցկացնում են քննչական գործողություններ, որոնք, ըստ էության, ճանաչողական բնույթի դատավարական գործողություններ են: Վերոնշյալ նպատակներին հասնելու համար քննիչն իրավունք ունի նաև քննչական գործողության մասնակից դարձնելու օպերա-

տիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձին: Հաշվի առնելով, որ քննչական գործողությունները կարող են հանգեցնել մարդու մասնավոր կյանքի անձեռնամխելիության իրավունքի միջամտության, դրանք սույն թեմայի լույսի ներքո արժանի են համակողմանի ուսումնասիրման:

Քննչական գործողությունների արդյունքում ձեռք են բերվում հիմնավոր ապացույցներ, որոնք արդարացի դատավճռի կայացման էական հիմքն են հանդիսանում: Այս գործողությունները պետք է իրականացվեն օրինական ճանապարհով, որպեսզի չխախտվեն մարդու հիմնարար իրավունքները ընդհանրապես և մարդու մասնավոր կյանքի անձեռնամխելիության իրավունքը՝ մասնավորապես: Հետևաբար, քննչական գործողությունները ոչ միայն պետք է սահմանված լինեն օրենքով և ոչ միայն պետք է ծառայեն օրինական նպատակների, այլև պետք է լուծեն այն խնդիրները, որոնց իրականացմանը կոչված են՝ առանց անձի մասնավոր կյանք անհարկի միջամտությունների:

Այս համատեքստում հարկ ենք համարում առանձնացնել բնակարանի խուզարկություն քննչական գործողությունը, որը, մեր կարծիքով, համեմատաբար ավելի լայն կիրառություն ունի և ավելի զգալի չափով միջամտում է մասնավոր կյանքի անձեռնամխելիության իրավունքին: Բնակարանի անձեռնամխելիության իրավունքը, որը համարվում է մարդու մասնավոր կյանքի անձեռնամխելիության իրավունքի՝ որպես համալիր իրավունքի, կարևոր և անբաժան մաս, ամրագրված է միջազգային միջառք կոնվենցիաներում⁵: Հարցի վերաբերյալ ներպետական կարգավորումը սահմանված է

4. Бетехтина Екатерина Сергеевна, Парахина Екатерина Сергеевна, Семенникова Виктория Николаевна “ К вопросу о тайне частной жизни в уголовном процессе,., 2012г., стр.3 “ ...частную жизнь составляют те стороны личной жизни человека, которые он в силу своей свободы не желает делать достоянием других. Это - своеобразный суверенитет личности, означающий неприкосновенность его "среды обитания". Презюмируется, что тайна в данном случае вовсе не прикрывает какую-то антиобщественную или противоправную деятельность. Она отражает естественное стремление каждого человека иметь собственный мир интимных и деловых интересов, скрытый от чужих глаз. ,,

5. ՄԻԵԿ 8-րդ հոդված. Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք 1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք 2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

«Սահմանադրությամբ, որի 24-րդ հոդվածի համաձայն՝ բնակարանի անձեռնամխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ դատարանի որոշմամբ:

Բնակարանի խուզարկություն քննչական գործողության անցկացման կարգը հստակ սահմանվում է օրենքով:

Քննիչի ենթադրությունն այն մասին, որ բնակարանում գտնվում են հանցագործության բացահայտման համար արժեքավոր ապացույցներ, հիմք է տալիս նրան միջնորդություն ներկայացնելու դատարան՝ բնակարանի խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու համար: Հնարավոր են իրավիճակներ, երբ հանցանքի հետքեր, հանցագործության կատարման գործիքներ և միջոցներ հայտնաբերելու և այլ ապացույցներ ձեռք բերելու նպատակով բնակարանի խուզարկության ժամանակ հայտնաբերվեն անձի մասնավոր կյանքին վերաբերվող այլ տեղեկություններ, որոնք գուցե և ամենևին էլ չեն առնչվում հանցագործության դեպքին: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ խուզարկություն կատարելիս քննիչը պարտավոր է ձեռնարկել միջոցներ, որպեսզի չհրապարակվեն առգրավման և խուզարկության փաստը, ինչպես նաև դրանց արդյունքները և խուզարկվողի մասնավոր կյանքի հանգամանքները:

Քրեական դատավարության օրենսգրքի և ոչ մի հոդվածում մենք չենք հանդիպում մի հոդվածի, որը կորոշակիացնի թե ինչպիսի միջոցների մասին է գնում խոսքը⁶:

Օպերատիվ հետախուզական միջոցառումները սահմանափակում կամ առնվազն միջամտում են մարդու մասնավոր կյանքի անձեռնամխելիության իրավունքին: Անցկացվող օպերատիվ հետախուզական միջոցառումներից որոշները, որոնք էականորեն

սահմանափակում են մասնավոր կյանքի իրավունքը. անցկացվում են բացառապես դատարանի թույլտվությամբ: Հայտնի է, որ դատական վերահսկողությունը⁷ այն անհրաժեշտ գործունեություններից մեկն է, որը զսպող օղակ է հանդիսանում իրավապահ մարմինների համար՝ վերջիններիս կամարտահայտություններից զերծ պահելու նկատառումներով և ոչ միայն: Դատարանը, ՕՀՄ կատարելու համար թույլտվություն տալուց առաջ, հավաստիանում է, որ կան անհրաժեշտ պայմաններ և բավարար հիմքեր:

Հարկ ենք համարում անդրադառնալու «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ կետին, որը սահմանում է. «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ կետ. «Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ և 15-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է»: Փաստորեն, օրենսդիրը 16 օպերատիվ հետախուզական միջոցառումներից միայն 4-ի համար է նախանշել որոշակի պայմաններ:

Մինչդեռ պետք է փաստել, որ յուրաքանչյուր օպերատիվ հետախուզական միջոցառում այս կամ այն չափով սահմանափակում է անձի մասնավոր կյանքի անձեռնամխելիության իրավունքը, ուստի գտնում ենք, որ այս առումով օպերատիվ հետախուզական միջոցառումների

6. ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ, ԷՋ 447. «... պետք է նկատի ունենալ, որ որպես այդպիսի միջոցներ կարող են հանդես գալ միայն այնպիսի գործողությունները, որոնք նախատեսված են օրենքով: Այդ միջոցներից հիմնականներն են՝ խուզարկության մասնակիցներին զգուշացնելը խուզարկությանը մասնակցելու ընթացքում իրենց հայտնի դարձած հանգամանքներն առանց համապատասխան թույլտվության հրապարակելու անթույլատրելիության մասին, ինչպես նաև խուզարկության մասնակիցներից ստորագրություն վերցնելը այն մասին, որ նրանք նախագրույցացված են ՀՀ 448 քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով («Նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը») նախատեսված պատասխանատվության մասին»:

7. Օպերատիվ հետախուզական գործունեության մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդված:

տարանջատումը նպատակահարմար է: Անդրադառնալով ՕՀՄ-ներին՝ նշենք մի քանիսը, որոնք, մեր կարծիքով, ամենատարածվածն են պրակտիկայում և ակնհայտորեն միջամտում են մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

ՕՀԳ մասին ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, այդ թվում՝ հեռապատճենի (ֆաքսի) վերահսկումը՝ տեխնիկական միջոցների օգտագործմամբ կամ առանց դրանց, փոխանցվող նամակների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, այդ թվում՝ դրանց բովանդակության հետազոտումն է և դրանց արդյունքների ամրագրումը, ինչպես նաև նամակի, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներն ուղարկող անձի նույնացումը նրա ձեռագրի միջոցով կամ այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ: Նման ՕՀՄ-ներ իրականացվում են այն ժամանակ, երբ կան հիմնավոր կասկածներ առ այն, որ վերոնշյալ ինֆորմացիայի կրիչների հետազոտումը հիմք կհանդիսանա որոշակի հանգամանքներ ապացուցելու, քրեական դատավարության խնդիրները լուծելու համար: Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների հետազոտության ընթացքում անհրաժեշտության դեպքում կարող են կատարվել պատճենահանումներ (xerox): Փոստային կամ այլ ճանապարհով փոխանցված իրերի, առարկաների հետազոտության ընթացքում անթույլատրելի իրերի (զենք, զինամթերք, պայթուցիկ նյութեր, թմրանյութ, թմրամիջոցներ և այլն) հայտնաբերման դեպքում, դրանք կարող են առգրավվել: Անթույլատրելի իրերի հայտնաբերումը օրինական առիթ է քրեական գործ հարուցելու համար: ՕՀՄ արդյունքները ամփոփվում են համապատասխան արձանագրության մեջ:

Այսպիսով, ամփոփելով Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկումը, որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում, կարող ենք փաստել, որ այն ուղղակիորեն սահմանափակում է մարդու մասնավոր կյանքի անձեռնամխելիության իրավունքը:

Հաջորդ ՕՀՄ-ն, որը գտնվում է մեր ուսումնասիրությունների կենտրոնում, սահմանված է ՕՀԳ մասին ՀՀ օրենքի 26-րդ

հոդվածում: Դա հեռախոսային խոսակցությունների վերահսկումն է, որը, որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում, ինչպես արդեն նշեցինք, կատարվում է բացառապես դատարանի թույլատվությամբ: Ինքնին, օրենսդրի պահանջը առ այն, որ տվյալ ՕՀՄ-ը պետք է իրականացվի դատարանի թույլատվության առկայության դեպքում, հիմք է տալիս եզրահանգելու նրան, որ այս ՕՀՄ-ն ևս առանձնահատուկ կերպով է սահմանափակում մասնավոր կյանքի անձեռնամխելիության իրավունքը: Հեռախոսային խոսակցության վերահսկողությունը կատարվում է այն ժամանակ, երբ անհրաժեշտ հիմքեր կան ենթադրելու, որ հեռախոսային խոսակցություններում կարող են հայտնաբերվել գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ: Հեռախոսային խոսակցությունների վերահսկման ընթացքում ՕՀՄ իրականացնող մարմինները ոչ միայն վերահսկում են միակողմանի (автоатветчик), այլև երկկողմանի հեռախոսագրույցները, որտեղ մեկ բաժանորդի (ում հետ որ խոսում է ՕՀՄ իրականացնող մարմինն հետաքրքիր բաժանորդը) մասնավոր կյանքի անձեռնամխելիության իրավունքին անուղղակի միջամտություն է հասցվում: Այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ նախնական քննության ընթացքում տվյալների գաղտնիության անհրաժեշտությունը բխում է թե իրավապահ մարմինների գործունեության արդյունավետության նկատառումներից ելնելով, թե քաղաքացու հիմնարար իրավունքները չխախտելու կամ առնվազն չմիջամտելու նկատառումներից: Քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումը, նախնական քննության խնդիրները լուծելը անհնար է պատկերացնել առանց նախաքննական տվյալների գաղտնիությունը չսպառնալու պայմաններում: Նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ:

Նախաքննության ընթացքում ինչպես այս, այնպես էլ ցանկացած այլ ՕՀՄ-ների անցկացմամբ ստացված տեղեկությունները ենթական չեն հրապարակման առանց նախաքննության մարմնի որոշման:

Հնարավոր են դեպքեր, երբ անցկացված ՕՀՄ ընթացքում ձեռք բերված տեղեկությունները, (մասնավորապես նրանք, որոնք ուսնձգում են անձի պատվին և արժանապատվությանը, բարի համբավին, անձնական և ընտանեկան կյանքին, անձի սեռական ազատությանը և սեռական անձեռնմխելիությանը և օրենքով սահմանված այլ իրավունքներին) որոնք դատարանում կներկայացվեն որպես ապացույցներ, հիմք կհանդիսանան դատական նիստը դռնփակ անցկացնելու համար:

Գտնում ենք, որ այս իրավակարգավորումը ևս մի միջոց է անձի մասնավոր կյանքի անձեռնամխելիության իրավունքի պահպանման համար, չնայած այն հանգամանքին, որ արդեն իսկ ՕՀՄ իրականացնելու ընթացքում այն սահմանափակվել էր:

Այս կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը. «Սկզբունքային մոտեցումը պետք է լինի այն, որ նախնական քննության տվյալների հրապարակման թույլտվություն տալու՝ վարույթն իրականացնող իրավասու մարմնի հայեցողությունը չպետք է լինի բացարձակ: Այդ կապակցությամբ կայացված որոշումը պետք է հետապնդի նախաքննության շահերի իրական պաշտպանության նպատակ»:

Հավելենք, որ որոշ երկրների ներպետական օրենսդրությամբ սահմանված են , թե կոնկրետ որ դեպքերում չի թույլատրվում հրապարակել գործի քննության նյութերը: Մեծամասամբ դրանք վերաբերվում են հասարակական կարգի պաշտպանությանը, հանցագործության բացահայտմանը խոչընդոտելուն, քրեական դատավարությանը վնասելուն և հանցանքի կատարմանը նպաստելուն, առևտրային գաղտնիքին և իրավաբանական անձի գործունեությանը վնաս պատճառելուն, ընտանեկան կամ անձի կյանքի անձեռնամխելիությունը խախտելուն կամ անձի պատիվն ուսնահարելուն, անչափահասների շահերին վնաս պատճառելուն և այլն:

Մասնավոր կյանքի անձեռնամխելիության ամբողջական իրավական կարգավորումից է կախված անձի և պետության միջև

իրավալիազորող քրեաիրավական հարաբերությունների առաջացումը, փոփոխումը և դադարեցումը: Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավական կարգավորման հեռանկարներն ուրվագծելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ոչ միայն իրավակիրառ պրակտիկայում ծագող խնդրահարույց հարցերին, այլև՝ արտասահմանյան երկրների քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված կարգավորումներին: Անվիճելի է, որ արտասահմանյան դրական փորձը փոխառելը կարող է էապես նպաստել հայրենական օրենսդրության կատարելագործմանը: Մեր կարծիքով նման մոտեցումը ավելի նպատակային է, քանի որ պահանջի կոնկրետացման պարագայում շատ ավելի արդյունավետ կլինի նմանատիպ հասարակական հարաբերությունների կարգավորումը:

Քննարկվելիք հաջորդ ՕՀՄ-ն դա ներքին դիտումն է, քանի որ մեր կարծիքով այն ևս էականորեն սահմանափակում է անձի մասնավոր կյանքի անձեռնամխելիության իրավունքը:

Ներքին դիտումը բնակարանում հատուկ և այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց անձին (անձանց) հետևելն ու առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքի վերահսկումն է, ինչպես նաև դիտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց⁸: Բնակարան հասկացությունը օգտագործվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իմաստով⁹: Հասկացությունից պարզ է դառնում, որ տվյալ ՕՀՄ-ն իրականացնելու եղանակներից են հանդիսանում խոսակցությունների ձայնագրությունը, լուսանկարահանումը, տեսանկարահանումը:

Անցկացված օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ձեռք բերված տվյալների հիման վրա կազմվում է արձանագրություն: Արձանագրության մեջ կցվում են լուսանկարները, տեսակարահա-

8. ՕՀԳ մասին ՀՀ օրենք, հոդված 22 մաս 1-ին:
9. ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, հոդված 6 մաս 46:

նումները, խոսակցությունների ձայնագրությունները, որոնք ամրագրված են որոշակի կրիչների վրա:

Դիտարկենք այն իրավիճակը, երբ մասնավոր անձն է կատարում խոսակցության ձայնագրություն, լուսանկարահանում կամ տեսանկարահանում: Արդյո՞ք մասնավոր անձի կողմից ապօրինաբար, առանց դատարանի թույլտվության (որը, մեր կարծիքով անիրական է) կատարված ձայնագրություններից ստացված ապացույցները պետք է թույլատրելի համարել քրեական դատավարության ընթացքում: Արդյո՞ք մասնավոր անձի վերոգրյալ գործողությունները կարող ենք համարել մասնավոր կյանքի անձեռնամխելիության իրավունքի նկատմամբ ոտնձգություն: Արդյո՞ք կարող ենք մասնավոր անձին քրեական պատասխանատվության ենթարկել մասնավոր կյանքի անձեռնամխելիությանը ոտնձգելու համար: Հարկ ենք համարում նշել, որ խոսակցությունների ձայնագրման, լուսանկարահանման և տեսանկարահանման արդյունքում ստացված ապացույցները թույլատրելի են ոչ միայն այն ժամանակ, երբ վերջինս կատարվել է ՕՀՄ իրականացնող մարմնի կողմից՝ դատարանի թույլտվության հիման վրա, այլև այն ժամանակ, երբ այն կատարվել է մասնավոր անձի կողմից, սակայն այս դեպքում կան որոշակի հանգամանքներ, որոնք պետք է հաշվի առնվեն: Այս համատեքստում չի կարելի չհամաձայնվել ՀՀ Առաջին ատյանի դատարանի ԱՐԱԴ/0009/01/16 գործով կայացված որոշման հետ, ըստ որի մասնավոր ան-

ձի կողմից կատարված ձայնագրությունը թույլատրելի է այն ժամանակ, երբ այն կատարվել է ձայնագրվողի համաձայնությամբ:

Այս հարցի շուրջ իր տեսակետն է արտահայտել նաև Ա. Ղամբարյանը, ըստ որի, մասնավոր անձի կողմից կատարված գաղտնի ձայնագրությունը պետք է թույլատրելի համարել, քանի որ հիմնական իրավունքների միակ հասցեատերը պետությունն է, հետևաբար մասնավոր անձինք նույնիսկ բացառության կարգով հիմնական իրավունքների հասցեատեր լինել չեն կարող: Միայն ու միայն պետությունն է, որի վրա ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքները որոշակի պարտականություններ են դնում, և հիմնական իրավունքների սուբյեկտները մի միայն պետությունից կարող են պահանջել որոշակի գործողություն կամ անգործություն¹⁰:

Ամփոփելով վերոգրյալը, անձի հիմնարար իրավունք համարվող մասնավոր կյանքի անձեռնամխելիության իրավունքի միջամտության հնարավոր ռիսկերը կանխելու համար առաջարկում ենք փոփոխություններ կատարել ՕՀԳ մասին ՀՀ օրենքում և ՀՀ քր. դատ. օր.-ում՝ բոլոր օպերատիվ հետախուզական միջոցառումների անցկացման և քննչական գործողությունների իրականացման համար որպես պարտադիր պայման նախատեսելով այն հանգամանքը, որ դրա անցկացումը լինի անհրաժեշտ ապացույցների հավաքման միակ եղանակը, և չլինի այլ ճանապարհ այդ նպատակին հասնելու համար:

10. Մասնավոր անձի կատարած գաղտնի տեսագրության կամ ձայնագրության օգտագործման թույլատրելիությունը քրեական և քաղաքացիական դատավարությունում/ Գ. Հովհաննիսյան, Ա. Ղամբարյան, Ա. Սարգսյան.- Եր.: «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» հրատ., էջ 85:

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱԼ

Հայ-ռուսական համալսարանի
իրավունքի տեսության և
սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.դ., պրոֆեսոր,
Սահմանադրական բարեփոխումների
մասնագիտական հանձնաժողովի անդամ

ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱԼ

Եվրոպական համալսարանի իրավաբան,
իրավագիտության ամբիոնի դասախոս, ի.գ.թ.

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԱՐԱՆՉԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ
ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔԻ ԱՉՏՈՒԹՅՈՒՆԸ «ՈՐՈՎԱՅԹ ՓԱՌԱՅ»
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ**

1. Պետության և եկեղեցու սահմանադրական փոխհարաբերությունների ընդհանուր բնութագիրը

1.1. Ընդհանուր դրույթներ:

Ժամանակակից աշխարհում կրոնը շարունակում է մնալ հասարակության գիտակցության վրա ներգործող զորեղ միջոցներից մեկը: Աշխարհիկացման գործընթացները որքան էլ փորձում են կրոնը դուրս մղել հանրային կյանքից, միևնույն է այն շարունակում է մնալ կենսունակ, դեռ ավելին նկատելի են դառնում ապաաշխարհիկացման (desecularization) միտումներ¹: Դա է պատճառը, որ պետությունները կրոնի և կրոնական կազմակերպությունների հանդեպ որդեգրած հարաբերություններին հատկացնում են առանցքային տեղ և նշանակություն՝ ձևավորելով սեփական ուրույն մոդելը: Դոկտրինալ գրականությունում պետության և կրոնական կազմակերպությունների հարաբերակցության բազմաթիվ մոդելներ են շրջանառվում՝ կախված պետական կամ նախապատվելի

կրոնի հռչակման, կրոնի հանդեպ չեզոքության կամ խիստ վերահսկողության և մի շարք այլ հանգամանքներից²: Սակայն կրոնի հանդեպ որդեգրած վերաբերմունքի տեսանկյունից առավել հիմնավոր է թվում պետությունների՝ աստվածապետական, կրոնական (կղերական), աթեիստական և աշխարհիկ մոդելները: Այս տիպաբանությանը կարելի է թերևս ավելացնել կիսաաշխարհիկ կամ կիսակրոնական պետությունը՝ որպես միջանկյալ օղակ աշխարհիկ և կրոնական պետության միջև³:

Ներկայումս պետությունների մեծ մասը համարվում է աշխարհիկ է, այսինքն, լայն հաշվով, կրոնական կազմակերպությունները առանձնացված են պետությունից և երաշխավորվում է յուրաքանչյուրի խղճի և դավանանքի ազատությունը: Այս հանգամանքը ամենևին չի կանխորոշում պետակեղեցական հարաբերություններում անգործություն, կամ պետության կողմից կրոնական կառույցին հատկացվող օժանդակության բացառում⁴: Եթե կրոնական պետություններում կրոնական կա-

1. Տե՛ս P.L. Berger, The Desecularization of the World: Resurgent Religion and World Politics. Front Cover, Ethics and Public Policy Center, 1999, 135 p.
2. Տե՛ս **Мартышин О. В.**, Светское государство, Государство и право, 2018, № 12, с. 104–115.
3. Պետության կիսաաշխարհիկ մոդելը, ըստ էության, նոր գիտական մոտեցում է խնդրո առարկա նյութին առնչվող ուսումնասիրություններում: Այն իր մեջ ներառում է տարրեր և աշխարհիկ և կրոնական պետությունից: Այդպիսի պետություններում (Նորվեգիա, Անգլիա, Դանիա և այլն) մի կողմից երաշխավորվում է խղճի և դավանանքի ազատությունը, մյուս կողմից պետական կառավարման որոշ օղակներում սահմանվում են կրոնական համոզմունքներով պայմանավորված իրավական պահանջներ: Տե՛ս, մանրամասն Վ.Ա. Թորոսյան, Հայաստանի Հանրապետության որպես աշխարհիկ պետության սահմանադրաիրավական բնութագիրը. տեսական-իրավական վերլուծություն, ատենախոսություն, էջ 52:
4. Տե՛ս **Козлова Е.И., Кутафин О.Е.**, Конституционное право России. 4-е изд. М. 2006 с. 170.

ռույցներից մեկը օժտված է պետաիշխանական լիազորություններով և մեծապես ներգործում է պետական կառավարման և հասարակական պատկերացումների վրա, ապա աշխարհիկ պետություններում նման ազդեցությունը բացակայում է: Բացի այդ աշխարհիկ պետություններում՝ ի տարբերություն կրոնապետությունների, կրոնական պատվիրանները չեն հանդիսանում իրավական համակարգի բաղկացուցիչ մաս, և գործում է իրավունքի և կրոնի հստակ տարանջատում:

1.2. Հայաստանի Հանրապետությունը աշխարհիկ, թե՛ կղերական պետություն:

Մեր կողմից բերված տիպաբանության մեջ Հայաստանի Հանրապետությունը դիտարկվում է աշխարհիկ պետությունների շարքին: Թեև ՀՀ Սահմանադրությունը և դրանից բխող օրենսդրությունը երբևէ ուղղակիորեն չեն ամրագրել պետության աշխարհիկ սկզբունքը, այդուհանդերձ ազգային իրավունքի համալիր վերլուծությունը՝ կրոնականության որոշ տարրեր բովանդակելով հանդերձ, մեզ թույլ է տալիս Հայաստանի Հանրապետությունը համարել աշխարհիկ պետություն: Դոմինանտ եկեղեցու առանձնահատուկ կարգավիճակի ամրագրումը, վերջինիս հետ սերտ փոխգործակցության ծավալումը ամենևին հիմք չէ պետությունը որակել կրոնական կամ կիսաաշխարհիկ, քանի որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը, պետական կառավարումը և կրթությունը իրականացվում է աշխարհիկ մոտեցումների հիման վրա՝ այսինքն կրոնական կառույցներն անջատ են պետությունից, կրոնական նորմերը չեն ազդում հանրային իրավական հարաբերությունների վրա, անձի իրավական կարգավիճակի հարցում չկան կրոնական համոզմունքով պայմանավորված արգելքներ և այլն: Մյուս կողմից, սակայն ՀՀ աշխարհիկ պետության մոդելը ամենևին չի ենթադրում, դոմինանտ եկեղեցու որևէ ազդեցության բացառում հանրային իրավահարաբերություններում: Այդ առանձնահատկությունը պայմանավորված է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմական բացառիկ առաքելությամբ և ներկայումս արդեն միայն հոգևոր շեշտադրմամբ

այդ առաքելությունը շարունակական դարձնելու պատրաստականությամբ:

2. Հայաստանի և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու սահմանադրական փոխհարաբերությունները «Որոգայ Փառաց» Սահմանադրության նախագծում

2.1. Ընդհանուր դրույթներ:

Հայաստանի Հանրապետության՝ որպես աշխարհիկ պետության հայեցակարգը հայ իրավագիտության առավել քիչ ուսումնասիրված հարցերից է: Որպես քաղաքակրթական արժեք՝ այն իր ուրույն տեղն ունի ՀՀ սահմանադրական կարգի հիմունքների համակարգում և փոխկապակցված է այդ համակարգի մյուս տարրերի հետ: Աշխարհիկ պետության միջուկը կազմող դավանանքի ազատությունը և պետության և եկեղեցու տարանջատումը ամենևին նորույթ չէ հայ իրականության մեջ: Դեռևս 17-րդ դարի հայ իրավաքաղաքական մտքում այն լավագույնս արտացոլված է Շահամիր Շահամիրյանի Սահմանադրության նախագծում («Որոգայթ փառաց»): Հնդկահայ մտավորականները համակված հայրենակերտության գաղափարներով սահմանադրական մշակույթի նոր ավանդույթներ ներդրեցին, որոնք պահպանում են իրենց արդիականությունը ժամանակի և տարածության մեջ:

Հայկական սահմանադրական մտքի զարգացման համար անգնահատելի է Շահամիր Շահամիրյանի դերը: Նրա գործունեության և ստեղծագործական վերելքի բարձրակետը համարվում է «Որոգայթ Փառաց» իրավաքաղաքական աշխատությունը: Այն ըստ էության հայոց ստեղծվելիք պետության Սահմանադրության նախագիծն է, որը պետք է միսու արյուն ստանար պետականության հաստատման պայմաններում: Թեև անկախության ձեռք բերումը այդ փուլում իրականություն չդարձավ, բայց մեծապես նպաստեց անկախական ձգտումների և իրավաքաղաքական մտքի հարստացմանը: Սահմանադրությունում արտացոլվում են այնպիսի առաջադեմ սկզբունքներ և գաղափարներ, ինչպիսին է ժողովրդաիշխանությունը, պառլամենտարիզմը,

3. Տե՛ս «R. ընդդեմ S.A.B.» գործով Կանադայի գերագույն դատարանի վճիռը, կետ 48:

օրենքի գերակայությունը, համընդհանուր ընտրական իրավունքը, մարդու բնական իրավունքների ճանաչումը, դավանանքի ազատությունը, պետության և եկեղեցու տարանջատումը և այլն: Անշուշտ մտածողի հայացքներում զգալի ազդեցություն ունեցավ լուսավորչական դարաշրջանի բնական իրավունքի հայեցակարգը, որից էլ ծնունդ են առնում աշխարհիկ պետության կարևոր բաղադրիչները: Ջոն Լոկկի, Ջոն Միլթոնի, Ժան Ժակ Ռուսսոյի աշխատությունները⁵ խղճի ազատության, հավատի և կրոնական հանդուրժողականության մասին մեծապես ուղենշեցին հայ տեսաբանների և առաջին հերթին Շահամիր Շահամիրյանի իրավաքաղաքական հայացքները՝ դրանց հաղորդելով բնահրավական շեշտվածություն:

2.2. *Աշխարհիկ պետության հատկանիշները «Որոգայթ Փառացում»*

(Ա) Դավանանքի ազատության իրավունքը: Որոգայթ փառացում կարելի է նշմարել **աշխարհիկ պետության** հայեցակարգի կարեվոր տարրեր, որոնք կարծես մինչ այդ չեն արտացոլվել հայ իրավաքաղաքական մտքում:

Շահամիրյանի իրավաքաղաքական հայացքներում ազատության գաղափարը ընկալվում քրիստոնեական **կամքի ազատության** ուսմունքի դիրքերից, երբ մարդը կարող է կատարել բարի և չար գործեր և հանձն առնել դրանց պատասխանատվությունը: Բոլոր դեպքերում անձը իր գործողություններում պետք է ցուցաբերի չափավորություն, զսպվածություն, լայնախոհություն: Կամքի ազատությունը աշխարհայացք ընտրելու և դրանով առաջնորդվելու առումով ըստ էության նույնանում է **մարդիկ և խղճի ազատության** գաղափարի հետ, ըստ որի «մարդը ազատ է ըստ իր կամքի և հաճույքի մտածել, խոսել և գործել ամենայն բան՝ թե բարի, թե չար՝ համապատասխան հատուցում ստանալով իր մտածումի, իր խոսքի և գործի համար...»⁶:

Շահամիրյանը լինելով առաջադեմ մտավորական նախատեսում է յուրաքանչյուրի **դա-**

վանանքի ազատության իրավունքը: Կրոնական ատելությունն ու թշնամանքը արգելվում են և կոչ է արվում դավանական հանդուրժողականության: Հատկանշական է, որ ազգային փոքրամասնությունները կարող են ազատորեն դավանել ոչ միայն իրենց կրոնը, այլև պահպանել ազգային ավանդույթներն ու սովորույթները, ունենալ սեփական դատավորը, որը իրենց սովորույթների համաձայն կլուծի վեճը՝ բացառությամբ հանցագործությունների, որոնք ընդդատյա են հայոց դատարանին:

(Բ) Պետության և եկեղեցու տարանջատումը: Աշխարհիկ պետության գաղափարին առնչվող մյուս սկզբունքը, որը տեղ է գտել Հայոց սահմանադրության նախագծում **պետությունից եկեղեցու տարանջատումն է**, ըստ որի աշխարհիկ և հոգևոր իշխանությունները ունեն իրենց ինքնուրույնության տիրույթը և չեն միջամտում միմյանց գործերին: Եկեղեցական կանոնախախտումներով զբաղվում է հոգևոր իշխանությունը, իսկ պետական օրենքները գտնվում են աշխարհիկ իշխանության իրավասության ներքո: Օրինակ հողվածներից մեկում եկեղեցում աղմկող և վիճաբանող հոգևորականը եկեղեցու կողմից ենթարկվում է բանադրանքի, իսկ նույն արարքը կատարող աշխարհականի պատիժը (21 օրյա բանտարկություն) արդեն իրականացնում է պետությունը: Պետք է նկատել, որ միմյանց գործերին չխառնվելու սկզբունքից գործում են երկու բացառություններ՝ մասնավորապես, երբ խոսքը գնում է հոգևորական պատգամավորի ընտրության հետ կապված հարցերին, ինչպես նաև ժողովրդի կառավարմանն առնչվող եկեղեցական այն կանոնների, որոնք պետք է հաստատվեն Ավագների խորհրդի կողմից: Պետական և հոգևոր այրերը պետք է գործեն համապատասխանաբար Ավագների խորհրդի և եկեղեցու սահմանած լիազորությունների շրջանակում:

Պետության և եկեղեցու տարանջատման հետ մեկտեղ հեղինակը հատուկ կարգավիճակ է վերապահում Հայ առաքելական եկեղեցուն

5. Стэн Дж. Локк, Опыт о веротерпимости, Сочинения в 3 т.- пер. с англ. и лат. Т. 3, ред. и сост., авт. примеч. А. Л. Субботин. М.: Мысль, 1988; J. Milton, Areopagitica, with a Commentary by Sir Richard C. Jebb and with Supplementary Material, Cambridge at the University Press, 1918; Ж. Ж. Руссо, Об общественном договоре, или Принципы политического Права, Об общественном договоре. Трактаты / Пер. с фр., М.: «КАНОН-пресс», «Кучково поле», 1998.
6. Стэн **Ավագյան Ռ. Հ.**, Հայ իրավական մտքի գանձարան (մ.թ.ա.) Հ. 2, Եր. 2002, էջ 182:

և քրիստոնեական հավատքին: Չորրորդ հոդվածում մասնավորապես ասվում է. «*մեզ համար պարհիվ ենք համարում Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու Աստվածապաշտության կարգը, որը մեզ ավանդվել է մեր սուրբ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներից, որոնցից ծլարձակած ընձյուղը կենդանի է մինչև այժմ և աստվածապաշտության այդ կարգը հավատարմորեն մեզ է ավանդում Աթոռանիստ Վաղարշապատից հայրապետական ծայրագույն աթոռը՝ էջմիածնի լուսափայլ Սուրբ Եկեղեցին, հայոց հայրապետի անսուտ բերանով*»:

2.3. *Կղերապետության հատկանիշները «Որոգայթ Փառացում»*

(Ա) Պետական պաշտոն զբաղեցնելու դավանաբանական ցենզը: Պետության աշխարհիկության մասին ակնարկող վերոհիշյալ նորմերին զուգահեռ նախագծում մեծ թիվ են կազմում կրոնական բովանդակության իրավական նորմերը, աստվածաշնչյան պատվիրաններից բխող պահանջները, որոնք կրոնական շունչ են հաղորդում աշխարհիկ փաստաթղթին: **Քրիստոնեությունը** հեղինակի համար այնպիսի արժեք է, որ դրա ուրացումը հայ մարդու կողմից պատժվում է ոչ ավել ոչ պակաս քան մահապատժով: Սեփական արմատների և հավատքի նկատմամբ պատասխանատվությունն ու հարգանքը հեղինակի իրավամտաճողության շարժիչ ուժն է, նրա ոգին և պատահական չէ, որ մի շարք դեպքերում անհատի իրավասուբյեկտությունը պայմանավորվում է ազգային և կրոնական պատկանելությամբ: Ցանկացած **պետական պաշտոնի** համար անհրաժեշտ է լինել ազգությամբ հայ, առաքելադավան, օժտված բարոյական բարձր հատկանիշներով, ինչպես օրինակ բարեմտությամբ, խոնարհությամբ և այլն: **Այլադավաններին և այլազգիներին** արգելվում է զբաղեցնել պետական պաշտոններ, ունենալ սեփականության իրավունքով պատկանող հողատարածք: Նրանք կարող են օգտվել միայն անշարժ գույքի ժամանակավոր վարձակալությունից: Այս սահմանափակումները կարծում ենք արդարացված է առաջին հերթին ցրված հայության դիրքերը ամրապնդելու, հայկական տարրի գերակայությունը հաստատելու անհրաժեշտությամբ: Ակնհայտ է, որ օտարների բռնի ենթակայության տակ գոյատևող հայությունը պետության ստեղծման օրվանից պետք է զգն

լինել թույլ չտալու պատմության այդ շրջափուլի կրկնությունը: Դա է պատճառը, որ Մադրասի հայ վաճառականությունը Հովսեփ Էմինի, Մովսես Բաղրամյանի, Շահամիր Շահամիրյանի գլխավորությամբ քաջ գիտակցում էին հայկական ինքնության պահպանման կարևորությունը և այդ գործում Հայ առաքելական եկեղեցու և քրիստոնեական գաղափարախոսության առանցքային դերակատարությունը:

(Բ) Պետության նյութական հոգաձույթությունը: Առաքելական եկեղեցու նկատմամբ պետական հոգաձույթությունը արտահայտվում է նրան առատ հողեր ու կալվածքներ հատկանցնելու, ինչպես նաև բոլոր տեսակի հարկային պարտավորություններից ազատելու մեջ: Խորհրդարանում (Հայոց տուն) եկեղեցին ընտրում է իր ներկայացուցչին (հոգևոր տանուտեր), որը Հայոց տան ավագների խորհրդի ավագն է և ի տարբերություն խորհրդարանի մյուս անդամների օժտված է երկու ձայնի իրավունքով: Որպեսզի առարկայական դառնա եկեղեցու փոխանորդի բարձր կարգավիճակը պետք է նկատել, որ բացի նրանից երկու ձայնի իրավունք ունի միայն Հայոց նախարարը՝ որպես բարձրագույն պետական պաշտոնյա: Ավելորդ չէ նշել, որ **հոգևորական պատգամավորը** խորհրդարանում զբաղեցնում է պատվավոր տեղ՝ նստելով նախարարից հետո երկրորդ աստիճանի աթոռին, որին միայն հաջորդում են մյուս պատգամավորները:

(Գ) Կրոնական բաղադրիչը պետական արարողակարգերում: Հատուկ ուշադրության է արժանի արարողակարգային հարցերում կրոնական բաղադրիչի առկայությունը: Դատավորները, բարձրաստիճան գինվորականները, քաղաքային կառավարման պաշտոնյանները, և բազմաթիվ այլ պաշտոնյաներ ընտրվում են պատգամավորներից և պարտավոր են նախքան պաշտոնը ստանձնելը **Սուրբ կրակարանի** վրա հատուկ երդմամբ հավաստել իրենց հայ-քրիստոնյա լինելը, ինչպես նաև հավատարմությունը հայոց պետությանն ու սահմանադրությանը: Ուշագրավ է, որ պաշտոնի ստանձնումը Սուրբ գրքի վրա երդման միակ օրինակը չէ: Վկաների ցուցմունքի արժանահավատությունը ևս Սուրբ կտակարանի վրա երդմամբ է հաստատվում: Ինչ վերաբերում է **կրոնական խորհրդանիշերի** գործածությանը, ապա պետական մետաղադրամների մի երեսին անպայման տպագրվում

է տերունական **սուրբ խաչի նշանը**, իսկ աշխարհիկ իշխանավորների համար սահմանվում է **խաչ կրելու** պարտավորություն: Այս ամենից բացի նախագիծը պարունակում է կրոնական պարտականություններ սահմանող այլ դրույթներ: Այդպիսի սահմանադրական պարտականություն է քրիստոնյաների համար կիրակի օրերին **սուրբ պատարագի** մասնակցելը:

3. Եզրակացություն

Սահմանադրության նախագիծը ի թիվս այլ հարցերի հանգամանորեն քննարկում ամուսնաընտանեկան հարաբերություններին վերաբերող հարցեր, որոնք ևս պարուրված են կրոնական ոգով: Ամուսնությունը՝ Աստծո կողմից հաստատված դաշինքն է կնոջ և տղամարդու միջև: Պատահական չէ, որ ամուսնական պայմանագիրը ամուսինների համար նախատեսում է իմպերատիվ պահանջ՝ պայմանագրի կնքումից վեց շաբաթվա ըն-

թացքում ամուսնանալ Հայ առաքելական եկեղեցու ծեսով, իսկ հետագայում նույն եկեղեցու դավանությամբ մկրտել զավակներին: Հարկ է նշել, որ ժառանգության հարցերում ևս առկա է կրոնական բաղադրիչը, մասնավորապես կտակի օրինակելի ձևը ամբողջովին գրված է կրոնական ոգով: Այս ամենի վերլուծությունը պարզորոշ է դարձնում «Որոգայթ Փառաց» Սահմանադրության նախագծի իրավաքաղաքական արժեքը, այնտեղ ամրագրված առաջադիմական մոտեցումները՝ դավանանքի ազատությունը, պետության և եկեղեցու տարանջատումը և նրանց ինքնուրույնությունը: Այս գաղափարներից զատ՝ նախագիծը պետության և եկեղեցու կապերի ամրապնդման տեսանկյունից բավական լուրջ տեղ է հատկացնում Հայ առաքելական եկեղեցուն և վերջինիս դավանանքին՝ միաժամանակ սահմանափակելով որոշ իրավունքներ կրոնական համոզմունքի հատկանիշներով:

7. Սուրբ գրքի վրա երդումը ժամանակակից աշխարհում առավելապես տարածված է նախագահների պաշտոնը ստանձնելու արարողության ժամանակ: Մի շարք աշխարհիկ պետություններում նախագահները երդմանակալության արարողության ժամանակ երդվում են՝ ձեռքը դրած միայն Մայր օրենքի վրա (Ղրղզստան, Ղազախստան): Ռուսաստանի Դաշնության նախագահները, ավանդույթի համաձայն, երդվում են այդ ձեռքը Սահմանադրության, իսկ ձախը՝ նախագահական իշխանության խորհրդանշանի վրա դրված: ԱՄՆ-ի բոլոր նախագահները՝ որոշ բացառություններով, երդվել են Սուրբ Գրքի վրա: Հատկանշական է, որ Լեհաստանի Սահմանադրության մեջ կա դրույթ, որը թույլատրում է երդման տեքստի վերջում Նախագահին կամավոր հնչեցնել «Եվ Աստված ինձ օգնական» նախադասությունը (130-րդ հոդվ.): Համանման իրավակարգավորում է առկա նաև ԳՖՀ Սահմանադրությունում, որտեղ նույնպես երդման կրոնական հատվածը թողնվում է նախագահի անձնական հայեցողությանը (56-րդ հոդվ.): Հայաստանի Հանրապետությունում նախագահների երդմանակալությունը ավանդույթի ուժով կատարվում է այդ ձեռքը միաժամանակ դրված Սահմանադրության և պետական խորհրդանիշի իմաստ կրող Վեհամոր Ավետարանի վրա: Տե՛ս Թորոսյան Վ. Ա., Հայաստանի Հանրապետության որպես աշխարհիկ պետության սահմանադրաիրավական բնութագիրը. տեսական-իրավական վերլուծություն, ատենախոսություն, էջ 64:

ՎԱՍԹԱՆԳ ԲԱԲԱՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի ինստիտուտի հայցորդ,
 ՀՀ Սոցիալական ապահովության ծառայության՝ Ճամբարակի տարածքային բաժնի պետ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԷՌԻԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետության գործառույթները պետության գործունեության հիմնական ուղղություններն են, որոնց միջոցով պետությունը լուծում է իր առջև դրված խնդիրները և իրագործում իր նպատակները: Հենց գործառույթների մեջ է արտահայտվում պետության էությունը, բնույթը և սոցիալական նշանակությունը:

Պետության ներքին կարևոր գործառույթներից մեկը սոցիալական գործառույթն է՝ Պետության սոցիալական գործառույթի ճանաչումը և սահմանադրորեն ամրագրումը առավել բնորոշ է ազգայնակենտրոն պետական համակարգերին և, թերևս, նրա ներդաշնակ զարգացման, անցյալի, ներկայի ու ապագայի օրգանական միասնությունն ապահովելու գլխավոր երաշխիքն է: Դա պայմանավորված է տեսակի, մարդկային ինքնության պահպանության ու ներդաշնակ զարգացման բնական օրինաչափությամբ: Հաճախ պետության սոցիալական գործառույթը հակադրվում է հասարակության անդամների ազատության ապահովման գործառույթին, որն արդարացված չէ: Ժողովրդավարական ազատությունը ենթադրում է նաև հասարակության անդամի երաշխավորված սոցիալական պաշտպանվածություն, որը մարդկային հասարակության հիմնական բնութագրիչներից է: Քաղաքացիական ազատությունը բնական ազատությունից տարբերվում է հենց նրանով, որ հասարակության մեջ անհատի գործունեությունը չպետք է հակադրվի հասարակության մյուս անդամների ազատության իրավունքին, և քաղաքացիական հասարակությունն իր անդամների

ազատ ինքնադրսևորման ներդաշնակ համակարգ պետք է ունենա: Իսկ վերջինս անհնարին է առանց պետության կողմից հասարակության անդամների երաշխավորված սոցիալական պաշտպանվածության ապահովման: Պետությունը, ստանձնելով պատասխանատվություն անհատի սոցիալական պաշտպանվածության հարցում, առաջին հերթին պետք է մտահոգված լինի բանական էակի ինքնաճանաչման ու ինքնադրսևորման նախադրյալների ապահովմամբ: Սակայն ամենաբարդ խնդիրն այն է, թե որտեղ պետք է սահմանափակվի պետության միջամտությունը հասարակական-տնտեսական հարաբերություններին, որպեսզի, մի կողմից ապահովվի պետության սոցիալական երաշխավորված իրականացումը, մյուս կողմից, այն չխոչընդոտի շուկայական հարաբերությունների բնականոն զարգացմանը: Յուրաքանչյուր երկրում և յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակի համակողմանի գնահատման հիման վրա պետք է ապահովվի այդ հաշվեկշռվածությունը: Աշխարհի դեռ ոչ մի պետություն չափ ու կշեռք չի դրել ասելու՝ թե ինքն այս կամ այն չափով սոցիալական է: Այդ ճանապարհով գնում եմ կամ չեն գնում, պետականորեն այդպիսի գործառույթ ստանձնում կամ չեն ստանձնում: Եթե ստանձնում են, ապա պետության խնդիրն է դառնում ապահովել, մի կողմից՝ սոցիալական պաշտպանվածության երաշխավորված համակարգի ստեղծումը, մյուս կողմից՝ բանական էակի, որպես սոցիալական սուբյեկտի, բնականոն ինքնադրսևորման միջավայրի ստեղծումը²: Պետության սոցիալա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 120 2020

1. Տե՛ս **Радионова Л. М.** Содержание и формы социальной функции государства в современной России, М., 2011. С.87.
 2. Տե՛ս **Հարությունյան Գ.** «Սահմանադրական մշակույթ, պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները» Երևան 2016թ., էջ 183-191:

կան գործառույթը իրենից ներկայացնում է պետության սոցիալական քաղաքականություն: Սոցիալական քաղաքականությունը երկրի ներքին քաղաքականության մի մասն է՝ հանձինս պետական քաղաքականության և այդ քաղաքականությունը իրականացնող պետական կառուցվածքի և այն քաղաքական ուժերի, որոնք ձգտում են լուծել երկրի սոցիալական խնդիրները: Սոցիալական քաղաքականությունը պետության, գործատուների և հասարակական-քաղաքական ու սոցիալական կառույցների այն գործունեությունն է, որն ուղղված է հասարակական կյանքի սոցիալական խնդիրների լուծմանը, նրանց կյանքի պահանջմունքների ապահովմանը, պաշտպանությանը, օգնությանը՝ այդ նպատակների համար օգտագործելով իր հնարավորությունների տակ եղած բոլոր ռեսուրսները: Սոցիալական քաղաքականությունը կոչված է ուսումնասիրելու, ամփոփելու և ի մի բերելու մարդու կյանքի սոցիալական վիճակը, միջոցներ ձեռնարկել, ծրագրեր մշակել դրա բարեփոխման ընթացքն ապահովելու, բացահայտելու նրանում տեղի ունեցող դրական և բացասական փոփոխությունները և կանխատեսումներ անելու դրա հետագա բարելավման համար³:

Հայաստանի Հանրապետությունն իրեն հռչակելով սոցիալական պետություն, ստանձնում է սոցիալական որոշակի քաղաքականություն վարելու պարտավորություն:

Այդ քաղաքականությունը պետք է նպատակամղված լինի Հանրապետության քաղաքացիների սոցիալական նվազագույն կարիքների բավարարմանը: Ընդ որում՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սոցիալական կարիքների բավարարմանն ուղղված միջոցառումները պետությունը պարտավոր է ձեռնարկել ելնելով պետության ներկա հնարավորություններից և այն հաշվով, որ սոցիալական ոլորտում ներդրվող միջոցներն ունենան անընդհատ աճող միտում, այսինքն՝ նվազագույն կարիքների մակարդակը պետք է ունենա իր ժամանակին համապատասխանող մակարդակ և բնականաբար այն պետք է նախորդ

ժամանակի համեմատ բարձր լինի⁴: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար: ՀՀ Սահմանադրության 82-86-րդ հոդվածներում ամրագրված են աշխատանքային պայմանների, սոցիալական ապահովության, արժանապատիվ գոյության և նվազագույն աշխատավարձի, առողջության պահպանության իրավունքները, որոնց բովանդակությունը և ծավալը օրենսդիրը Սահմանադրության ուժով պարտավոր է սահմանել օրենքների միջոցով:

2015 թ. բարեփոխված Սահմանադրության 86-րդ հոդվածում տեղ են գտել պետության քաղաքականության հիմնական նպատակները. օրինակ՝ բնակչության զբաղվածության խթանումը, ծնելիության և բազմազավակության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը: Դրանք անհատի անմիջական իրավական պահանջներ չեն, այլ պարունակում են միայն նպատակներ, ունք պետությունը պետք է իրագործի «հնարավորության շրջանակներում»: Սակայն դա չի նշանակում, որ պետությունը կարող է դրանք անտեսել: Սահմանադրության 87-րդ հոդվածի ուժով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակում պարտավոր են իրագործել այդ նպատակները, և, որպես դրանց իրագործման կարևոր երաշխիք՝ Կառավարությունն այդ մասին Սահմանադրության 156-րդ հոդվածով նախատեսված ամենանյա զեկույցի շրջանակներում տեղեկատվություն է ներկայացնում Ազգային ժողով⁵:

Պետությունն իր սոցիալական գործառույթի իրականացման համատեքստում պետք է մարդու համար սեփական ուժերով իր կենսամակարդակն ապահովելու պայմաններ ստեղծի, վերացնի արգելքներն ու խոչընդոտները: Պետությունն օգնության է գալիս, երբ մարդն ինքնուրույն չի կարող ապահովել նվազագույն կենսամակարդակը: Պետությունը երաշխավորում է կենսաապա-

3. Տե՛ս **Պողոսյան Ս.**, «Սոցիալական քաղաքականություն», ուսումնական ձեռնարկ, Երևան 2010թ. էջ 12-13:

4. Տե՛ս **Պողոսյան Վ.**, «Մարդու իրավունքներ». ուսումնական ձեռնարկ, Երևան 2002թ, էջ 22:

5. Տե՛ս **Պողոսյան Վ., Սարգսյան Ն.** ՀՀ 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016թ., էջ 84-85:

հովման նվազագույն զամբյուղը և նվազագույն բյուջեն⁶: Սոցիալական ոլորտի զարգացման ռազմավարությունը ապահովելու նպատակով մշակվում են սոցիալական հիմնախնդիրները համակարգող ծրագրեր: Ըստ էության՝ այդ ծրագրերը ներառում են տվյալ երկրի հասարակության առջև կոնկրետ ժամանակահատվածում ծառայած հիմնախնդիրները, դրանց լուծման ուղիները, եղանակները և այդ ծրագրերը պետք է հիմնավորվեն համապատասխան նյութական, ֆինանսական և աշխատանքային ռեսուրսներով և ընդգրկեն սոցիալական ոլորտի բազմաթիվ ցուցանիշներ: Սոցիալական քաղաքականության առանցքում պետք է դրվի մարդկային կապիտալը՝ միտված ՀՀ քաղաքացու ներուժի լիարժեք և ամբողջական դրսևորմանը: Հայաստանի Հանրապետությունում սոցիալական քաղաքականության կարևոր ուղղություններն են համարվում **կրթությունը, առողջապահությունը, մշակույթը, բնակարանային կոմունալ տնտեսությունը, սոցիալական պաշտպանությունը և այլն**⁷:

Քաղաքակիրթ հասարակության ողջ պատմության ընթացքում արդիական է համարվում սոցիալական հավասարակշռության հիմնախնդիրը, որի լուծման գործում շատ է կարևորվում բնակչության սոցիալական պաշտպանության դերը: Կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ սոցիալական պաշտպանությանը բնորոշ է էվոլյուցիոն բնույթը: Սոցիալական պաշտպանության պարզագույն ձևերը գոյություն են ունեցել հասարակության զարգացման ամենավաղ փուլերում: Քաղաքակրթությունների զարգացման հետ մեկտեղ՝ սոցիալական պաշտպանության ապահովման գործում սկսել է առավելապես կարևորել պետության դերը: Այսօր սոցիալական պաշտպանությունը յուրաքանչյուր նորմալ գործող պետական համակարգի կարևոր բաղադրիչն է:

Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ ամրագրված է, որ մեր

երկիրը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է: Սոցիալական պետությունը ենթադրում է սոցիալական աշտպանության արդյունավետ գործող համակարգի առկայություն⁸:

Սոցիալական պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության խնդիրը քաղաքացիների սոցիալական իրավունքի լիարժեք ու ամբողջական իրացման պայմանների ստեղծումն է, սոցիալական արդարության սկզբունքի վրա հիմնված՝ **սոցիալական պաշտպանության կարիք ունեցող՝ անմրցունակ խմբերի համար առաջնահերթությունների սահմանումը, իրականացվող ծրագրերի ու մարտցվող ծառայությունների որակի, արդյունավետության ու հասցեականության բարձրացումը, նոր ժամանակակից այլընտրանքային ծառայությունների ներդրումը, բնակչության կա-յուն ու արդյունավետ զբաղվածության ապահովումը, արժանապատիվ աշխատանքի պայմանների ստեղծումը և ոլորտում սոցիալական երաշխիքների համակարգի զարգացումն ու ընդլայնումը**⁹:

Քաղաքացիների բավարար կենսամակարդակի ապահովման նպատակով պետությունը պարտավոր է ստեղծել սոցիալական պաշտպանության արդյունավետ համակարգ, նպաստել տնտեսության զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը, որպեսզի մարդիկ ունենան եկամտի աղբյուր, ստանան սահմանված նվազագույն աշխատավարձից ցածր աշխատավարձ, կենսաթոշակ, կրթաթոշակ, նպաստ կամ սոցիալական այլ օժանդակություն: Անկախ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանից՝ միջազգային իրավական պահանջ է հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրությունը՝ առանց որևէ խտրականության, մարդու արժանապատիվ գոյության համար անհրաժեշտ հնարավորությունների ստեղծումը, իսկ դրանց անբավարարության դեպքում՝ սոցիալական աջակցության տրամադրումը¹⁰: Սոցիալական

6. Տե՛ս ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ, Երևան 2010, խմբագրությամբ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի, էջ 422-423:

7. Տե՛ս ՀՀ կառավարության 19.05.2014թ. N 511-Ա որոշում, էջ 45:

8. Տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի» Սոցիոլոգիա, տնտեսագիտություն, Երևան 2014 N5:

9. Տե՛ս ՀՀ կառավարության 19.05.2014թ. N 511-Ա որոշում, էջ 45-46:

10. Տե՛ս ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ, Երևան 2010, խմբագրությամբ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի, էջ 426:

պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը, Հայաստանի Հանրապետությունում ժողովրդագրական վիճակի բարելավումը: 2014-2016 թթ. ժամանակահատվածում սոցիալական պաշտպանության ոլորտում որպես հիմնական խնդիր է դիտարկվում ոլորտում պետական միջամտությամբ իրականացվող հիմնական ծառայությունների և տրանսֆերտների մակարդակի աճի և դրանց շարունակականության ապահովումը: Ստորև ներկայացվում է սոցիալական պաշտպանության ոլորտի նպատակներն ու խնդիրները ըստ առանձին բնագավառների:

Կենսաթոշակային ապահովության բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է կենսաթոշակի տարիքի անձանց կենսամակարդակի բարձրացումը: Այդ նպատակին հասնելու համար կենսաթոշակային ապահովության բնագավառում որպես հիմնական խնդիրներ են սահմանվել.

ա) բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների և տրամադրվող տրանսֆերտների շարունակականության ապահովումը,

բ) սոցիալական և աշխատանքային կենսաթոշակների գծով կենսաթոշակի հիմնական չափի և ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի բարձրացումը,

գ) շարունակաբար նվազեցնել աղքատությունը կենսաթոշակառուների շրջանում, մեղմել աշխատող բնակչության և կենսաթոշակառուների կենսամակարդակների միջև առկա տարբերությունը,

դ) իրականացնել կենսաթոշակային բարեփոխումներ միջազգային լավագույն փորձին համապատասխան, գործարկելով պարտադիր կուտակային բաղադրիչը:

Սոցիալական ապահովագրության բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է հիվանդության, հղիության և ծննդաբերության և օրենքով սահմանված այլ դեպքերում առաջացած ժամանակավոր անաշխատունակության հետևանքով կորցրած աշխատավարձի (եկամտի), որն անձը ստանում էր կամ կարող էր ստանալ, փոխհատուցումը:

Սոցիալական ապահովագրության բնագավառում որպես հիմնական խնդիր է սահմանվել պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների և տրամադրվող տրանսֆերտների շարունակականության ապահովումը: Սոցիալական ապահովագրության բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է՝

ա) բնակչության առանձին անապահով սոցիալական խմբերի կենսամակարդակի բարձրացումը և աղքատության նվազեցումը,

բ) միայնակ և խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայությունների որակի բարելավումը,

գ) տարեց, անօթևան մարդկանց կյանքի որակի բարձրացումը,

դ) առանձին կատեգորիայի քաղաքացիներին դրամական օգնության և պատվովճարի տրամադրումը,

ե) պետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության առավել հասցեականության և արդյունավետության ապահովումը,

զ) երեխայի ծննդյան միանվագ նպաստի համակարգի զարգացումը, այդ համակարգին ուղղված միջոցների շարունակական ավելացումը, ընտանեկան (մայրական) դրամազլխի ինստիտուտի ներդրումը և կատարելագործումը,

է) ՀՀ կառավարության 26.07.2012 թ. N952-Ն որոշմամբ հաստատված ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման համատեքստում համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների գործարկման ապահովումը:

Զբաղվածության բնագավառում պետական քաղաքականության նպատակն է բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումը, մասնավորապես աշխատաշուկայի լարվածության մեղմումը, աշխատանք փնտրողների, հաշմանդամների շրջանում զբաղվածության մակարդակի բարձրացումը, գործող աշխատատեղերի պահպանումը, գործատուների կողմից նոր աշխատատեղերի ստեղծման խթանումը և այլն:

Հաշմանդամներին աջակցության բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է հաշմանդամների

առավել ինտեգրումը հասարակությանը:

Հաշմանդամներին աջակցության բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

ա) հաշմանդամներին պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովումը, դրանց որակի բարձրացումը և տեսականու ընդլայնումը,

բ) հաշմանդամության սահմանման եվրոպական մոդելի անցումը, որը հնարավորություն կընձեռնի խթանելու հաշմանդամների ինտեգրման գործընթացն ու կընդլայնի սոցիալական ներառման հնարավորությունները: Աշխատանքի և աշխատավարձի կարգավորման բնագավառի պետական քաղաքականության հիմնական նպատակն է աշխատանքի վարձատրության պետական երաշխիքների ապահովումը, աշխատողների իրավունքների օրենսդրական պաշտպանվածության ամրապնդումը, անցումը աշխատանքի վարձատրության միասնական համակարգին և աշխատանքային պայմանների բարելավումը¹¹:

Վերլուծելով ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործող սոցիալական պաշտպանության համակարգը՝ կարելի է առանձնացնել որոշ տարրեր, որոնք բնորոշ են սոցիալական պաշտպանության մոդելներից մի քանիսին: Այդ մոդելների հիմքում ընկած են սոցիալական պաշտպանության համակարգի կազմակերպման և գործառման սկզբունքները:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող սոցիալական աշտպանության պե-

տական քաղաքականության մեջ ներառված են որոշ տարրեր պահպանողական մոդելից, ինչպես օրինակ՝ սոցիալական ապահովագրության իրականացումը կենսաթոշակային ոլորտում, պետական միջոցների ներառումը սոցիալական ապահովության համակարգ (օրինակ՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստի տրամադրում) և այլն: Բացի դրանից երկրում իրականացվող սոցիալական պաշտպանության պետական քաղաքականություն ներառվել են որոշակի տարրեր մնացորդային մոդելից, ինչպես օրինակ՝ սոցիալական աջակցության տրամադրումը բնակչության առավել կարիքավոր խմբերին՝ աղքատներ, հաշմանդամություն ունեցող անձինք և այլն¹²:

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ այսօր Հայաստանի Հանրապետության համար դեռևս բաց է մնում այն հարցը, թե սոցիալական պաշտպանության որ մոդելն առավել նպատակահարմար կլինի երկրի սոցիալական զարգացման համար: Այդ ընտրությամբ է նաև մեծապես պայմանավորված երկրի սոցիալական բարեկեցությունը: Այսպիսով, ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգի հետագա զարգացումը հիմնականում պայմանավորում են սոցիալական պաշտպանության մոդելի ընտրությունը, սոցիալական պաշտպանության հայեցակարգի մշակումը, այդ համատեքստում ոլորտի բարեփոխումներին ուղղված մի շարք ծրագրերը և սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության նպատակադրումների իրագործումը:

11. Տե՛ս ՀՀ 2017-2019 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր (ՄԺԾԾ), Երևան, 2016 թ., էջ 236-240:

12. Տե՛ս **Յարմալյան Մ.**, «Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի և մոդելի ձևավորումը ՀՀ-ում», «Բանբեր Երևանի համալսարանի» Սոցիոլոգիա տնտեսագիտություն, Երևան, 2014 թ. N5, էջ 23-24:

HAYK AVETYAN

Prosecutor of Prosecutor's Office of Kentron and Nork-Marash Administrative District,
Applicant for the Department of Criminal Law, YSU Faculty of Law

TERMINATION OF POWER OF JUDGES OF THE CONSTITUTIONAL COURT

1) The role of constitutional courts and judges

Nowadays, almost in every country governed by the rule of law Constitutional or Supreme courts have huge importance in terms of ensuring constitutionality and major legal principles in the country.

For instance, in the U.S. the Supreme Court has two fundamental functions. On the one hand, it must interpret and expound all congressional enactments brought before it in proper cases. In this respect, its role parallels that of the state courts of final resort in making the decisive interpretation of state law. On the other hand, the Supreme Court has power (superseding that of all other courts) to examine federal and state statutes and executive actions to determine whether they conform to the U.S. Constitution. When the court rules against the constitutionality of a statute or an executive action, its decision can be overcome only if the Constitution is amended or if the court later overrules itself or modifies its previous opinion. The decisions are not confined to the specific cases, but rather are intended to guide legislatures and executive authority; thereby they mold the development of law. Thus, in the U.S. governmental system the Supreme Court potentially wields the highest power¹.

In the Federal Republic of Germany, the Federal Constitutional Court's duty is to ensure

that the Constitution of the Federal Republic of Germany (Grundgesetz – Basic Law) is obeyed. Since its founding in 1951, the Court has helped to secure respect for and effectiveness of Germany's free and democratic basic order. This applies particularly to enforcement of the fundamental rights. All government bodies are obliged to respect the Basic Law. Should any conflict arise in this respect, the jurisdiction of the Federal Constitutional Court may be invoked. **Its decisions are final. All other government institutions are bound by its case-law².**

The functions and the role of the Armenian Constitutional Court are very similar to the German one. Particularly, *constitutional justice shall be administered by the Constitutional Court, ensuring the supremacy of the Constitution³. When administering justice, the Constitutional Court shall be independent and shall abide by only the Constitution⁴.* Besides, the Constitutional Court inter alia *determine the compliance of laws and other legal acts with the Constitution⁵.*

When it comes to the status of judges, the Constitution itself ensures the independence⁶, immunity⁷, and other principles defending judges from an interference of the public authorities.

Considering all these factors, particularly the huge importance of the Constitutional Court and the status of judges, it is explicitly obvious that unless they commit a crime no one can “fire” them from their office. However, can there be exceptions?

1. <https://bit.ly/2KlJdiM> (last visit 30.07.2020).
2. <https://bit.ly/3bRzZN8> (last visit 30.07.2020).
3. Armenian Constitution, art. 167 (1).
4. Armenian Constitution, art. 167 (2).
5. Armenian Constitution, art. 168 (1).
6. Armenian Constitution, art. 164 (1)
7. Ibid.

This is the issue that I am going to explore in this article.

2) *To assign a constitutional referendum or to draft amendment to the Constitution by parliament without the opinion of the Constitutional Court*

According to Armenian Constitution the Constitutional Court, as prescribed by the Law on the Constitutional Court, shall inter alia prior to the adoption of draft amendments to the Constitution, as well as draft legal acts put to referendum, determine the compliance thereof with the Constitution⁸. By this provision it is obvious that the Constitutional Court must check the constitutionality of each and every draft amendment to the Constitution. However, legitimate question is arisen; whether or not they can hear the case related to themselves?

a) *The principle "Nemo iudex in sua causa" = "No one can be judge in his own case".*

The principle that no one can be a judge in his own case belongs to the basic principles of the rule of law. The essence of justice is that it is carried out by a third party unrelated to the case on the basis of personal and substantive independence⁹.

Part 1 of Article 16 of the law of Constitutional court (iudex inhabilis) guarantees the neutrality of judges in the constitutional trial. In many of its decisions, the German Federal Constitutional Court has repeatedly argued that for the suspicion of prejudice against the judges of the Constitutional Court, there should be a **freer process** for judges than in criminal or civil litigation¹⁰.

From this point of view, the exhaustive grounds listed in Part 1 of Article 16 of the law of Constitutional Court must be interpreted in a very

narrow way, considering the specifics of the constitutional proceedings.

One of the reasons is that another judge cannot replace a judge who has been removed from the Constitutional Court, so the result of the case of challenging the judges of the Constitutional Court will be that each successful challenge will reduce the number of judges¹¹.

Therefore, there is a risk that the court staff may be manipulated by challenging judges in a specific case¹². Thus, Part 1 of the Article 16 of the law of Constitutional Court should be purposefully reduced when challenging one or more of the judges clearly hints at such abuse. This is the only way to prevent the functioning of the Constitutional Court from being significantly damaged.

That is why, **in the case of the judges of the Constitutional Court, the general interest in the outcome of the trial is not a suspicion of bias**. This approach considers the fact that decisions are made especially in the case of human rights control and individual application, which, due to the general and abstract nature of the law, refers to an indefinite number of persons and an indefinite number of cases.

For example, the decision of the Constitutional Court on the type of tax applies to each potential taxpayer. If the direct effect of a decision of the Constitutional Court on the tax liabilities of an individual judge is considered a ground for prejudice, the Constitutional Court will not be able to verify the constitutionality of the Tax Code, because all judges will be prejudiced because of their obligation to pay taxes¹³. That is why, in the U.S., federal judges and many state judges rule on the constitutionality of legislative acts setting judicial salaries¹⁴. Which means, that actually the judges decided the issue of their own salaries. In many jurisdictions, **judges have the final say over the limits of judges' power, prerogatives, and jurisdiction**¹⁵. In some states,

8. Armenian Constitution, art. 168 (2).

9. BVerfGE 3, 377, 381; 60, 175, 202 f; 67, 65, 68.

10. BVerfGE 47, 105 (107 f); 73, 330 (335 f.).

11. BVerfGE 43, 126 (128).

12. BVerfGE 35, 171 (173).

13. BVerfGE 2, 296 (297); 11, 1 (3).

14. Ronald E. Weber, Presidential Address, The Quality of State Legislative Representation: A Critical Assessment, p. 609, 610 (J. POL. (1999)).

15. Paul D. Carrington, Judicial Independence and Democratic Accountability in Highest State Courts, p. 79, 97 (LAW &

the power to enforce standards of judicial conduct is vested within the judicial branch¹⁶.

Subsequently, to the question whether the Constitutional Court is authorized to examine issues concerning itself, it is necessary to give a positive answer. The Constitutional Court is the one and only institution that has the right to interpret the norms of the Constitution with the final binding force. As the guardian of the Constitution, the Constitutional Court has the right to comment on the disclaimer of the Constitution, including the constitutional norms concerning the Constitutional Court. Otherwise, it would not be able to check, for example, the compliance of the law on the Constitutional Court with the Constitution, because that law completely concerns himself. However, in practice, the Constitutional Court has repeatedly examined the issue of the constitutionality of the law on the Constitutional Court, and this has not raised any doubts about the impartiality of the judges of the Constitutional Court.

All this refers to the constitutional review process of constitutional amendments. In these proceedings, the Constitutional Court examines the compliance of the provisions enshrined in the draft constitutional amendments exclusively with the unchangeable norms of the Constitution, Articles 1, 2 and 3¹⁷. And since the decision made in this proceeding is also of a principled nature due to the general and abstract nature of the constitutional amendments, the impact of that decision on the judges of the Constitutional Court in relation to their biased attitude is not a cause for suspicion.

b) “Series of judicial instances AD INFINITUM”

And finally, if we insist that the Constitutional Court should not have the right to comment on the constitutional norms concerning itself, then in

any case a court is needed to do so. This necessity derives directly from the principle of the supremacy of the Constitution. Former President of the Federal Republic of Germany Prof. Limbach says, "At the same time with the idea of the principle of the supremacy of the Constitution, constitutional justice was born. From that moment on, the question of how to control the laws, the judicial acts and the actions of the executive branch was in line with the Constitution."¹⁸

If we do not allow the Constitutional Court to examine cases concerning itself, then we must create another instance examining those cases, which will be given that authority by the Constitution. But, at the same time the same question will arise regarding that instance. Should that court have the right to decide on its own? Naturally, this opportunity should be denied, as it will have a preconceived notion if it asks questions about himself. Therefore, we need this one instance, which according to the Constitution will get the right to examine cases on the powers of that previous instance. And again, the same question will arise in connection with this new instance, and we will need a new instance, so on and so forth.

If we do not want any court to consider cases concerning itself, we will necessarily have an endless series of instances. In science, this is called series of judicial instances AD INFINITUM = until infinity¹⁹. Since this is madness, those instances will eventually have to stop somewhere. And the Armenian Constitution, like the constitutions of other countries, has stopped at the Constitutional Court. The Constitutional Court is obliged to check the compliance of the constitutional amendment on the termination of the term of office of the Constitutional Court judges with the unchangeable provisions of the current Constitution.

3) Referendum as a mean of suspension

CONTEMP. PROBS., Summer 1998).

16. Steven Lubet, Judicial Discipline and Judicial Independence, p. 59 (LAW & CONTEMP. PROBS. (Summer 1998)).

17. Armenian Constitution, art. 203.

18. Limbach, Das Bundesverfassungsgericht, p. 16.

19. Vosskuhle, in: von Mangoldt/Klein/Starck, Art. 93 GG, Rn. 175; Benda/Eckart Klein/Oliver Klein, Verfassungsprozessrecht, § 19 Rn. 554, Hillgruber / Goos, Verfassungsprozessrecht, Rn. 159; Hartmann, in: Pieroth / Silberkuhl, § 90 BVerfGG, Rn. 63.

of power of judges

Provided for by Armenian Constitution in the Republic of Armenia, the power belongs to the people. The people exercise their power inter alia through referenda. Indeed, referenda, elections are of huge importance in every democratic society; it is a cornerstone of democracy.

a) Pouvoir Constituent versus Pouvoir Constitué

However, there is a very subtle nuance; it is essential not to confuse a founding of a constitution (**pouvoir constituant**) with a legislator amending a constitution (**pouvoir constitué**)²¹. The people are founding of a constitution (**pouvoir constituant**) **only first time** or **totally changing it**. Amending or partly changing the existing constitution the people are not a founding of a constitution (**pouvoir constituant**) any more, but a legislator amending a constitution (**pouvoir constitué**). Subsequently, the people are duty-bound by Non-Amendable Articles of the Constitution²².

According to the Constitution articles 1, 2, 3 and 203 of the Constitution shall not be subject to amendment. In its turn, the article 1 of the Constitution states that The Republic of Armenia inter alia is a **state governed by the rule of law**. It means that every amendment must be in accordance with the concept of a state governed by the rule of law. This is very broad and multilayer principle, containing many sub-principles. One of the essential principles which derives from the rule of law, is proportionality.

b) Proportionality

The principle of proportionality is pure “product” of German Constitutional Law. It plays a role similar to the American doctrine of due process of law²³. According to the Armenian Constitution the means chosen for restricting

basic rights and freedoms must be **suitable** and **necessary** for achievement of the objective prescribed by the Constitution. The means chosen for restriction must be **commensurate** to the significance of the basic right or freedom being restricted²⁴. Proportionality reasoning is **one + three step process**²⁵.

1. Legitimate aim

Restricting basic rights and freedoms public authority must pursue legitimate aim. For instance, punishment for killing is legitimate, because even state deprives a murderer of his or her freedom, in any case it is because of fighting against crimes, that is why there is legitimating ground for such a punishment. If there is no valid aim, we can stop checking proportionality, because public authority may restrict individuals’ rights and freedoms only for achieving legitimate purpose.

2. Suitable or appropriate measure

Whenever parliament enacts a law impinging on a basic right, the means used must be appropriate to the achievement of a legitimate end. The mean is appropriate if it is feasible or capable to achieve a goal. Chiefly, if police kill disobeying people while dispersing the armed protest, it will be quite appropriate measure, due to the fact that by this mean the police could restore public order. Killing a protestor is suitable for stopping his or her protest.

3. Necessary measure

The means used to achieve a valid purpose must have the least restrictive effect on a constitutional value. In other words, if there is any less intrusive measure to achieve legitimate or valid purpose it is prohibited to use more severe mean than that. This test is applied flexibly and must meet the standard of rationality. It is less than “strict scrutiny” and more than the “minimum rationality” test of American constitutional law.

21. <https://bit.ly/2KY6nSc> (last visit 02.05.2020).

22. Armenian Constitution, art. 203.

23. Donald P. Kommers, The Constitutional Jurisprudence of the Federal Republic of Germany, p. 46, (Duke University Press, Durham and London 1997).

24. Armenian Constitution, art. 78.

25. Donald P. Kommers, The Constitutional Jurisprudence of the Federal Republic of Germany, p. 46, (Duke University Press, Durham and London 1997).

Going back to the previous example, police are able to disperse an armed conflict by many less intrusive measures than killing people, that is why police cannot kill disobeying protestors. It would be suitable but not necessary measure. “Eagle does not catch flies”.

4. Commensurate mean

Finally, the burden on the right must be excessive relative to the benefits secured by the state’s objective. It should be checked that even if there is legitimate aim, suitable and necessary measure is it worthy to burden a person?

To conclude, people acting as a legislator amending a constitution (pouvoir constitué) is duty bound by unchangeable Article 1 of the RA Constitution. As the principle of proportionality is part of the state governed by law enshrined in the Article 1, thus people cannot make unproportionate constitutional amendments. Any amendment will be unconstitutional if it violates the principle of proportionality.

Assuming a scenario, that the parliament decides to terminate the powers of judges of the Constitutional Court by drafting a law or by referendum without sending it to the Constitutional court.

First of all, it must pursue a **legitimate aim**. Legitimate goal can be the implementation the provisions of the current Constitution as soon as possible. That is, for the judges of the Constitutional Court to hold office for no more than 12 years and elect a president from among them for 6 years. It is self-evident that the implementation of constitutional norms is a legitimate goal.

The means chosen to achieve this legitimate goal, the termination of the powers of judges of the Constitutional Court, must be **suitable**; help to achieve that goal. This element is also available, as new judges can only be appointed for 12 years and must elect a president from among themselves.

The chosen measure should also be **necessary**, that is, there should be no less intrusive method to achieve the set goal; a measure that will burden the judges of the Constitutional Court less. And this is where we have a problem. Of course, there is a less-intrusive way to achieve the goal. We will achieve the same goal if, in the case of judges of the Constitutional Court who have been in office for more than 12 years, **we reduce the term of office to 12 years and determine that the powers of the incumbent President of the Constitutional Court are reduced to 6 years**. And that is it. There are judges in the Constitutional Court, whose tenure is 2-3 years old. These people do not hinder the implementation of the new provisions of the current Constitution. By freeing them, we are in no way reaching the goal, because they are not hindering us from achieving that goal.

4) Conclusion

As it has been discussed the process of this kind of law or referendum is unconstitutional. Firstly, the constitutionality of the draft of amendment should be checked in the Constitutional Court in any case. It is so, because it is binding to have final instance, and this final instance is the Constitutional Court. To avoid endless roundabout, it is required to stop somewhere. That is why, there is no way not to send any draft of Constitutional amendment to the Constitutional Court.

Besides, proportionality derives from the principle of state governed by the rule of law and also it is unchangeable provision. Thus, people changing the Constitution are obliged to follow the proportionality. In contrast, the scenario which I have discussed is unproportionate, it violates the principle of proportionality stipulated under Article 78 of RA Constitution. Therefore, it is the second ground of unconstitutionality of the amendment.



ԱՇԽԵՆ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի
ամբիոնի դասախոս

ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆԾԻ ՂԱՂԱՐՄԱՆ ԶԵՎ

Տնտեսական ընկերությունների լուծարման և դադարման հարաբերակցության հարցը ներկայումս հանդիսանում է քաղաքացիական իրավունքի կարևորագույն գիտապրակտիկ խնդիրներից մեկը: Տարբեր տեսաբանների և երկրների օրենսդրությամբ վերջին շրջանում տրվել է այս կամ այն լուծումը, սակայն ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ինչպես նաև հայրենական տեսաբանների կողմից այս խնդիրն ամբողջովին անտեսված է: Խնդիր որի առկայության պայմաններում կարող են առաջանալ մի շարք գործնական ու տեսական հարցեր: Ուստի, սույն ուսումնասիրության շրջանակներում կարևորում ենք անդրադառնալ այս երկու ինստիտուտների հարաբերակցությանը, դրանց էության վերհանմանը, ներկայացնել ՀՀ օրենսդրությամբ չնախատեսված նոր և կարևոր լուծումներ, որոնք, մեր կարծիքով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում արտացոլվելու պարագայում կարող են նպաստել առկա խնդիրների լուծմանը:

Գաղտնիք չէ, որ իրավաբանական անձիք՝ որպես քաղաքացիական շրջանառության ամբողջականության և որոշակիության գործում առանցքային դերակատարում ունեցող սուբյեկտներ, իրենց վախճանը գտնում օրենքով սահմանված կարգով գոյությունը դադարեցնելու միջոցով: Իրավաբանական անձի դադարումը որպես ինքնուրույն իրավական կատեգորիա իրավաբանական անձանց վերաբերող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի¹ (այսուհետ՝ Օրենսգրք) ընդհանուր դրույթներում չի բանաձևվում, այլ այդ եզրույթը միայն հիշատակվում է առանձին իրավական նորմերում: Այս-

պես, Օրենսգրքի 69-րդ հոդվածի 7-րդ կետում նշվում է, որ իրավաբանական անձը համարվում է *լուծարված*, իսկ նրա գոյությունը՝ *դադարած*, պետական գրանցման պահից: Օրենսգրքի 63-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձն այլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերակազմակերպվելիս նրանք համարվում են վերակազմակերպված՝ միացած իրավաբանական անձի գործունեությունը դադարելու վերաբերյալ պետական գրանցման պահից: Իսկ 67-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձի լուծարմամբ իրավաբանական անձի գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու: Պետք է նկատել, որ իրավաբանական անձի գոյության դադարման ներքո ընկալվում է ոչ միայն լուծարումը, այլև այլ դեպքեր ևս²: Օրենսգրքի 1086-րդ հոդվածը, որը կարգավորում է փաստի հատուցման հետևյալ կապված հարաբերությունները իրավաբանական անձի դադարման ներքո միավորում է և՛ միացման ձևով վերակազմակերպումը, և՛ լուծարումը, որպես իրավաբանական անձի դադարման ձևեր: Ասվածը վկայում է, որ իրավաբանական անձի դադարումը չի կարելի նույնացնել միայն դրա լուծարման հետ³: Հետևաբար իրավաբանական անձի դադարման մասին կարելի է խոսել և՛ լուծարման, և՛ միացման ձևով վերակազմակերպման դեպքում, իսկ սույն ուսումնասիրության հետագա շարադրանքում կհիմնավորենք նաև իրավաբանական անձի դադարման այլ ձևերի գոյության առկայությունը և անհրաժեշտությունը

ՕՐԵՆԱԳՐԿԱՆ ՈՒՊՈՑՈՒՆ № 120 2020

1. ՀՀՊՏ 1998.08.10/17(50).

2. St' u Гражданское право: учебник, 5-е изд., перераб. и доп., Том 1 / под ред. А. П. Сергеева, Ю. К. Толстого, М., 2005, с. 162.

3. St' u **Мифтахутдинов Р. Т.** К вопросу о сущности правовой категории «Прекращение юридического лица без преемства». Вестник Пермского университета юридические науки. 2010, №4, с. 127.

և:

Օրենսգրքի 69-րդ հոդվածի 7-րդ կետում իրավաբանական անձի լուծարմանը տրված բնորոշման համատեքստում լուծարումն ընկալվում է որպես գործընթաց կամ էլ բարդ իրավաբանական փաստակազմ, որը ներառում է տարբեր իրավաբանական փաստերի համախումբ: Սակայն իր բնույթով իրավաբանական անձի լուծարումը տնտեսական ընկերությունների պարագայում հանդիսանում է նաև կորպորատիվ իրավահարաբերությունների դադարման հիմք, քանի որ իրավաբանական անձը, լինելով առաջադրված նպատակների իրագործման միջոց, իր ստեղծմամբ առաջացնում է իրավահարաբերություններ, իսկ լուծարմամբ՝ դադարեցնում:

Առաջին հայացքից թվում է, թե լուծարում և դադարում եզրույթները հնարավոր է ընդունել որպես հոմանիշներ, սակայն ելնելով իրավական հետևանքներից իրավաբանական անձը կարող է դադարել վերակազմակերպման, լուծարման, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ ձևերով: Այս երկու ինստիտուտների տարանջատման հիմնական չափանիշը իրավահաջորդության առկայությունը կամ բացակայությունն է⁴:

Պետք է նշել, որ նման պարագայում օրենսդրության մեջ իրավաբանական անձի դադարման հասկացության բանաձևման բացակայությունն առաջացնում է տարրընկալումներ իրավաբանական անձի դադարման էության, դրա ձևերի ու վերջիններիս տարանջատման չափանիշների վերաբերյալ: Վիճելի է մնում նաև այն հարցը, թե արդյոք փաստացի գործունեությունը դադարեցրած իրավաբանական անձն իրավաբանական անձանց պետական գրանցման միասնական գրանցամատյանից վարչական կարգով հանելը համարվում է իրավաբանական անձանց դադարման ինքնուրույն ձև, թե ոչ:

Անդրադառնալով իրավաբանական անձի լուծարումից հետո դրա գույքի բացահայտման հնարավորությանը՝ պետք է նշել, որ գործող իրավակարգավորման պարագայում այս հարցը մնում է բաց: Որպես այս հարցի

լուծման օրինակ գրականության մեջ առաջարկվել է իրավաբանական անձանց համար նախատեսել ժառանգման իրավահարաբերությունների կարգավորման համար նախատեսված նորմերի նման օրինակ իրավակարգավորումներ⁵: ՌԴ քաղաքացիական օրենսգրքում 05.05.2014 թվականին կատարված փոփոխությունների արդյունքում այս խնդիրը ստացել է հետևյալ լուծումը: Այսպես, ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 64-րդ հոդվածի 5.2 կետով նախատեսվել է, որ իրավաբանական անձանց միասնական պետական գրանցամատյանում, ներառյալ նշված իրավաբանական անձին անվճարունակ (սնանկ) ճանաչելով պայմանավորված, իրավաբանական անձին հանելուց հետո, լուծարված իրավաբանական անձի մոտ գույք հայտնաբերելու դեպքում, շահագրգիռ անձը կամ իրավասու պետական մարմինը, իրավունք ունի դիմելու դատարան՝ պահանջելով գտնված գույքը դրա իրավունքը ունեցող անձանց միջև բաշխելու ընթացակարգ նշանակելու համար: Նշված գույքը կարող է նաև լուծարված իրավաբանական անձի պահանջները երրորդ անձանց նկատմամբ, ներառյալ պարտատերերի պահանջների բավարարման հերթականությունը խախտելու արդյունքում առաջացած, որի արդյունքում շահագրգիռ անձը չի ստացել իր պահանջների լրիվ ծավալով բավարարում: Այդ դեպքում դատարանը նշանակում է արբիտրաժային կառավարիչ, որի վրա դրվում է լուծարված իրավաբանական անձի մոտ հայտաբերված գույքը բաշխելու պարտականությունը: Այդ ընթացակարգը նշանակելու դիմումը կարող է ներյակացվել 5 տարվա ընթացքում սկսած այն պահից, երբ իրավաբանական անձանց միասնական պետական գրանցամատյանում գրառում է կատարվել իրավաբանական անձի դադարման վերաբերյալ: Լուծարված իրավաբանական անձի մոտ հայտնաբերված գույքի բաշխման ընթացակարգը սկսվում է այն սկսելու համար անհրաժեշտ միջոցների առկայության և շահագրգիռ անձանց միջև այդ գույքը բաշխելու հնարավորության առկայության դեպքում: Իսկ լուծարված իրավաբանական անձի մոտ հայտ-

4. Տե՛ս **Зенин И. А.** Гражданское право Российской Федерации, М.: Московский международный институт эконометрики, информатики, финансов и права. 2003, с. 33.
5. Տե՛ս **Мифтахутдинов Р. Т.**, նշվ. աշխ., էջ 132:

նաբերված գույքը բաշխվում է օրենսգրքով նախատեսված հերթականությամբ: Մյուս տարբերակը, երբ ՌԴ օրենսդրությամբ հնարավոր է լուծարված իրավաբանական անձի գույքը վերաբաշխելու խնդիր առաջանա, այն դեպքն է, երբ լուծարումն իրականացվել է օրենքով նախատեսված ընթացակարգի խախտմամբ: Այդ պարագայում կարելի է դիմել դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանի գրառումը՝ իրավաբանական անձի դադարման վերաբերյալ: Այդ բողոքարկումը իրականացվում է Արբիտրաժային դատավարական օրենսգրքի 197-201-րդ հոդվածների հիման վրա: Դատարանում պետք է ապացուցվի, որ ընդունված որոշումը խախտում է դիմումատուների իրավունքները: Այսպես, եթե լուծարման միջանկյալ հաշվեկշիռ կազմելու ժամանակ լուծարման հանձնաժողովը իմացել է կոնկրետ պարտատերերի հանդեպ իրավաբանական անձի ունեցած պարտավորությունների մասին, բայց միջոցներ չի ձեռնարկել նրանց ծանուցելու համար, կամ էլ կանխամտածված թաքցրել է այդ փաստը, ապա իրավասու պետական մարմին ներկայացված միջանկյալ լուծարման հաշվեկշիռը համարվում է չներկայացված, քանի որ պարունակում է ոչ հավաստի տեղեկություններ⁶: Լուծարված իրավաբանական անձին սեփականության իրավունքով պատկանող գույքը դրա մասնակիցների միջև բաշխելու հատուկ կարգ նախատեսված է նաև մի շարք եվրոպական երկրների քաղաքացիական օրենսդրությամբ, օրինակ Ֆինլանդիա, Մալթա և այլն:

Այս խնդիրը սերտորեն կապված է իրավաբանական անձի լուծարման դեպքում իրավահաջորդության առկայության կամ բացակայության հարցի լուծման համար: Քանի որ

եթե առաջնորդվենք իրավաբանական անձի լուծարման վերաբերյալ Օրենսգրքի տրված բնորոշմամբ, կարող ենք եզրակացնել, որ իրավահաջորդությունը իրավաբանական անձի լուծարման պարագայում բառացվում է: Այս մոտեցումը կիրառվում է նաև ՀՀ դատարանների կողմից, և ՀՀ դատական պրակտիկայում տեղ է գտնել այն մոտցումը, որ *բաժնետերերի պահանջների բավարարումը կատարվում է լուծարման գործընթացի շրջանակներում և մինչ դրա ավարտը՝ բոլոր պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքի հաշվին*⁷: Սակայն մեր կարծիքով, իրավաբանական անձի լուծարման դեպքում ընդհանրապես իրավահաջորդության բացառումն արդարացված չէ, և օրինակ լուծարումից հետո հայտնաբերված գույքը պետք է դիտարկվի որպես լուծարված իրավաբանական անձի գույքային բաղադրիչի վերականգնման հնարավորություն, սահմանել այդ գույքի իրավական ճակատագրի որոշման կարգ, որից հետո կարելի կլինի փաստել, որ ինչպես իրավաբանական անձն ամբողջապես, այնպես էլ դրա գույքային բաղադրիչը դադարել է⁸: Ուստի, առաջարկում ենք լուծարման հասկացության փոփոխման շրջանակներում փոփոխության ենթարկվի նաև լուծարումից հետո հայտնաբերված գույքի իրավական ճակատագրի որոշման կարգը: Մասնավորապես, անհրաժեշտ է լուծարված իրավաբանական անձին պատկանող գույք հայտաբերելու դեպքում Օրենսգրքում նախատեսել այդ գույքը դրա նկատմամբ իրավունք ունեցող անձանց պահանջով, դատական կարգով նրանց միջև բաշխելու հնարավորություն, ինչը կարծում ենք կլուծի նշված խնդիրը:

Այժմ անդրադառնանք իրավաբանական անձի դադարման և լուծարման հասկացու-

● ՕՐԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 120 2020

6. St' u **Карева И. Д.** К вопросу о возможности взыскания задолженности с прекращающего юридического лица // *Juvenis scientia* 2019 № 6, с. 24-25.

7. Այս մասին առավել մանրամասն տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Ստիխտինգ Ադմինիստրատենկանտոր Ֆայնենշլ Փերֆորմանս Հոլդինգս հիմնադրամն, «Լուքսթոնա Լիմիթեդ» ընկերության, «Յուկոս Ինթերնեյշնլ UK B.V.» ընկերության և Արմեն Միքայելյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Արաբկիրի տարածքային բաժնի, «Նեֆտեննայա կոմպանիա «Ռոսնեֆտ»» ԲԲԸ-ի՝ առջին գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, թիվ ԵԱԲԴ/1494/02/10 քաղաքացիական գործով 14.10. 2011 թվականի որոշումը:

8. Այս խնդրի հետ կապված յուրովի մոտեցում և լուծումներ հայ իրականության մեջ ներկայացվել են պրոֆեսոր Վ. Դ. Ավետիսյանի կողմից, որոնց մասին առավել մանրամասն տե՛ս Վ. Դ. Ավետիսյան Կորպորացիայի լուծարման իրավական առանձնահատկությունները, Օրինականություն գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, 2013, №79, էջ 27-28:

թյունների բանաձևմանը և դրանց հատկանիշներին:

Որոշ հեղինակներ պնդում են, որ իրավաբանական անձի դադարումը փաստ է, գործողությունների հետևանք, իսկ լուծարումը՝ ընթացակարգ, որն ուղղված է իրավաբանական անձի դադարմանը, ընդ որում այդ ընթացակարգը կարող է նաև չավարտվել⁹: Կարծիք կա, որ իրավաբանական անձի դադարումը ուղղակիորեն կապված է դրա իրավասուբյեկտության դադարման հետ: Այսպես, Օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ կետը նախատեսում է, որ իրավաբանական անձի իրավունակությունը դադարում է լուծարման ավարտի պահից: Նման ձևակերպումն առավելապես բնորոշ է իրավաբանական անձի լուծարմանը, քանի որ վերջինիս դեպքում հստակ պատկերացում ունենք այդ ընթացակարգի վերաբերյալ, մասնավորապես, որ լուծարումն ուղղված է իրավաբանական անձի լրիվ դադարմանը, որի դեպքում տեղի չի ունենում ունիվերսալ իրավահաջորդություն: Սակայն մենք չենք կիսում այդ կարծիքը, քանի որ ինքնին «իրավունակություն» հասկացությունը ենթադրում, որ իրավաբանական անձը իրավահարաբերությունների սուբյեկտ է, փոխարենը կարծում ենք, որ իրավաբանական անձը առաջադրված նպատակներին հասնելու միջոց է: Ինչպես արդեն նշել ենք, գործող օրենսդրությունը լուծարումը ներկայացնում է որպես իրավաբանական անձի դադարման ձևերից մեկը, իսկ դադարում եզրույթն ունի ավելի շատ վերացական բնույթ: Սակայն շատ հեղինակներ գտնում են, որ մի շարք դեպքերում անհրաժեշտ է այդ երկու հատկանիշները միմյանցից տարանջատել՝ արդարացիորեն նկատելով, որ թեև տեսության մեջ քննարկվում են լուծարում և վերակազմակերպում ինստիտուտների նմանությունները և տարբերությունները, սակայն օրենսդրության զարգացման ընթացքում այդ երկու ինստիտուտների միջև հստակ տարանջատում մտցնելու փորձ երբևէ չի արվել¹⁰: Սակայն այս պարագայում արդարացի հարց կարող է ծագել այն մասին, թե այդ դեպքում ինչ համարել

լուծարմամբ չընթացող իրավաբանական անձին իրավաբանական անձանց պետական գրանցման միասնական գրանցամատյանից հանելու դեպքը, որի մասին կխոսենք ստորև: Ստորև ավելի մանրամասն կներկայացնենք այդ ինստիտուտի էությունը և այն *Օրենսգրքով նախատեսվելու կարևորությունը, իսկ մինչ այդ արձանագրենք, որ իրավաբանական անձի դադարումը իրավաբանական կարևոր նշանակություն ունեցող ինստիտուտ է, որը հանգեցնում է այդ իրավաբանական անձի մասնակցությամբ առաջացած իրավահարաբերությունների դադարմանը իրավունքներն ու պարտականություններն համընդհանուր իրավահաջորդության կարգով այլ անձի փոխանցելով (նոր իրավաբանական անձ սրբեղծելով) կամ առանց դրա (առանց նոր իրավաբանական անձ սրբեղծելու):*

Օրենսգրքում իրավաբանական անձի դադարման հասկացությունը տրված չէ, ինչը մեր կարծքով էական թերություն է: Օրինակ՝ Ուկրաինայի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության իրավաբանական անձի դադարումը վերտառությամբ 104-րդ հոդվածը սահմանում է, որ իրավաբանական անձը դադարում է վերակազմակերպման (միացում, միաձուլում, բաժանում, վերակազմավորում) կամ լուծարման արդյունքում: Իսկ 105-րդ հոդվածում նախատեսվում են ընդհանուր իրավակարգավորումներ լուծարման և վերակազմակերպման նպատակով իրավաբանական անձի դադարման վերաբերյալ ընդունված որոշման կատարման առջությամբ¹¹: Սա բավականին հետաքրքիր մոտեցում է, որը մեր կարծիքով նույնպես ընդունելի է: Իսկ Մոլդովայի քաղաքացիական օրենսգրքը օգտագործում է իրավաբանական անձի ցրում՝ «розпуск» տերմինը և դրա 223-րդ հոդվածով նախատեսվում է, որ իրավաբանական անձի ցրումը հանգեցնում է դրա լուծարման գործընթացը սկսելուն, բացառությամբ միաձուլման և բաժանման ձևով վերակազմակերպման դեպքերի, երբ իրավաբանական անձն իր գործունեությունը դադարեցվում է առանց

9. St' u **Габов А. В.** Ликвидация юридических лиц: история, развития института в российском праве, современные проблемы и перспективы// СПС «КонсультантПлюс». М.: Статут, 2011, с. 282.

10. St' u **Гражданское право: учебник/ Под ред. А. П. Сергеева, Ю. К. Толстого, М.: Проспект. 2011, с. 249.**

11. <https://meget.kiev.ua/kodeks/grazdanskiy-kodeks/glava-7>(վերջին այցելությունը՝ 18.06.2020 թվական):

լուծարման¹²: Ամփոփելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ Օրենսգիրքը պետք է լրացվի 62.1 հոդվածով, որը կվերաբերի իրավաբանական անձի դադարմանը, կտա դրա հասկացությունը և ձևերը: Ըստ այդմ՝ գտնում ենք, որ 62. 1 հոդվածը կարելի է շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 62.1 Իրավաբանական անձի դադարումը

Իրավաբանական անձի դադարումը իրավաբանական փաստ է, օրենքով նախատեսված իրավաբանական փաստակազմի արդյունք, որը հանգեցնում է այդ իրավաբանական անձի մասնակցությամբ առաջացած իրավահարաբերությունների դադարմանն իրավունքներն ու պարտականություններն համընդհանուր իրավահաջորդության կարգով այլ անձի փոխանցելով (նոր իրավաբանական անձ ստեղծելով) կամ առանց դրա (առանց նոր իրավաբանական անձ ստեղծելու):

Իրավաբանական անձը դադարում է լուծարմամբ, վերակազմակերպմամբ (միաձուլում, միացում, բաժանում) կամ փաստացի դադարած իրավաբանական անձը իրավաբանական անձանց պետական գրանցման միասնական գրանցամատյանից հանելով»:

Վերլուծելով իրավաբանական անձի լուծարմանը Օրենսգրքով տրված հասկացությունը կարող ենք վեր հանել դրա հետևյալ հատկանիշները՝

ա) իրավաբանական անձի լուծարմամբ իրավաբանական անձը դադարում է,

բ) լուծարման ինստիտուտի սուբյեկտ կարող է լինել միայն իրավաբանական անձը,

գ) իրավաբանական անձի լուծարման պարագայում բացառվում է իրավահաջորդությունը (իսկ մեր կողմից առաջարկված փոփոխությունների դեպքում բացառվում է միայն համընդհանուր իրավահաջորդությունը):

Հաշվի առնելով իրավաբանական անձի լուծարման դեպքում իրավահաջորդության բացակայության կամ առկայության վերաբերյալ տարբեր գիտական մետոդումները և մեր

կողմից արված վերլուծությունը առաջարկում ենք իրավաբանական անձի լուծարման հասկացության հետևյալ բանաձևումը, ըստ որի պետք է համապատասխան փոփոխության ենթարկել նաև Օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ի կետը և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Իրավաբանական անձի լուծարումն իրավաբանական անձի գոյության դադարման ձև է, որն իրականացվում է իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների), իրավաբանական անձի իրավասու կառավարման մարմնի (կամավոր լուծարում) կամ դատարանի որոշման հիման վրա (հարկադիր լուծարում) առանց իրավունքներն ու պարտականությունները համընդհանուր իրավահաջորդության կարգով այլ անձի փոխանցելու»:

Այժմ անդրադառնանք միջազգային պրակտիկայում լայն ճանաչում ունեցող իրավաբանական անձի գոյության դադարմամբ ավարտվող, փաստացի չգործող իրավաբանական անձանց լուծարման առանձնահատկություններին: ԱՄՆ-ում գործում է իրավաբանական անձանց դե ֆակտո լուծարման ինստիտուտը, որը մանրամասն կարգավորված է, ինչպես նաև մշակված են մի շարք իրավակարգավորումներ նման ընկերությունների պարտատերերի և այլ անձանց իրավունքների պաշտպանության նպատակով¹³: ԱՄՆ դատական պրակտիկայում մշակվել են մի շարք չափանիշներ, երբ ընկերությունը կարող է համարվել դե ֆակտո լուծարված: Այսպես, Մազուայրի հարկային դատարանը իր վճռում որպես նման չափանիշեր նշել է լուծարվելու ակնհայտ մտադրությունը, կորպորատիվ գործերի դադարեցման մշտական նպատակը, ինչպես նաև կորպորացիայի գործերի դադարեցմանն ուղղված կորպորատիվ գործունեությունը: Ուսունասիրելով այս երեք չափանիշների առկայությունը՝ դատարանը եկել է այն եզրակացության, որ տնօրենների խորհրդի որոշումները, լուծարման պլանի հաստատելը, ակտիվների վաճառքը և նման այլ փաստերը հաստատում են ընկերության դե ֆակտո

12. http://continent-online.com/Document/?doc_id=30397878#pos=2014;-54(վերջին այցելությունը՝ 18.06.2020 թվական):

13. St' u Limites liability entites state-by-state guide tl LLCs, LPs an LLPs, Bradley T Borden, Robert J. Rhee, Volume 1, Wolters Kluwer, 2019, p. 173.

լուծարումը¹⁴: Ինչպես նկատում ենք, ԱՄՆ-ում ընկերության փաստացի լուծարման փաստը հաստատվում է դատարանի կողմից՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ: Նմանատիպ իրավակարգավորումներ նախատեսված են նաև «Ընկերությունների մասին» Կիպրոսի՝ 1951 թվականի օրենքով¹⁵, որի 321-րդ հոդվածով նախատեսված է, որ եթե ընկերությունների պետական գրանցում իրականացնող մարմնի մոտ ողջամիտ կասկածներ են առաջանում, որ տվյալ ընկերությունը չի զբաղվում տնտեսական գործունեությամբ կամ չի գործում, իրավունք ունի սկսել նման ընկերությանը իրավաբանական անձանց գրանցմատյանից հանելու գործընթաց: Նշված մարմինը այդ նպատակով նամակով հարցում է կատարում այդ ընկերությանը պարզելու համար, թե այն տնտեսական գործունեությամբ զբաղվում է, թե ոչ: Եթե այդ նամակը ուղարկելուց մեկ ամիս անց պատասխան չի ստացվում, այդ մարմինը այս անգամ արդեն պաշտոնական նամակ է ուղարկում այդ ընկերությանը և նշում, որ եթե առաջին նամակի պատասխանը չուղարկվի, հաղորդագրություն կտարածվի ընկերությունը գրանցամատյանից հանելու վերաբերյալ: Եթե պետական իրավասու մարմինը պատասխան չի ստանում, կամ ստանում է բացասական պատասխան, ապա նշված հաղորդագրությունը տարածելուց հետո վեց ամիս անց նա իրավունք ունի այդ ընկերությունը հանել գրանցամատյանից: Իսկ ՌԴ քաղաքացիական օրենսգրքով այս ինստիտուտը կոչվում է փաստացի չգործող իրավաբանական անձին իրավաբանական անձանց պետական գրանցման միասնական գրանցամատյանից հանել, որն իրականացվում է արտադատական կարգով:

ՀՀ-ում այս ինստիտուտի որոշակի տարրեր տեղ են գտել 2011 թվականին ընդունված «2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ

չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին»¹⁶ և 2016 թվականին ընդունված համանուն ՀՀ օրենքներում¹⁷: Դրանցից առաջինը տարածվել է այն կազմակերպությունների և անհատ ձեռներեցների վրա, որոնք 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին չեն ներկայացրել որևէ հաշվետվություն, հաշվարկ կամ հայտարարագիր և հարկային մարմնում առկա փաստաթղթերի համաձայն չունեն գույք ու հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ կամ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն չեն վերագրանցվել, չունեն գույք և հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորություններ, իսկ երկրորդ օրենքը տարածվել է այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի վրա, որոնք 2013 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի հունվարի 1-ը հարկային մարմին չեն ներկայացրել որևէ հաշվետվություն, հաշվարկ կամ հայտարարագիր, հարկային մարմնում առկա տեղեկություններով չունեն գույք և 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն պարտավորություններ կամ...¹⁸: Գտնում ենք, որ նույն իրավահարաբերությունների կարգավորման նպատակով ժամանակ առ ժամանակ նույնաբովանդակ օրենք ընդունելը չի բխում քաղաքացիական շրջանառության կանխատեսելիության և կայունության ապահովման շահերից: Իսկ չգործող հատկապես առևտրային իրավաբանական անձանց գոյությունը կարող է խախտել կորպորատիվ իրավահարաբերությունների բնականոն զարգացման ընթացքը, բացի այդ դա չի բխում քաղաքացիական շրջանառության մյուս մաս-

14. St 'u Tax Consequences of de facto liquidations <https://www.thetaxadviser.com/issues/2010/may/taxconsequencesofdefactotoliquidations.html> (վերջին այցելությունը՝ 11.06.2020):

15. Cyprus Companies Law 1951 <http://cypruslaw.narod.ru/> (վերջին այցելությունը՝ 30.08.2020 թվական):

16. ՀՀԳՏ 2011.06.24/39(842):

17. ՀՀԳՏ 2016/95(1275)1:

18. Նշենք, որ <https://www.e-register.am/am/docs/343> կայքում տեղադրված տեղեկությունների համաձայն պետական ռեգիստրի կողմից իրապարակված ցանկում տեղ են գտել 47983 իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր, որոնք ենթական են եղել լուծարման այս պարզեցված կարգով (վերջին այցելությունը՝ 11.06.2020):

նակիցների շահերից, և նպաստում սնանկության հիմքով իրավաբանական անձնաց լուծարման մեծաքանակ վարույթների հարուցմանը: Ուստի ժամանակն է, որ Օրենսգրքով որպես իրավաբանական անձանց հարկադիր դադարման հիմք նախատեսվի փաստացի չգործող իրավաբանական անձանց հաշվառումից հանելը: Սակայն մեր կարծիքով միայն հարկային հաշվետվություններ չներկայացնելը կամ գույք չունենալը բավարար չէ իրավաբանական անձին հարկադիր լուծարելու համար: Պետք է որպես անհրաժեշտ պայման նախատեսել նաև թեկուզև մեկ բանկային հաշվով վերջին 12 ամսվա ընթացքում գործարք չկատարելը:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջադրվում ենք, որ Օրենսգրքը լրացնել 71.1 հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 71.1 Փաստացի դադարած իրավաբանական անձին իրավաբանական անձանց պետական գրանցման միասնական գրանցամատյանից հանելը

1. Իրավաբանական անձը, որը վերջին 12 ամսվա ընթացքում հարկային մարմիններին չի ներկայացրել ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված հարկային հաշվետվությունները, չունի գույք և չի կատարել գործարքներ թեկուզև մեկ բանկային հաշվով համարվում է փաստացի դադարած (չգործող իրավաբանական անձ):

2. Փաստացի դադարած իրավաբանական անձը իրավաբանական անձանց պետական գրանցման միասնական գրանցման մատյանից հանելն իրավաբանական անձի դադարման ինքնուրույն ձև է և չի հանգեցնում լուծարման ընթացակարգ սկսելուն:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված հարկ վճարողների ցանկը հարկային մարմինը յուրաքանչյուր եռամսյակը մեկ ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (այսուհետ՝ պետական ռեգիստր): Այդ ցանկը պետք է պարունակի իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը և հարկ վճարողի հաշվառման համարը:

4. Պետական ռեգիստրը հարկային մարմնի կողմից սույն հոդվածի 3-րդ կետում

նշված ցանկը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների <http://azdarar.am> պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև իր պաշտոնական՝ <http://www.e-register.am> ինտերնետային կայքում:

5. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված ցանկը սահմանված կարգով պետական ռեգիստրի կողմից հրապարակվելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, դրանում ընդգրկված հարկ վճարողների պատասխանատու պաշտոնատար անձինք (տնօրեն, կառավարիչ և այլն) պարտավոր են պետական ռեգիստր ներկայացնել տեղեկանք՝ ֆիզիկական անձանց, կազմակերպությունների, հիմնարկների և պետական կառավարման մարմինների նկատմամբ ստանձնած պարտավորությունների և սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի մասին: Սույն մասով սահմանված ժամկետում պարտավորությունների և գույքի վերաբերյալ տեղեկանք չներկայացնելու դեպքում համարվում է, որ տվյալ հարկ վճարողը պարտավորություն և գույք չունի, իսկ կազմակերպության գործունեության դադարեցումից կամ անհատ ձեռնարկատիրոջը պետական հաշվառումից հանելուց հետո նրանց անվամբ հայտնաբերված գույքի հետ կապված խնդիրները լուծվում են օրենսդրությամբ սահմանված կարգով: Սույն մասով սահմանված ժամկետում հարկ վճարողները կարող են պետական ռեգիստր ներկայացնել գործունեությունը վերսկսելու կամ վերագրանցվելու մասին հայտարարություն, որի ներկայացման դեպքում պետական ռեգիստրը տվյալ հարկ վճարողին հանում է սույն հոդվածի 3-րդ կետում նշված ցանկերից: Սույն մասով սահմանված ժամկետում տվյալ հարկ վճարողները, ինչպես նաև նրանց պարտատերերը կամ այլ պետական կառավարման մարմինները կարող են պետական ռեգիստր ներկայացնել առարկություններ: Սույն մասով սահմանված ժամկետում տեղեկանքի կամ առարկության բացակայության դեպքում պետական ռեգիստրը երեք ամսվա ընթացքում գրանցում է կազմակերպության դադարումը:

6. Եթե սույն հոդվածի 5-րդ կետով

սահմանված ժամկետում սահմանված կարգով պետական ռեզիստրի կողմից հրապարակված ցանկում ընդգրկված հարկ վճարողների պարտատերերից ստացվում է առարկություն, ապա պետական ռեզիստրը

պարտավոր է օրենքով սահմանված կարգով մեկամսյա ժամկետում հայց ներկայացնել դատարան այդ իրավաբանական անձի հարկադիր լուծարման պահանջով:»



ԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության
ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՕՂԵՐԱՏԻՎ ՆԵՐՉՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՇՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Քաղաքացիական հարաբերություններում իրավունքների պաշտպանության ձևերից յուրաքանչյուրն իրեն բնորոշ դերին ու նշանակությանը համահունչ օժտված են որոշակի առանձնահատկություններով: Առանձնահատկությունների և տարբերությունների առկայությունը, սակայն, չի բացառում քաղաքացիական իրավունքների պաշտպանության ձևերի միասնական նպատակի գաղափարը՝ իրավունքների պաշտպանության ապահովումը:

Քաղաքացիաիրավական մտքի դպրոցը չունի ձևավորված միատեսակ մոտեցում իրավունքների ինքնապաշտպանության վերաբերյալ: Ուսումնասիրված իրավական գրականությունը մեզ թույլ է տալիս վերոնշյալ փաստը մեծապես պայմանավորել այն հանգամանքով, որ քաղաքացիաիրավական պաշտպանության այդ ինստիտուտը մշտապես դիտարկվել է մեկ ամբողջական պաշտպանական համակարգի մեջ, և դրա ձևերի բաղադատված ուսումնասիրությունը հաճախ անուշադրության է մատնվել՝ համարվելով ածանցյալ ինստիտուտներ¹: Կարծում ենք՝ մեկ այլ պատճառ է այն, որ իրավագետներն իրավունքի պաշտպանությունը տևական ժամանակ դիտարկել են միայն դատավարական իրավունքի դաշտում, և սակավաթիվ են եղել առանձնահատկությունները նյութական իրավունքի հետ համադրելու փորձերը:

Տեսաբան Մատուզովի կարծիքով ինչպես

իրավունքների ինքնապաշտպանությունն է դասվում իրավունքների պաշտպանության ոչ պետական հարկադրանքի շարքին, այնպես էլ օպերատիվ ներգործության միջոցները²: Հեղինակը շարունակելով հաստատում է նաև այն միտքը, որ իրավունքների պաշտպանության իրականացման համար որևէ էական նշանակություն չունի, թե հարկադրանքը ում կողմից է իրականացվում, եթե պահպանվում են օրենքով սահմանված պայմանները: Հեղինակի կարծիքով, թե իրավունքների ինքնապաշտպանությունը և թե օպերատիվ ներգործության միջոցները կիրառելի են սուբյեկտիվ իրավունքի խախտման առկայության դեպքում: Հեղինակի կողմից քաղաքացիաիրավական ինքնապաշտպանության և օպերատիվ ներգործության միջոցների ինստիտուտների նույնական չափորոշիչներով բնութագրելն արդարացված չենք համարում:

Ըստ քաղաքացիական իրավունքի դոկտորինի՝ օպերատիվ ներգործության միջոցներ են համարվում պաշտպանական բնույթի այն միջոցները, որոնք իրավազոր անձի կողմից կիրառվում են իրավունքները և պարտականությունները խախտողի նկատմամբ, առանց պետական իրավասու մարմիններին դիմելու³: Սովորաբար օպերատիվ ներգործության միջոցները կիրառվում են իրավահարաբերության մասնակիցների կողմից սեփական հայեցողությամբ այն դեպքում, երբ մյուս կողմը չի

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 120 2020

1. Տեն Մկրտչյան Ա., Քաղաքացիական հարաբերություններում իրավունքի ինքնապաշտպանության պայմանները, «Արդարադատություն» գիտական հանդես, գիտական հոդված, Եր. 2019 թ., 2(48):
2. Տեն Матюзов Н. И., Личность. Права. Демократия., Саратов, 1972թ., с. 110.
3. Տեն Բարսեղյան Տ. Կ., Քաղաքացիական իրավունք, դասագիրք, առաջին մաս, ԵՊՀ իրատ., Երևան, 2009 թ., էջ 560:

կատարում կամ ոչ պատշաճ է կատարում իր պարտավորությունները: Ըստ էության, քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության և օպերատիվ ներգործության միջոցների դեպքում իրավահարաբերության վրա ներգործությունն իրականացվում է իրավահարաբերության մասնակիցների կողմից: Վերը նշված երկու ինստիտուտների էությունն էլ բացառում է պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններին դիմելու օբյեկտիվ հնարավորությունը:

Ամբողջությամբ համամիտ ենք տեսաբան Ֆոկովի այն եզրահանգման հետ, որ օպերատիվ ներգործության միջոցները պարտավորությունների պատշաճ կատարման մասնակիցների վրա դրվող լրացուցիչ պարտավորություն է, որի նպատակն է ապահովել վերջիններիս իրավունքների պաշտպանությունը⁴:

Քաղաքացիական իրավունքի տեսական աղբյուրներում անդրադարձեր կատարվում են ինչպես պաշտպանության միջոցներին, այնպես էլ դրանց առանձնահատկություններին: Տեսաբան Գրիբանովը տարբերակում դնելով ներգործության միջոցների և իրավունքների ինքնապաշտպանության միջև՝ հղում է կատարում այն հանգամանքին, որ օպերատիվ ներգործության միջոցներն իրավական վարքագծի արդյունք են՝ ուղղված իրավական կարգավիճակի փոփոխությանը, իսկ ինքնապաշտպանության բուն էությունն իրավահարաբերության մասնակցի փաստացի վարքագծին ուղղված միջամտությունն է⁵: Նա գտնում է, որ օպերատիվ ներգործության միջոցների կիրարկումն ուղղված է իրավական հետևանքների առաջացմանը, որն էլ հնարավորություն է տալիս մտածել դրա միակողմանի գործարք լինելու հանգամանքի մասին⁶: Այն ուղղված է քաղաքացիաիրավական հարաբերություններում իրավական կարգավիճակ փոխելուն⁷:

Իրավագետ Կլեյնը, անդրադարձ կատարելով օպերատիվ ներգործության միջոցներին,

նշում է, որ այն հանդիսանում է իրավունքների պաշտպանության արտադատական միջոց, իսկ ինքնապաշտպանությունը՝ պաշտպանության ձև: Լրացնելով տեսաբանը կարծում է, որ երկու ինստիտուտներն էլ իրականացվում են իրավասու անձի կողմից⁸:

Ցիվիլիստ Կարպովը ևս վերոշարադրյալ կարծիքի համակիրն էր⁹: Տեսական ուսումնասիրությունների արդյունքում նա հանգել էր այն կարծիքին, որ պայմանագրային պարտավորությունների կատարման շրջանակներում իրականացվող գործողությունների բնականոն ընթացքի ապահովման համար, ըստ էության, կիրառվում են օպերատիվ ներգործության միջոցներ, որոնք առաջացնում են նաև իրավական հետևանք:

Տեսաբան Կլեյնի այն պնդումը որ օպերատիվ ներգործության միջոցները իրավունքների պաշտպանության ձև չեն և իրավունքների պաշտպանության միջոցներ են, ևս համամիտ ենք: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները մեզ թույլ են տալիս հիմնավոր կարծելու, որ թե՛ իրավունքների ինքնապաշտպանության և թե՛ օպերատիվ ներգործության միջոցները քաղաքացիական իրավունքների պաշտպանության համակարգի մաս են կազմում: Օպերատիվ ներգործության միջոցներն ամրագրված լինելով օրենքով կամ պայմանագրով՝ կիրառվում են պարտավորական հարաբերությունների կատարումն ապահովելու համար:

Տեսաբան Դիդենկոյի կարծիքով օպերատիվ ներգործության միջոցները պետական հարկադրանքի միջոցներն են, որոնք դասվում են իրավունքների պաշտպանության իրավական ձևերի շարքին, քանի որ դրանք ամրագրված են օրենքով և անխուսափելիորեն առաջացնում են իրավական հետևանքներ պարտավորության կողմերի համար: Հեղինակն իրավունքների ինքնապաշտպանության հետ փոխհարաբերակցությունը դիտարկում է երկու ասպեկտով: Առաջինը՝ երկուսն էլ քա-

4. Տե՛ս **Фоков А. П.**, Гражданское право. Общая и особенная части : учебник / - М. : КНОРУС, 2005թ. էջ 257:
 5. Տե՛ս **Грибанов В. П.**, Пределы осуществления и защиты гражданских прав, моног., М., 2015, с. 107.
 6. Իրավաբան Գրիբանովի կարծիքը տե՛ս **Тархов В. А.**, Гражданское право, уч. пособие, М., 1997, с. 261.
 7. Տե՛ս նույն տեղում:
 8. Տե՛ս **Клейн Н.И.**, гражданское право России, обязательственное право, учебник, 2012, 428 с.
 9. Տե՛ս **Карпов М. С.**, Гражданско-правовые меры оперативного воздействия, моног., 2004.

ղաքացիաիրավական պաշտպանական բնույթի ինստիտուտներ են: Երկրորդ՝ երկուսն էլ իրականացվում են իրավագոր անձի (իրավահարաբերության մասնակցի) կողմից: Վերետնիկովան, զարգացնելով նախորդ տեսաբանի միտքը, ավելացնում է, որ օպերատիվ ներգործության միջոցները պարտավորական հարաբերություններում խախտումների կանխման և վերացման համար կարող են նախատեսվել ինչպես օրենքով, այնպես էլ պայմանագրով¹⁰:

Ինքնապաշտպանությունը, որպես քաղաքացիաիրավական հարաբերություններում պաշտպանության անջատ ինստիտուտ, իրենից ենթադրում է իրավունքի խախտման կանխարգելում, խախտված իրավունքների վերականգնում¹¹: Վերը ասվածը մեզ թույլ է տալիս անել որոշ հետևություններ: Մասնավորապես, ինքնապաշտպանության համար պարտադիր չէ պարտավորական հարաբերությունների առկայությունը քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտների միջև: Ինքնապաշտպանության իրականացման համար բավական է միայն այն հանգամանքը, որ անձը հանդիսանում է քաղաքացիական իրավունքի ինքնապաշտպանության սուբյեկտ:

Տարբերիչ հատկանիշների թվին կարող են դասվել բազմաթիվ գործոններ, այդ թվում՝ նպատակները, փաստացի ձեռնարկված գործողությունների բնույթը կամ հետևանքները: Ինքնապաշտպանության ինստիտուտի տարանջատման համար կարևոր նշանակություն ունի դրա բովանդակության համալիր բացահայտումը, ինչը հնարավորություն կտա հստակ չափորոշիչներով որակել ձեռնարկված գործողությունը որպես ինքնապաշտպանություն:

Կարևոր հատկանիշներ են համարվում նաև՝

✓ Իրականացված արարքի բնույթը:

Արարքի բնույթ ասելով հասկանում ենք դրա իրականացման օրինական հիմքերի առկայությունը կամ բացակայությունը: Այն է՝ քաղաքացիաիրավական պաշտպանության կատարումը ինքնապաշտպանության թույլա-

տրելի սահմաններում և համաչափության շրջանակներում¹²:

✓ Ձեռնարկված գործողության նպատակը: Այն է՝ ինքնապաշտպանվողի մոտ ինքնապաշտպանության մտադրության առկայությունը, այլ ոչ թե արարքի կատարումը իրական նպատակների քողարկման համար: Որպես օրինակ կարող ենք քննարկել ինքնապաշտպանվողի կողմից ինքնապաշտպանության դիմելու անհրաժեշտության բացակայության մասին համոզմունքը, սակայն, այնուամենայնիվ, ինքնապաշտպանության որևէ միջոցի կիրառմանը դիմելը: Այսինքն՝ անձն օգտվելով օրենքով տրված իրավական հնարավորություններից՝ կատարում է իրավահարաբերության բնականոն ընթացքի և ինքնապաշտպանության հետ չկապված գործողություններ՝ առաջացնելով փաստացի բացասական հետևանքներ իրավահարաբերության մյուս մասնակցի համար:

✓ Ինքնապաշտպանության ընտրված միջոցը: Այս հատկանիշի էությունը ձեռնարկված գործողության ինքնապաշտպանական բնույթն է: Իրավունքի պաշտպանությանը միտված ոչ բոլոր ձեռնարկված գործողություններն են, որ դասվում են ինքնապաշտպանության միջոցների շարքին: Օրինակ՝ դատական կարգով իրավունքի հաստատումն ինքնապաշտպանության միջոց համարվել չի կարող, չնայած այն հանգամանքին, որ ծագել է կողմերից մեկի կամքի արտահայտման արդյունքում:

✓ Ինքնապաշտպանվողի և իրավախախտի փոխհարաբերակցությունը:

Ինքնապաշտպանության կարևոր հատկանիշներից է համարվում նաև ինքնապաշտպանության սուբյեկտային կազմը: Ինքնապաշտպանական գործողություններ կարող են ձեռնարկվել այն անձի կողմից, ում իրավունքը խախտվել է, և բացառապես այն անձի նկատմամբ, ով ենթադրյալ իրավախախտն է: Այլ սուբյեկտային կազմի առկայության դեպքում արարքին իրավունքների ինքնապաշտպանության որակումը կլինի ոչ միանշանակ:

10. Տե՛ս **Веретенникова С. Н.**, Меры самозащиты в российском гражданском праве: монография, Екатеринбург, 2004.

11. Տե՛ս **Մկրտչյան Ա.**, Քաղաքացիական հարաբերություններում իրավունքի ինքնապաշտպանության պայմանները, «Արդարադատություն» գիտական հանդես, գիտական հոդված, Եր. 2019, 2(48):

12. Տե՛ս նույն տեղում:

Օպերատիվ ներգործության միջոցների համար, կարծում ենք, միայն քաղաքացիական իրավունքի սուբյեկտ լինելու հանգամանքը ևս բավարար չէ, և անհրաժեշտ են այլ պարտադիր վավերապայմաններ, որոնք թույլ կտան արարքը որակել որպես օպերատիվ ներգործության միջոց: Մեր կարծիքով, այդ վավերապայմանը իրավասու անձանց շրջանակի հստակեցումն է: Օպերատիվ ներգործության միջոցներ կարող են կիրառվել միայն այն դեպքում, երբ քաղաքացիական իրավունքի սուբյեկտները գտնվում են պարտավորական իրավահարաբերությունների մեջ: Այսինքն՝ օպերատիվ ներգործությունը նպատակ ունի պարտավորական հարաբերությունները կարգավորելու կամ կանխելու հետագա չկատարման կամ ոչ պատշաճ կատարման օբյեկտիվ հնարավորությունը:

Քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում ձեռնարկված գործողությունները կարող են համարվել օպերատիվ ներգործության միջոցներ՝

✓ եթե գործողությունն իրականացվում է պարտավորական իրավահարաբերություններին ներազդելու նպատակով,

✓ եթե գործողությունը ձեռնարկվում է պարտավորական իրավահարաբերության մասնակիցների կողմից և

✓ եթե այն իրականացվում է օրենքով ամրագրված միջոցների (տուժանք, երաշխիք, կանխավճար, երաշխավորություն և այլն) օգտագործմամբ:

Ինքնապաշտպանությունը և օպերատիվ ներգործության միջոցներն առանց իրավապահ մարմիններին դիմելու, իրավագոր անձի կողմից իրավախախտի նկատմամբ կիրառվող պաշտպանության բնույթի միջոցներն են:

Ինքնապաշտպանության ինստիտուտն ունի բնութագրիչ առանձնահատկություններ, որոնցով սահմանազատվում է օպերատիվ ներգործության միջոցներից և քաղաքացիաիրավական պաշտպանությունն ապահովող այլ ինստիտուտներից:

Տարբերիչ հատկանիշները հետևյալն են.

- Ինքնապաշտպանությունը քաղաքա-

ցիական իրավունքի մեկ սուբյեկտի՝ տուժողի գործողությունն է՝ ուղղված մեկ այլ սուբյեկտի՝ իրավունքի խախտում թույլ տված անձի նկատմամբ:

- Ինքնապաշտպանությունը անձի կամ քի օբյեկտիվ դրսևորումն է իրավաչափ վարքագծի շրջանակներում:

- Ինքնապաշտպանության հիմնական նպատակը ոչ թե իրավական հետևանքի առաջացումն է կամ իրավահարաբերությունների փոփոխությունը, այլ փաստացի գործողությունների ձեռնարկմամբ իրավունքի վերականգնումը, իրավական կարգավիճակի շտկումը¹³:

Ելնելով վերոգրյալից՝ առանձնացրել ենք օպերատիվ ներգործության միջոցների բնութագրիչներից հետևյալները.

- Օպերատիվ ներգործության միջոցները պաշտպանական բնույթի գործողություններ են, որոնք կիրառվում են առկա պարտավորական հարաբերությունների բնականոն ընթացքի ապահովման կամ ընթացքի վերականգնման համար:

- Օպերատիվ ներգործության իրացման իրավաչափ հնարավորությունը պատկանում է պարտավորական հարաբերություններին կողմ հանդիսացող անձանց:

- Այդ գործողություններն ուղղված են իրավասու անձի իրավունքները և պարտականությունները խախտողի նկատմամբ:

- Օպերատիվ ներգործության միջոցների շրջանակը պայմանավորված է օրենքում կամ պայմանագրում ամրագրված լինելու հանգամանքով:

Ասվածը հիմք է տալիս ենթադրելու, որ քննարկվող երկու հարակից ինստիտուտներն ունեն նմանություններ, որոնք այդ ինստիտուտներին դարձնում են պաշտպանական համակարգի ամբողջության տարրեր: Այնուամենայիվ, վերոգրյալ հատկանիշները թույլ են տալիս նաև ընդգծել դրանց միջև եղած տարբերությունները: Քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցները կարող են ունենալ նույնական հատկանիշներ և ունեն միևնույն նպատակը, սակայն դրանք նույնական չեն, և ինքնապաշտպանության, օպերա-

13. Տե՛ս Մկրտչյան Ա., Քաղաքացիական հարաբերություններում իրավունքի ինքնապաշտպանության պայմանները, «Արդարադատություն» գիտական հանդես, գիտական հոդված, Եր. 2019թ., 2(48):

տիվ ներգործության տարբերիչ հատկանիշները վկայում են այդ մասին:

Անդրադարձ կատարելով օրենսդրությամբ ամրագրված պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներին՝ պետք է նշել, որ դրանք, ըստ էության, ունեն նույնական նպատակներ, ինչ ինքնապաշտպանության ինստիտուտը, սակայն դրանք առանձին կարգավորումներով տեղ են գտել քաղաքացիական օրենսգրքում և այնուամենայնիվ օժտված են որոշ տիպային առանձնահատկություններով: Դրանց բնույթի հիմնական նմանությունները հիմնավորում ենք հետևյալով. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 368-րդ հոդվածի 1-ին կետը թվարկելով պարտավորությունների կատարման ապահովման եղանակները՝ նշում է, որ դրանք ուղղված են պարտավորությունների կատարումն ապահովելուն: Դրույթը նաև ամրագրում է, որ օրենքով կամ պայմանագրով կարող են սահմանվել պարտավորությունների կատարումն ապահովող այլ եղանակներ: Կարծում ենք, որ պարտավորությունների կատարումն ապահովող եղանակներն ամբողջովին տեղավորվում են օպերատիվ ներգործության միջոցների տրամաբանության մեջ:

Մեր այս տեսակետի հիմնավորում են ծառայել պրոֆեսորներ Կլեյնի, Բրագինսկու, Կարպովի պնդումները:

Օպերատիվ ներգործության միջոցները տեսական աղբյուրներում նկարագրելիս իրավունքների պաշտպանության նպատակի մատնանշման հետ զուգահեռ խոսվում է նաև դրանց պարտավորական հարաբերությունների շրջանակներում կիրառելիության մասին¹⁴:

Ամփոփելով գալիս ենք այն եզրահանգման, որ ինքնապաշտպանությունը որպես պաշտպանության ձև օժտված է անկանխատեսելիության տարրով (գործողության հետևանքի նկատմամբ փաստացի ընկալումով): Ինքնապաշտպանական գործողությունները պայմանավորված են բացառապես իրավունքով և իրավահարաբերության մասնակցի սուբյեկտիվ իրավունքի իրացմամբ:

Ինչ վերաբերում է օպերատիվ ներգործության միջոցներին, ցանկանում ենք նշել, որ

կանխատեսելիության հանգամանքը այստեղ գերակշռում է: Իրավահարաբերության մասնակիցը, պայմանագրային պարտավորություններից կամ օրենքի դրույթներից ելնելով, օբյեկտիվ հնարավորություն ունի ենթադրություններ անելու վրա հասնող իրավական հետևանքների մասին: Այդ մասին վառ վկայություն են հանդիսանում պարտավորությունների կատարումն ապահովող միջոցները: Այսպիսով, կարծում ենք, որ քաղաքացիաիրավական պաշտպանության համակարգի ինստիտուտներ հանդիսացող իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտի և օպերատիվ ներգործության միջոցների տարբերությունն ակնհայտ է դառնում դրանց կիրառման պայմանների վեր հանման պարագայում:

Մեր կարծիքով, քաղաքացիաիրավական պաշտպանության եղանակ հանդիսացող օպերատիվ ներգործության միջոցների կիրառումը պայմանավորվում է բացառապես պարտավորական հարաբերությունների առկայությամբ և օրենքով կամ պայմանագրով ամրագրված լինելու հանգամանքով: Մինչդեռ, քաղաքացիաիրավական ինքնապաշտպանության դեպքում կիրառման ինստիտուտների և փաստացի կատարվող իրավաչափ գործողությունների սահմանափակումներ իրավական տեսանկյունից առկա չեն:

Կարևոր ենք համարում ընդգծել նաև այն հանգամանքը, որ օպերատիվ ներգործության միջոցները, պաշտպանական համակարգի եղանակների շարքին դասվելով, ներառում են պարտավորությունների կատարման ապահովմանն ուղղված եղանակները: Ըստ էության, առանց պարտավորությունների կատարման ապահովման եղանակների, օպերատիվ ներգործության միջոցները չենք կարող համարել ինքնաբավ քաղաքացիաիրավական ինստիտուտ: Համեմատական պրիզմայով դիտելու դեպքում միանգամայն հիմնավոր կարող ենք պնդել, որ քաղաքացիաիրավական պաշտպանության ձև հանդիսացող իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտն առավել լայն իրավական երևույթ է, որի կիրառելիության սահմանափակումները զգալիորեն նվազ են:

14. Տե՛ս **Грибанов В. П.** Пределы применения мер оперативного характера при поставках продукции//Советская юстиция. 1968թ., N 4. с. 4., **Брагинский М.И., Витрянский В. В.**, Договорное право. Общие положения. М., 2002, с. 702.

ԱՐԹՈՒՐ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

**ՆՈՐ ԵՐԼԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Քաղաքացիական դատավարության իրավունքի տեսության մեջ հանգամանքը «նոր երևան եկած» ճանաչելու համար այն պետք է ունենա որոշակի հատկանիշներ: Դրանք են՝ քաղաքացիական գործի համար փաստերի էական լինելը, օբյեկտիվ իրականությունում մինչ վերջնական դատական ակտ կայացնելը դրանց գոյություն ունենալը, քաղաքացիական դատավարության իրավահարաբերությունների սուբյեկտներին դրանց հայտնի չլինելը՝ նրանցից անկախ հանգամանքներով, հայտնի չլինելու պատճառով գործով վարույթի պահին դրանց հաշվի չառնելը, ինչպես նաև այն, որ դրանք դիմումատուի կողմից ի հայտ են բերվում միայն դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո¹:

Ելնելով վերը թվարկված հատկանիշներից, քաղաքացիական դատավարության իրավունքի դոկտրինում մի շարք դատավարագետներ փորձել են տալ «նոր երևան եկած հանգամանքներ» հասկացության ձևակերպումը:

Ըստ Գ. Լ. Օսկինայի և Մ. Կ. Տրեուշնիկովի՝ նոր երևան եկած հանգամանքները դատական ակտը օրինական ուժի մեջ մտնելուց

հետո ի հայտ եկած այն իրավաբանական փաստերն են, որոնք գոյություն են ունեցել գործի քննության պահին և ունեն էական նշանակություն, դատական ակտը կայացնելիս հաշվի չեն առնվել, քանի որ հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց և դատարանին՝ նրանցից անկախ պատճառներով²:

Տ. Տ. Ալիևի կարծիքով նոր երևան եկած հանգամանքները իրավաբանական փաստեր են օբյեկտիվ իրականության մեջ, քաղաքացիական գործով ձևավորում են ապացուցման առարկան, նրա օրինական և հիմնավորված լուծման համար ունեն էական նշանակություն, գործի քննության պահին հայտնի չեն եղել դիմումատուին և դատարանին³:

Սահմանադրական դատարանն ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման ինստիտուտի, այդ թվում՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով որպես մարդու խախտված իրավունքներ ՀՀ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 18-րդ և 19-րդ (գործող Սահմանադրության 61-րդ և 63-րդ) հոդվածներին համապատասխան արդար և արդյունավետ դատաքննությամբ վերականգ-

1. Տե՛ս **Морозова Л. С.** Пересмотр решений по вновь открывшимся обстоятельствам. М., Госюриздат, 1959, с. 26-27, **Резуненко А. Н.** Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Автореф. дисс. канд. юрид. наук. Саратов, 2001, с. 37-41, **Алиев Т. Т., Громов Н. А.** Влияние вновь открывшихся обстоятельств на законность и обоснованность решения суда // Законность. 2004, № 2, Решетникова И.В. Новации в регулировании пересмотра судебных актов по вновь открывшимся обстоятельствам // Закон. 2008, №4.
2. Տե՛ս **Осокина Г. Л.** Гражданский процесс. Особенная часть. М., Норма, 2010, с. 734, **Треушников М. К.** Гражданский процесс. М., Городец, 2010, էջ 578. Гражданский процесс. Учебник. Под ред. М.К. Треушникова. 5-е изд., перераб. и доп. М., Статут, 2014, с. 688.
3. Տե՛ս **Алиев Т. Т.** Производство по пересмотру судебных постановлений ввиду вновь открывшихся обстоятельств в гражданском судопроизводстве: Теоретические и практические аспекты, перспективы развития: Автореф. дисс. докт. юрид. наук. Саратов, 2005, с. 11.

ներու բացառիկ արդարադատական միջոցի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, դրա միակերպ ընկալման ու կիրառման խնդիրներին հանգամանորեն անդրադարձել է իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-701, ՍԴՈ-709, ՍԴՈ-751, ՍԴՈ-758, ՍԴՈ-765, ՍԴՈ-767, ՍԴՈ-833, ՍԴՈ-872, ՍԴՈ-935, ՍԴՈ-1049, ՍԴՈ-1114 և այլն): Դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումները, ելնելով գործով քննության առարկա իրավակարգավորման շրջանակներից, հանգել է ելակետային նշանակություն ունեցող հետևյալ եզրահանգումներին.

- նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումն իրավական լուրջ երաշխիք է անձի խախտված իրավունքները վերականգնելու, դատական սխալներն ուղղելու և գործով ճշմարտությունը բացահայտելու ուղղությամբ,

- այդ հանգամանքներն իրենց բնույթով այնպիսին են, որ, չնայած օբյեկտիվորեն գոյություն են ունեցել գործով վերջնական դատական ակտի կայացման պահին, սակայն հայտնի չէին և(կամ) չէին կարող հայտնի լինել թե՛ գործին մասնակցող անձանց և թե՛ դատարանին, կամ հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, կամ որոշ դեպքերում (<< քաղ. դատ. օր-ի 204.32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ, գործող ՔԴՕ 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ)՝ նորահայտ են,

- իրավասու անձի կողմից որպես նոր երևան եկած հանգամանքներ դատարան ներկայացված հիմնավորումները (տեղեկությունները, փաստարկները) առիթ են ուժի մեջ մտած դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը պատշաճ իրավական ընթացակարգով ուսումնասիրելու և իրավական անհրաժեշտ հիմնավորումների (ապացույցների) առկայության (այդ հանգամանքները որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող գնահատվելու) դեպքում հիմք են դատական ակտը վերանայելու (բեկանելու և գործն իրավասու դատարանի նոր քննությանն ուղարկելու) համար, այսինքն՝ այդպիսի քննության շրջանակներում իրավասու դատարանը նաև պետք է որոշի, թե

որքանով են ներկայացված հանգամանքներն ազդել քննության առարկա գործի ելքի վրա և ինչպես պետք է վերականգնվեն անձի հնարավոր խախտված իրավունքները,

- դատավարական (քրեական, քաղաքացիական) օրենսդրությամբ օբյեկտիվորեն սահմանված չէ որպես «նոր երևան եկած» գնահատելի հանգամանք հանդիսացող փաստարկների, տեղեկությունների, ապացույցների սպառիչ անվանական ցանկը, ինչը յուրաքանչյուր գործով շահագրգիռ անձի կողմից այդպիսիք ներկայացվելու դեպքում դատարանի գնահատման (որոշման) խնդիրն է, միաժամանակ, օրենսդրության խնդիրն է չբացառել որպես «նոր երևան եկած» իրավաբանորեն գնահատելի որևէ հանգամանքի՝ իրավասու դատարանում քննության հնարավորությունը, եթե դրա՝ դատական ակտի հիմքում օբյեկտիվորեն հաշվի չառնելը հանգեցրել է անիրավաչափ, անհիմն որոշման կայացմանը, հետևաբար՝ նաև անձի իրավունքների խախտմանը,

- ուժի մեջ մտած դատական ակտը՝ վկայակոչված այս կամ այն (նախապես հայտնի կամ անհայտ) հանգամանքի հիմքով վերանայելու անհրաժեշտության իրավական հիմնավորման (ապացուցման) պարտականությունը կրում է այդպիսի վերանայում նախաձեռնած անձը,

- ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը նոր երևան եկած հանգամանքներով կատարվում է դատավարական համապատասխան ընթացակարգով, որի շրջանակներում իրավասու դատարանը կոչված է լուծելու արդարադատական հետևյալ հիմնական խնդիրները. գործով կայացված որոշման հիմքում չարտացոլված և նոր երևան եկած փաստական հանգամանքների (ապացույցների) ուսումնասիրում, իրավագնահատում և իրավական վեճի լուծման համար օրենսդրության համապատասխան նորմերի ընտրություն, դրանց մեկնաբանում ու կիրառում, որոնց հաջորդում են պարտադիր իրավական հետևանքներ, այդ թվում՝ անձի իրավունքների պաշտպանության հետ կապված:

Նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի սահմանադրականության վերաբերյալ վերոհիշյալ գործերով դատաքննությունների

շրջանակներում ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի ուսումնասիրումը նույնպես վկայում է ներպետական արդարադատական գործընթացներում վերոշարադրյալ չափորոշիչների կիրառման անհրաժեշտությունը յուրաքանչյուր դեպքում, երբ բավարար հիմքեր կան նոր երևան եկած հանգամանքներով «գործի վերաքննություն» նախաձեռնելու համար: Մասնավորապես, ՄԻԵԴ-ն իր մի շարք որոշումներով վերահաստատել է, որ այն հանգամանքները, որոնք արդեն իսկ առկա են դատաքննության ժամանակ, սակայն որևէ պատճառով չեն ներկայացվել դատարան և հայտնի են դարձել միայն դատավարությունից հետո, համարվում են «նոր երևան եկած»: Դատարանի ակտն ուժը կորցրած ճանաչելու պահանջով դիմած անձը պետք է ցույց տա, որ ապացույցն անհնար է եղել ներկայացնել վերջնական նիստի ժամանակ, և այդ ապացույցն ունի որոշիչ նշանակություն (Xheraj v. Albania, application no. 37959/02, §53-54, Yerogova v. Russia, application no. 77478/01, §33, Maltseva v. Russia, application no. 76676/01, §33, Kumkin and others v. Russia, application no. 73294/01, § 31):

Մեկ այլ գործով անդրադառնալով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման գործընթացի իրավական կարևորության խնդիրն, ՄԻԵԴ-ն արձանագրել է. «... գործի նորոգումը նոր երևան եկած հանգամանքների հիման վրա ինքնին չի հակասում իրավական որոշակիության սկզբունքին այնքանով, որքանով այն օգտագործվում է արդարադատության սխալներն ուղղելու համար: Դատարանի խնդիրն է պարզել. արդյո՞ք ընթացակարգը կիրառվել է այնպես, որ համահունչ լինի 6-րդ հոդվածի 1-ին պարագրաֆին (Case of Kuznetsova v. Russia, Application no. 67579/01, see Pravednaya, cited above, §28):

Եվրոպական միության անդամ հանդիսացող մի շարք պետություններում նոր երևան եկած հանգամանքների հիման վրա գործի նորոգման վերաբերյալ ներպետական առկա իրավակարգավորումների ուսումնասիրությունը, մասնավորապես՝ վարչադատավարական գործընթացներում, վկայում է, որ ի թիվս այլնի, որպես «նոր երևան եկած» հանգամանք են որակվում գործի քննության ժամանակ գոյու-

թյուն ունեցող էական այն փաստերը, ապացույցները, որոնք հայտնի չեն եղել դատարանին և կարող էին հանգեցնել բոլորովին այլ որոշման, եթե հայտնի լինեին:

Վերահաստատելով նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակության, դրա միակերպ ընկալման ու կիրառելիության սկզբունքների վերաբերյալ իր նախորդ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ հիմնված նաև եվրոպական իրավահամակարգում ներդրված համապատասխան չափորոշիչների համակողմանի ուսումնասիրման վրա, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է այդ ինստիտուտի սահմանադրաիրավական կարևորությունն արդարադատական տարբեր, այդ թվում՝ վարչադատական գործընթացներում՝ ուղղված արդար, արդյունավետ և մատչելի դատաքննության միջոցով անձի իրավունքների պաշտպանության ապահովման երաշխավորմանը⁴:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՔԴՕ) 418-րդ հոդվածի համաձայն նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝

1) բողոք բերած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները գոյություն են ունեցել գործի լուծման պահին, հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին ու դատարանին, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն:

Ըստ պրոֆեսոր Ռ. Պետրոսյանի՝ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների տակ պետք է հասկանալ այն փաստերը, որոնք՝ ա) էական նշանակություն ունեն կողմերի միջև եղած իրավահարաբերությունների որակման համար, բ) գոյություն են ունեցել գործի քննության պահին, գ) հայտնի չեն եղել գործին մասնակցող անձանց կամ հայտնի են եղել, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, դ) կայացվել է այլ վճիռ, քան կկայացվեր, եթե դրանք տրամադրված լինեին գործն ըստ էության քննող դատարանին: Նոր երևան եկած այդ-

4. Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 26.06.2015թ. ՍԴՈ-1222 որոշումը:

պիսի փաստի տիպական օրինակ է ըստ օրենքի ժառանգների միջև ժառանգական գույքը բաժանելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ժառանգներից մեկի օգտին կազմված կտակը հայտնաբերելը: Հնարավոր է նաև, որ, օրինակ, ըստ օրենքի ժառանգը տեղյակ լինել կտակի գոյության մասին, բայց այն դատարան ներկայացնելու հնարավորություն չունենար, եթե գտնվել է երկարատև գործուղման մեջ, ասենք՝ արտասահմանում, կալանքի տակ, երկարատև ստացիոնար բուժման մեջ և այլն ու գործը մյուս ժառանգների միջև ծագած վեճով քննված լինի նրա բացակայությամբ կամ նրա բաժին գույքը մյուս ժառանգներին զիջելու մասին նրա համաձայնությունը կեղծված լինի վեճի քննությանը մասնակցող ժառանգների կողմից, որոնք հայտարարել են, որ ուրիշ ժառանգներ, բացի իրենցից, չկան⁵: Պրոֆեսոր Ռ. Պետրոսյանի տեսակետի հետ մենք լիովին համաձայն ենք:

Նախկին ՔԴՕ 204.32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված էր նաև դրույթ այն մասին, որ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան: Այս դրույթը գործող ՔԴՕ-ով նախատեսված չէ, որը, մեր կարծիքով, համարվում է էական բացթողում, հաշվի առնելով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման այս փուլի կարևորությունը:

Վճռաբեկ դատարանի կողմից վերը նշված նորմի տառացի մեկնաբանության արդյունքում կատարված վերլուծությունից հետևում է, որ դատական ակտի վերանայման համար հանգամանքը որպես նոր երևան եկած որակելու համար անհրաժեշտ է նախ, որ այդ հանգամանքը օբյեկտիվորեն գոյություն ունեցած լինի մինչ վերանայման ենթակա դատական ակտի կայացման պահը, երկրորդ, որ հանգամանքը ներկայացված չլինի դատական ակտը կայացրած դատարանին (կամ այդ հանգամանքը գործին մասնակցող անձին հայտնի չլինելու կամ այդ հանգամանքները

հայտնի լինելու իրավիճակում գործին մասնակցող անձից անկախ պատճառներով դատարան չներկայացվելու հիմքով) և երրորդ՝ այդ հանգամանքը գործի լուծման համար պետք է ունենա էական նշանակություն⁶:

Վերը նշվածների հիման վրա առաջարկում ենք ՔԴՕ 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում կատարել լրացում, այն շարադրելով հետևյալ կերպ.

«Հոդված 418. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմքերը

1. բողոք բերած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները գոյություն են ունեցել գործի լուծման պահին, հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին ու դատարանին կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն»:

Մեր կարծիքով այս առաջարկը կնպաստի դատական պաշտպանության իրավունքի առավել ամբողջական իրականացմանը, կբարձրացնի արդարադատության արդյունավետությունը, և որ ամենակարևորն է մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանության տեսանկյունից՝ ոչ մի անօրինական կամ չհիմնավորված վճիռ չի իրագործվի կյանքում (կյանքի չի կոչվի):

Վճռաբեկ դատարանն իրավամբ արձանագրում է, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, հետևաբար՝ նոր երևան եկած հանգամանքի էական լինելը յուրաքանչյուր գործով որոշելիս դատարանները պետք է հաշվի առնեն վերանայվող գործի բոլոր փաստերը և պարզեն, թե արդյո՞ք այդ հանգամանքներն իրենց բնույթով ազդում են վերանայվող գործի ելքի վրա⁷:

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ վկայի սուտ ցուցմունքները, փորձագետի ակնհայտ կեղծ

5. Տե՛ս Պետրոսյան Ռ. Գ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, չորրորդ հրատ., Երևան, Ոսկան Երևանցի, 2012, էջ 540:

6. Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 26.06.2009թ. քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0771/02/08 որոշումը:

7. Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 13.03.2009թ. քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2397/02 որոշումը:

եզրակացությունը, թարգմանչի ակնհայտ սխալ թարգմանությունը, գրավոր կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը հանգեցրել են ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն: Ըստ որում, նշված բոլոր հիմքերը պետք է հաստատված լինեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով,

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ բողոք բերած անձ չհանդիսացող գործին մասնակցող անձինք կամ նրանց ներկայացուցիչները կատարել են գործի քննության հետ կապված հանցավոր արարք, որը հանգեցրել է ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն, կամ գործի քննության հետ կապված հանցավոր արարքը կատարել է դատավորը:

Թվարկված հիմքերը նույնպես պետք է հաստատված լինեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով, բայց, ի տարբերություն վերը նշված կեղծիքների, սրանք՝ որպես նոր երևան եկած հանգամանքներ, վճիռների և որոշումների բեկանման անվերապահ հիմք են:

Քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված որոշակի արարքների և դրանք կատարած անձանց վերաբերյալ փաստերն այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն (ՔԴՕ 61-րդ հոդվ. 3-րդ մաս):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի (գործող ՔԴՕ 61-րդ հոդվ. 3-րդ մասի) իմաստով, օրինական ուժի մեջ մտած դատավճիռը նախադատելի (պրեյյուդիցիալ) նշանակություն ունի միայն հանցագործության քաղաքացիական հետևանքներին վերաբերող քաղաքացիական գործ քննող դատարանի համար՝ հետևյալ շրջանակներում.

1. կատարվել են արդյոք որոշակի գործողություններ (հանցագործության օբյեկտիվ կողմը),

2. արդյո՞ք այդ գործողությունները կատարվել են տվյալ անձի կողմից:

Այլ հարցերով դատավճիռը քաղաքա-

ցիական դատավարության կարգով քննվող գործով պարտադիր չէ: Օրինակ՝ դատավճռով հաստատված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, ինչպես նաև այդ վնասի հատուցման պահանջի առկայությունը կամ բացակայությունը նախադատելի չէ և այդ հարցը ենթակա է ապացուցման ընդհանուր հիմունքներով, չնայած որ դրանք հաստատված են դատավճռով⁸:

«Հ սահմանդրական դատարանը, գնահատելով նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի արդյունավետությունն ու գործունակությունը, կարևորում է «դատական ակտի վերանայման վարույթ», «դատական ակտի վերանայում» հասկացությունների սահմանադրաիրավական բովանդակության, ինչպես նաև «դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու» և «դատական ակտը վերանայելու» դատավարական փուլերից յուրաքանչյուրի խնդրի ճշգրիտ ընկալումը, դրանց շրջանակներում առաջադրվող և լուծման ենթակա հարցերի շրջանակը՝ կարևորելով նաև դատական պրակտիկայում ոչ միայն «նոր երևան եկած հանգամանքներ» հասկացության, այլև այդ հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման, այսինքն՝ անձի խախտված իրավունքների վերականգնման ընթացակարգային կանոնների միակերպ ընկալման անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-984 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում գնահատել է վերոհիշյալ հասկացությունների սահմանադրաիրավական բովանդակությունը և դատավարական փուլերի իրավակարգավորիչ նշանակությունը՝ ելնելով նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման դատավարական գործընթացների արդյունավետության և, հատկապես՝ մարդու սուբյեկտիվ իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովման տեսանկյունից: Հետևաբար, հիմք ընդունելով նոր հանգամանքների և նոր երևան եկած հանգամանքների հիմքերով դատական ակտերի վերանայման ինստի-

8. Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 05.09.2007թ. քաղաքացիական գործ թիվ 3-1091(ՎԴ) և 19.10.2012թ. քաղաքացիական գործ թիվ 2-3/2004 որոշումները:

տուտների սկզբունքային որոշ ընդհանրությունները՝ որպես օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու բացառիկ միջոցներ, և գնահատելով այդ ինստիտուտները որպես մարդու խախտված իրավունքները գործող Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին համապատասխան արդար և արդյունավետ դատաքննությամբ վերականգնելու կարևոր երաշխիք, սահմանադրական դատարանը գտնում է, որ 2011 թվականի ՍԴՈ-984 որոշմամբ, ինչպես նաև այդ հիմնախնդրի վերաբերյալ սահմանադրական դատարանի մի շարք այլ որոշումներով (ՍԴՈ-701, ՍԴՈ-709, ՍԴՈ-751, ՍԴՈ-758, ՍԴՈ-765, ՍԴՈ-767, ՍԴՈ-833, ՍԴՈ-872 և այլն) արտահայտված իրավական դիրքորոշումներն այնքանով, որքանով առնչվում են նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման՝ սույն գործով քննության առարկա գործող իրավակարգավորումներին, կիրառելի են նաև բոլոր գործերով⁹:

Սահմանադրական դատարանն իր 15.07.2011 թ. ՍԴՈ-984 որոշման մեջ արձանագրում է, որ այդ դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով ապահովվում է խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը: Խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (*restitutio in integrum*): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում: Այսինքն՝ խախտված իրավունքի վերականգնումը հնարավոր է ապահովել համապատասխան դատական ակտի իրավական ուժը կորցնելու դեպքում: Հետևաբար, դատական ակտի վերանայման վարույթը՝ որպես անձի

խախտված սահմանադրական իրավունքի վերականգնման միջոց, պետք է հանգեցնի իրավունքը խախտած դատական ակտի իրավաբանական ուժը կորցնելուն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը միջազգային իրավունքի հանրաճանաչ *restitutio in integrum* սկզբունքի բովանդակությունը բացահայտել է իր Պապամիկալոպոսուս ընդդեմ Հունաստանի գործով 1995թ. հոկտեմբերի 31-ի վճռում (*Papamichalopoulos v. Greece*), որի 34-րդ կետում դատարանը, մասնավորապես նշել է. «Վճիռը, որով Դատարանն արձանագրել է իրավունքի խախտում, Պատասխանող պետությանը պարտավորեցնում է վերջ տալ իրավախախտմանը և դրա հետևանքների դիմաց հատուցել այնպես, որ հնարավորինս վերականգնվի մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը»: Եվրոպական դատարանի այս վճռում արտահայտված *restitutio in integrum* սկզբունքը հետագայում իր արտացոլումը գտավ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերաքննության կամ վերաբացման մասին R (2000)2 հանձնարարականում: Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հիշյալ հանձնարարականում որպես *restitutio in integrum* սկզբունքի արդյունավետ երաշխավորման միջոց մատնանշվում է գործի վերաքննությունը, նոր քննությունը, իսկ որպես **գործի վերաքննության հատուկ միջոց է դիտարկվում գործի նորոգումը, այն է՝ գործի վարույթի վերաբացումը:**

Հիմք ընդունելով խախտված իրավունքների վերականգնման ինստիտուտի վերոհիշյալ բովանդակությունը, ինչպես նաև *restitutio in integrum* սկզբունքի բովանդակությունն ու այդ սկզբունքի երաշխավորմանն ուղղված՝ Նախարարների կոմիտեի նշված հանձնարարականի վերլուծությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքի հիմքով «դատական ակտի վերանայում» եզրույթն իր բովանդակությամբ ըստ էության համարժեք է «գործի նորոգում», «գործի վարույթի վերաբացում» եզրույթների բովանդակությանը, և

9. Տե՛ս << սահմանադրական դատարանի 28.09.2012թ. ՍԴՈ-1049 որոշումը:

դատական ակտի վերանայում հասկացության նշված ընկալումն էլ պետք է կանխորոշի վերանայման վարույթի բովանդակությունը, ծավալը, շրջանակները, խնդիրները և դրա շրջանակներում լուծման ենթակա հարցերը: Ըստ այդմ, դատական ակտի վերանայման վարույթի, նույնն է, թե գործի նորոգման վարույթի շրջանակներում պետք է ձեռնարկվեն այնպիսի միջոցառումներ, որոնք անհրաժեշտության դեպքում կապահովեն նաև գործի վերաքննություն այն ծավալով, ինչը հնարավոր է միայն հակասահմանադրական նորմ կիրառած և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բեկանման և անձի խախտված իրավունքով պայմանավորված՝ դատական ակտի՝ համապատասխան մասով (կամ ամբողջությամբ) վերանայման պայմաններում: Վերանայման ինստիտուտը կարող է ծառայել իր նպատակին միայն այն դեպքում, երբ ապահովվի տվյալ գործի նորոգում՝ կիրառված կոնկրետ նորմի հակասահմանադրականության կոնկրետ փաստի ճանաչման պայմաններում և շրջանակներում: Հաշվի առնելով միջազգային իրավական մոտեցումները՝ սահ-

մանադրական դատարանը գտնում է նաև, որ չնայած գործի նորոգման ինստիտուտը քրեական և քաղաքացիական վարույթներում ունի իր առանձնահատկությունները, այդուհանդերձ, դրանց սահմանադրաիրավական բովանդակությունը մեկ նպատակ է հետապնդում երաշխավորել անձի սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությունը:

Այսպիսով, նոր երևան եկած հանգամանքները այն իրավաբանական փաստերն են, որոք գոյություն ունեն գործի քննության պահին և դրա լուծման համար ունեն էական նշանակություն, հայտնի չեն եղել կամ չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց և գործը քննող դատարանին կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան: Այս և վերը բերված բոլոր հիմնավորումների ընկալումը կոնկրետ գործերի քննությունն իրականացնող դատարաններին հնարավորություն կտա ճիշտ մեկնաբանել և ճիշտ կիրառել քաղաքացիական դատավարության քննարկվող բացառիկ ինստիտուտը:



ԱՆԺԵԼԱ ՏՈՆՈՅԱԼ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի
Տեխնիկական առարկաների ամբիոնի դասախոս,
ոստիկանության մայր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ ՀՀ-ՈՒՄ

Մարդկության ձևավորման սկզբից աշխատանքն ու աշխատանքային հարաբերությունները գտնվել են մարդկության ուշադրության կենտրոնում: Հասարակական կյանքի վերափոխման հետ միասին ընդարձակվել են մարդկանց պահանջմունքները և, դրան զուգահեռ, աճել է աշխատանքի դերն ու նշանակությունը: Աշխատանքը որպես մարդու գոյապահպանման և զարգացման միջոց, ունի սոցիալ-տնտեսական էություն: Այդ է պատճառը, որ մարդու իրավունքների շարքում այն համարվում է սոցիալ-տնտեսական իրավունք:

Իրավունքի տեսությունից հայտնի է, որ իրավունքի ճյուղի կարգավորման առարկան համարվում են որոշակի համասեռ խումբ հասարակական հարաբերությունները: Դրանք առաջանում են քաղաքացիներին օրենքով վերապահված տարբեր իրավունքների ու ազատությունների իրականացման կապակցությամբ: Իրավունքի յուրաքանչյուր ճյուղի ինքնուրույնության առաջնային պայմանը իրավական կարգավորման առանձին առարկա ունենալու հանգամանք է, ինչը թույլ է տալիս իրավունքի տվյալ ճյուղը տարբերել հասարակական հարաբերություններ կարգավորող իրավունքի մյուս ճյուղերից: Ընդհանուր բնորոշմամբ աշխատանքային իրավունքի կարգավորման առարկան հասարակական այն հարաբերություններն են, որոնք ծագում են մարդկանց աշխատանքային գործունեության ընթացքում¹:

Քաղաքացիների ու կազմակերպությունների միջև ծագող հասարակական փոխհարաբերությունները, իրենց բազում ընդհանրությունների շնորհիվ, բավականաչափ նման

են միմյանց: Դա պատճառաբանվում է հասարակական հարաբերությունների փոխկապվածության հանգամանքով: Եթե նկատի ունենանք այն, որ միևնույն աշխատանքը (օրինակ՝ կենցաղային նշանակության իրեր պատրաստելը, արհեստ ուսուցանելը, կենդանիներ վարժեցնելը և այլն) մի դեպքում կարող են հանդիսանալ աշխատանքային իրավունքի, մյուս դեպքում՝ իրավունքի այլ ճյուղերի կարգավորման առարկա, ապա միանգամայն պարզ է դառնում աշխատանքային իրավահարաբերությունները հասարակական մյուս հարաբերություններից սահմանազատելու հիմք հանդիսացող միջոցների բացահայտման անհրաժեշտությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ աշխատանքային իրավահարաբերությունների շրջանակի ընդլայնման զուգահեռ մեծանում է նրանց իրավական կարգավորման ոլորտը, այսինքն ստացվում է, որ գործունեության բնույթով պայմանավորված, միայն աշխատանքային օրենսդրության շրջանակում համակարգը կարգավորելն անհնար է դառնում:

Աշխատանքը մարդու արժանավայել կյանքի միակ և անփոխարինելի պայմանն է, միաժամանակ նրա իրավունքն ու պարտականությունը: Այս իրավունքն իր ամրագրումն է ստացել ինչպես ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ, այնպես էլ աշխարհի շատ երկրների սահմանադրություններում: Պատճառն այն է, որ աշխատանքի իրավունքը ոչ պակաս կարևոր է, քան մարդու կյանքի իրավունքը, որովհետև եթե չկա կյանք առանց գոյության միջոցների, ապա առանց աշխատանքի չեն կարող լինել գոյության միջոցներ: Ավելին, աշխատանքի

● ՕՐԵՆՍԴՐԱՎՈՒԹՅՈՒՆ № 120 2020

1. Տես **Խրոպայնյուկ Վ.Ն.**: Պետության և իրավունքի տեսություն. Եր., «ԳՈՇ», 1997, էջ 346:

իրավունքի իրականացումը և աշխատանքի արդարացի պայմանները կարևոր նշանակություն ունեն հասարակական հարաբերությունների ներդաշնակության և սոցիալական խաղաղության ամրապնդման համար²:

Աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող դրույթները նախևառաջ ամրագրված են ՀՀ Սահմանադրության մեջ, իսկ աշխատանքի (աշխատանքի ազատ ընտրության) իրավունքի իրականացման գործընթացը կարգավորվում է ՀՀ իրավունքի միասնական համակարգի կարևոր ճյուղերից մեկի՝ աշխատանքային իրավունքի նորմերով:

ՀՀ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են նաև ՀՀ միջազգային պայմանագրերով, որոնց նշանակությունը, էլ ավելի է կարևորվում միջազգային ինտեգրացիոն գործընթացների մեջ ՀՀ ներգրավվելու կապակցությամբ: Այդպիսի փաստաթղթեր են Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագիրը (ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի 217 Ա III բանաձևով), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային Դաշնագիրը (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի 2200 Ա XXI բանաձևով) և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային Դաշնագիրը (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի 2200 Ա XXI բանաձևով): Դրանց համապատասխան էլ տարբեր երկրների միջև կնքվում են աշխատանքային հարաբերություններ կարգավորող միջպետական պայմանագրերն ու համաձայնագրերը:

Հիմք ընդունելով մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային հանրաճանաչ ակտերի դրույթները՝ ՀՀ Սահմանադրությունը հռչակում է, որ յուրաքանչյուր քաղաքացի ունի աշխատանքի ընտրության ազատություն: Հիմնական օրենքը սահմանում է նաև, որ յուրաքանչյուր ոք ունի արդարացի և պետության կողմից սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, անվտանգության և հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների, առավելագույն սահմանափակման, ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք³:

Աշխատանքային իրավահարաբերությունների իրավական կարգավորումը տարբեր է եղել կախված երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական վիճակից: 1920-ականներից մինչև 1991 թվականները ԽՍՀՄ-ը կառուցում էր բանվորների ու գյուղացիների առաջին պետությունը, որտեղ մասնավոր ձեռնարկատիրությամբ զբաղվելը երբեմն քրեորեն պատժելի էր: 1991 թ. ձեռք բերելով անկախություն՝

ՀՀ շարունակեց գործել ըստ ՀԽՍՀ օրենքների, որոնք աստիճանաբար փոխարինվում էին նոր օրենքներով: Մինչ 2005 թ. աշխատանքային հարաբերությունները Հայաստանում կանոնակարգվում էին 1972 թ. ընդունված ՀԽՍՀ աշխատանքային օրենսգրքով և նույնիսկ 2005 թվականին ընդունված աշխատանքային օրենսգրքը պահպանեց սոցիալիստական մոտեցումները և մինչ այժմ պարունակում է տարրեր, որոնք օժտում են աշխատակիցներին նվազագույն վճարովի արձակուրդի, նվազագույն աշխատավարձի, աշխատանքային գրաֆիկի և այլ երաշխիքներով⁴:

Աշխատանքային իրավունքը ՀՀ իրավական համակարգի ինքնուրույն ճյուղ է, որն իրենից ներկայացնում է այն իրավանորմերի ամբողջությունը, որոնք կարգավորում են քաղաքացիների աշխատանքի (աշխատանքի ազատ ընտրության) իրավունքի իրականացման կապակցությամբ աշխատանքային պայմանագրի հիման վրա ծագող, փոփոխվող և դադարող հասարակական հարաբերությունները:

ՀՀ գործող աշխատանքային օրենսգրքը բաղկացած է ընդհանուր և հատուկ մասերից: Ընդհանուր մասի իրավանորմերը սահմանում են աշխատանքային օրենսդրության կազմը, կառուցվածքը, աշխատողի հիմնական իրավունքներն ու պարտականությունները և այլն: Հատուկ մասի նորմերը կոչված են կարգավորելու առավել նեղ շրջանակի հարցեր, որոնք

3. Տե՛ս **Պետրոսյան Գևորգ Վոլոդյայի**, Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունք: Ընդհանուր մաս / Երևանի պետ. հասալս. - Եր.: ԵՊՀ. հրատ., 2009 - 336 էջ:

4. Տե՛ս **Օսիպյան Ռուբեն**, Աշխատանքային, թե քաղաքացիաիրավական պայմանագրեր, հոդված հրապարակված 01.08.2019 թ.:

վերաբերում են աշխատանքային իրավահարաբերության առանձին ոլորտների:

Ներկայումս, ՀՀ գործող աշխատանքային օրենսգիրքը բավարար չափով կարգավորում է աշխատանքային իրավահարաբերությունները, սակայն քիչ չեն օրենսդրական բացերը և այլ իրավական ակտերին հղումները, որոնք էական շփոթմունք են առաջացնում այն աշխատող քաղաքացիների համար, որոնք չունեն բավարար չափով իրավաբանական գիտելիքներ: Փաստացի, աշխատանք կատարելը միշտ էլ, որ կարգավորվում է աշխատանքային օրենսդրությամբ, օրինակ՝ անձը կարող է քաղաքացիաիրավական պայմանագիր կնքել աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման իրականացման համար: Այս դեպքում առաջացող իրավահարաբերությունը կկարգավորվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

Աշխատանքային իրավունքն առավել սերտորեն առնչվում է քաղաքացիական իրավունքին: Հետևաբար, բնական է, որ քաղաքացիական իրավունքի մի շարք կարևոր սկզբունքներ, այդ թվում՝ կողմերի իրավահավասարության, կամքի ինքնավարության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին կամայական միջամտության անթույլատրելիության և խախտված իրավունքների վերականգնման ապահովման սկզբունքները, որոշ աննշան շեղումներով, գործում են նաև աշխատանքային իրավունքում:

ՀՀ պետական համակարգում աշխատանքային իրավահարաբերությունները կազմակերպվում են «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով: Վերջինս կարգավորում է ՀՀ քաղաքացիական ծառայության կազմակերպման, քաղաքացիական ծառայության պաշտոնների դասակարգման, քաղաքացիական ծառայության պաշտոնների համալրման, քաղաքացիական ծառայողների կատարողականի գնահատման, վերապատրաստման, քաղաքացիական ծառայողի իրավական վիճակի, պաշտոնից ազատման, ծառայության դադարեցման, ինչպես նաև քաղաքացիական ծառայության՝ որպես պե-

տական ծառայության առանձին տեսակի հետ կապված այլ հարաբերություններ:

Աշխատանքային իրավունքի նորմերը խաչվում են նաև վարչական իրավունքին: Իրավունքի այդ ճյուղերի կապը դրսևորվում է մի քանի կողմերով: Նրանց կապվածությունը հատկապես արտահայտվում է աշխատանքային իրավունքի այն նորմերում, որոնք սահմանում են պետական և հասարակական մարմինների (պետական սանիտարական հսկողության մարմինների, աշխատանքի պետական տեսչության) իրավասությունը՝ վարչական պատասխանատվության ենթարկելու նախաձեռնությամբ հանդես գալու աշխատանքային օրենսդրության և աշխատանքի պաշտպանության վերաբերյալ նորմերի խախտման մեջ մեղավոր պաշտոնատար անձանց նկատմամբ: Ընդ որում, հիշյալ մարմինների նախաձեռնության հիման վրա դատական կարգով նշանակվող վարչական տույժի չափերը որոշվում են վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով⁵:

Աշխատանքային պարտականությունների բաղկացուցիչ մաս են կազմում նաև ծառայողական գործուղումները: Դրա կապակցությամբ ևս կառավարությունն ունի համապատասխան որոշում, որով կարգավորվում է ամբողջ գործուղման ընթացակարգը⁶:

Ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունն ապօրինի եղանակներով ստացած անձինք պարտավոր են հատուցել պատճառված վնասները: Նման պարտականություն է դրվում նաև քաղաքացիական-իրավական կամ աշխատանքային պայմանագրի խախտմամբ ծառայողական, առևտրային կամ բանկային տեղեկատվություն հրապարակած և (կամ) օգտագործած պայմանադիր կողմերի վրա: Այս դրույթն իր ամրագրումն է գտել մի շարք նորմատիվ իրավական ակտերում, ինչպես նաև ընկերության ներքին կարգապահական կանոններում, աշխատանքային պայմանագրերում:

Հանրային սննդի և սպասարկման ոլորտի որոշ աշխատակիցների համար կա այլ օրենսդրական պահանջ և՛ առողջական

5. Տե՛ս Պետրոսյան Գևորգ Վոլոդյայի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունք: Ընդհանուր մաս / Երևանի պետ. հասալս. - Եր.: ԵՊՀ. հրատ., 2009 - 336 էջ:

6. Տե՛ս Կառավարության 29 դեկտեմբերի 2005 թվականի N 2335-Ն որոշումը:

վիճակի նախնական և պարբերաբար բժշկական զննություն: Պարտադիր բժշկական զննության ենթակա են ՀՀ կառավարության կողմից հաստատված պարտադիր բժշկական զննության ցանկում թվարկված կազմակերպություններում աշխատանքի ընդունվող և աշխատող անձինք, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերը⁷:

ՀՀ-ում աշխատանք կատարող օտարերկրացիների համար, բացի ՀՀ աշխատանքային օրենսգրքից, անդրադառնում է նաև «Օտարերկրացիների մասին ՀՀ օրենքը, որով նախատեսվում է աշխատանքի թույլտվության ստացման ընթացակարգը և պետական վերահսկողության մեխանիզմները:

Ինչ վերաբերում է աշխատակցի աշխատավարձին, դրան հավասարեցրած վճարներին, հաշվեգրմանը, վճարմանն ու հարկմանը, ապա այստեղ էական նշանակություն ունեն ՀՀ հարկային օրենսգրքը, «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքը, «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքը, «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման մասին» ՀՀ օրենքը և այլն:

Աշխատանքային իրավունքի ոլորտում իրավահարաբերությունների համակարգը ներառում է աշխատանքային իրավահարաբերություններ, զբաղվածության ապահովման իրավահարաբերություններ, աշխատողների մասնագիտական ուսուցման և որակավորման բարձրացման իրավահարաբերություններ, աշխատանքային օրենսդրության և աշխատանքի

պաշտպանության վերաբերյալ նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողությունը կարգավորող իրավահարաբերություններ, աշխատանքային վեճերի քննարկումը կարգավորող իրավահարաբերություններ: Ոլորտի բազմազանությունից ակնհայտ է դառնում, որ միայն աշխատանքային օրենսգրքը անկարող է ամբողջությամբ կարգավորել և համակարգել վերոնշյալ իրավահարաբերությունները, ուստի այստեղ օգնության են գալիս այլ նորմատիվ իրավական ակտեր:

Աշխատանքային օրենսդրությունը իրավահարաբերությունների այն ոլորտն է, որտեղ քաղաքական ուժերը՝ իշխանական, թե՛ ընդդիմադիր, հաճախ գայթակղություն են ունենում հանդես գալու պոպուլիստական նախաձեռնություններով, որպեսզի սիրաշահեն մեծ թվով վարձու աշխատակիցների, որոնց մեծ մասը նաև ընտրելու իրավունք ունի: Այդ որոշումների արդյունքում էլ ավելի են խստանում աշխատանքային օրենսգրքի դրույթները, սակայն դրանք մնում են թղթի վրա ու կիրառվում մեծամասամբ պետական ապարատում ու խոշոր ընկերություններում, իսկ փոքր բիզնեսի համար այդ պահանջները ֆորմալ բնույթ են կրում ու պրակտիկայում դրանց շատ քչերն են հետևում:

Կարծում ենք, ավելի նպատակահարմար կլինի որոշ չափով մեծացնել աշխատանքային օրենսգրքի գործողության ոլորտը, որպեսզի այն կարողանա իր մեջ ներառել հնարավորիս լայն շրջականեր ընդգրկել և ավելի մեծ մասշտաբի իրավահարաբերություններ կարգավորել:

7. Տես ՀՀ Կառավարության 27 մարտի 2003 թվականի N 347-Ն որոշումը

ԱՐԱՄ ԹԱՄԱԶՅԱՆ

Արդարադատության պետական խորհրդական,
 ՀՀ վաստակավոր իրավաբան,
 իրավաբանական գիտությունների դոկտոր

ՄԱՐԻԱՄ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական
 ապահովման և սպասարկման բաժնի
 գլխավոր մասնագետ

**ԱՌԱՆՁԻՆ ԴԱՃԱՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ
 ԱՄՐԱԳՐՈՒՄՆԵՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ-2**

Հոդվածում քննարկվում է դաժանության դրսևորումները մարդկության քաղաքակրթության բոլոր ժամանակներում, մի կողմից՝ որպես հանցավոր վարքագծի դրսևորման անձնական հատկանիշ, մյուս կողմից՝ որպես պետության և պետական իշխանության ձեռքին ցանկացած անհնազանդության ճնշման և բնակչությանն ահաբեկման մեջ պահելու միջոց: Վերջին դեպքում, փաստորեն, պետության պատմության, նրա պատմական զարգացման տևական ժամանակաշրջանում դաժանությունն իր դրսևորումներով գրեթե բարձրացվել և հասցվել է օրենքի աստիճանի:

Հոդվածում մանրակրկիտ կերպով վերլուծվել է պետական մակարդակով դաժանության դրսևորումները նախաքրիստոնեական (հեթանոսական, զրադաշտական) ժամանակներից մինչև մեր օրերը՝ «Աստծո դատաստան»-ից և «ճակատագրական մեղք»-ի գաղափարից մինչև միջնադարյան ինկվիզիցիա, Ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխությունից մինչև 21-րդ դարը ներառյալ:

Բանալի բառեր. առանձին դաժանություն, տանջանք, տառապանք, Աստծո դատաստան, Աստծո օրհնություն, ճակատագրական մեղք, կաշին քերել, կաշին քերթել, մարմինը երկու կես անել, քառատում, խաչելություն, գլխատում, ողջակիզում, անվաջարդում, գնդակահարություն, կախաղան, կաթոլիկ եկեղեցի, ինկվիզիցիա, արյան վրեժ, օրդալիա, Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, «Սաքսոնական կապիտուլյաներ», գերմանական «Կորոլինա», Ռուսական Պրավդա, Ռազմական Արտիկուլ, Ռուսաստանի 1649, 1832, 1845, 1903 թվականների օրենքների ժողովածուներ, էլեկտրական աթոռ, մահացու ներարկում, գազային մահախցիկ, ցմահ ազատազրկում:

АРАМ ТАМАЗЯН

Государственный советник юстиции,
 Заслуженный юрист РА, доктор юридических наук

МАРИАМ БАГДАСАРЯН

Главный специалист Отдела правового
 обеспечения и обслуживания Аппарата
 Национального Собрания РА

**ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ ФИКСАЦИИ УБИЙСТВ С ОСОБОЙ ЖЕСТОКОСТЬЮ В ПРОЦЕССЕ
 ИСТОРИЧЕСКОГО РАЗВИТИЯ**

В статье рассматриваются проявления жестокости во все времена человеческой цивилизации, с одной стороны, как личностная особенность проявления преступного поведения, с другой стороны, как средство со стороны государства подавления любого неповиновения и способ запугивания населения. В последнем случае, по сути, за всю историю государства, за длительный период его исторического развития, жестокость с его проявлениями была почти возведена до уровня закона.

В статье подробно рассматриваются проявления жестокости на государственном уровне с дохристианских (языческих, зороастрийских) времен до наших дней - от «Божьего суда» до идеи «фатальной вины», от средневековой инквизиции, Французской буржуазной революции включая до 21-го века.

Ключевые слова: особая жестокость, мучение, страдание, Божий суд, Божье благословение, фатальная вина, соскобление кожи, сдирание кожи, разрубленные тела пополам, четвертование, распятие, обезглавливание, сожжение заживо, колесование, расстрел, повешение, католическая церковь, инквизиция, кровная месть, ордалия, Мхитар Гош, Судебник, «Саксонские capitoлии», немецкая «Каролина», Русская Правда, Артикул воинский, Соборное уложение 1649, 1832, 1845, 1903 годов, электрический стул, смертельная инъекция, газовая камера, пожизненное заключение.

ARAM TAMAZIAN

State Councillor of Justice.
Honored Lawyer of the Republic of Armenia,
Doctor of Law

MARIAM BAGHDASARYAN

Chief Specialist of Legal Support and Service
Department of the RA National Assembly Staff

LEGISLATIVE FIXATION OF MURDERS WITH EXTREME CRUELTY IN THE HISTORICAL DEVELOPMENT PROCESS

The article examines the manifestations of cruelty at all times of human civilization, as a personal feature of the manifestation of criminal behavior, on the one hand, and as a means of suppressing any disobedience in the hands of the State and a way to intimidate the population, on the other hand. In the latter case, in fact, throughout the entire state history, the cruelty with its manifestations has almost been elevated to the level of law.

In the article, a detailed analysis of the manifestations of cruelty on the state level is provided from pre-Christian (pagan, zoroastrian) times up to the present day - from the «Divine Court» and the idea of «fatal fault», to the medieval Inquisition, the French bourgeois revolution to the 21st century.

Key words: exceptional brutality, torture, suffering, God's judgment, divine justice, God's blessing, fatal guilt, flaying, dividing the body into two, quartering, crucifixion, beheading, execution wheel, shooting, hanging, Catholic church, Inquisition, blood revenge, ordeal, Mkhitar Gosh, Datastanagirq (Book of Law), «The Saxon Capitols», the German «Carolina», Russkaya Pravda, the Military Code, the Sobornoye Ulozheniye of 1649, 1832, 1845, 1903, electric chair, lethal injection, gas chamber, life imprisonment.

ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՅԱՆ,

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դասախոս, փաստաբան, ի.գ.թ., դոցենտ

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՕՐԵՆԴՐՈՒԹՅԱՆ

Սույն հոդվածում քննարկվում են ընտանիքում բռնության տեսակներն ըստ ՀՀ գործող օրենսդրության, մեկնաբանվում են դրա առանձին տեսակները և վերլուծվում այն բացերը, որոնք թե՛ իրավունքի, թե՛ իրավակիրառման տեսանկյունից խնդրահարույց են: Ընտանիքում բռնության տեսակները վերլուծելու արդյունքում առաջարկվում են բռնության յուրաքանչյուր տեսակի նոր սահմանումներ, որտեղ ամփոփվում են բռնության այդ տեսակը որոշելու համար էական ու ուղենիշային հանդիսացող հատկանիշները:

Բանալի բառեր. ընտանիքում բռնություն, ֆիզիկական բռնություն, սեռական բռնություն, հոգեբանական բռնություն, տնտեսական բռնություն, անտեսում, համակցված (խառը) բռնություն, ընտանիքի անդամ:

ДАВИД ТУМАСЯН

Преподаватель кафедры уголовного права и криминологии Учебного комплекса Полиции РА, адвокат, к.ю.н., доцент

ВИДЫ НАСИЛИЯ В СЕМЬЕ ПО ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РА

В данной статье рассматриваются виды насилия в семье по действующему законодательству РА, комментируются его отдельные виды и анализируются те пробелы, которые проблематичны как с точки зрения права, так и на практике. В результате анализа насилия в семье предлагаются новые определения отдельных видов насилия, в которых резюмируются значимые и ориентировочные признаки, необходимые для определения данного вида насилия.

Ключевые слова: насилие в семье, физическое насилие, сексуальное насилие, психологическое насилие, экономическое насилие, игнорирование, совокупное (смешанное) насилие, член семьи.

DAVIT TUMASYAN

Lecturer of the Department of Criminal Law and Criminology of the Educational Complex of the RA Police, advocate, PhD, associate professor

TYPES OF DOMESTIC VIOLENCE UNDER THE RA LEGISLATION

This article examines the types of domestic violence under the current legislation of the Republic of Armenia, comments on its types and analyzes the gaps that are problematic both from the point of view of law and in practice. As a result of the analysis of domestic violence, new definitions of certain types of violence are proposed, which summarize the significant and indicative signs necessary to define this type of violence.

Key words: domestic violence, physical violence, sexual violence, psychological violence, economic violence, ignorance, combined (mixed) violence, member of the family.

ՍԵՎԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հոդվածում քննարկվում են հանցագործության կատարողի օրենսդրական բնորոշման, և տարբեր իրադրություններում կատարողի արարքի որակման հետ կապված խնդրահարույց հարցեր: Անդրադառնալով կատարողի օրենսդրական հասկացությանը, հեղինակը նշում է, որ հանցանքն անմիջականորեն կատարողը կարող է նաև կատարող չլինել, համակատարման դեպքում պարտադիր չէ հանցագործությանը անմիջական մասնակցությունը, որ կատարողը կարող է օգտագործել նաև այնպիսի անձի, ով ոչ թե նդհանրապես ենթական չէ քրեական պատասխանատվության, այլ ենթական չէ քրեական պատասխանատվության տվյալ հանցագործության համար: Հեղինակը քննարկում է նաև հանցագործության միջնորդավորված կատարման որոշ խնդրահարույց դեպքերում արարքի որակման հետ կապված հարցեր: Հետազոտության հիման վրա հեղինակը տալիս է կատարողի սեփական բնորոշումը:

Բանալի բառեր. կատարող, հանցանքը անմիջականորեն կատարել, համակատարում, հանցանքի միջնորդավորված կատարում, հանցափորձ, անձ, ով օրենքի ուժով ենթական չէ քրեական պատասխանատվության:

СЕВАК ПОГОСЯН

Заместитель прокурора административных округов Эребуни и Нубарашен,
соискатель кафедры уголовного права юридического факультета ЕГУ

ПО ВОПРОСУ ОБ ИСПОЛНИТЕЛЕ ПРЕСТУПЛЕНИЯ

В статье рассматриваются проблемные вопросы, связанные с законодательным определением выполняемого преступления, и квалификации поступков выполняющего в разных ситуациях. Ссылаясь на правовую концепцию преступника, автор отмечает, что непосредственный исполнитель преступления может не быть исполнителем, в случае соучастия исполнитель не обязан принимать непосредственное участие в преступлении, что может быть вовлечено лицо, которое не то что вообще не подлежит уголовной ответственности, а не подлежит ответственности за данное преступление. Автор также обсуждает вопросы, связанные с квалификацией поступка в некоторых проблемных случаях совершения опосредованного преступления. На основании проведенного исследования автор дает собственное описание исполнителя.

Ключевые слова: исполнитель, непосредственное совершение преступления, совместное совершение преступления, опосредованное совершение преступления, покушение на преступление, лицо, не подлежащее уголовной ответственности по закону.

SEVAK POGHOSYAN

Deputy Prosecutor of Erebuni and Nubarashen Administrative Districts,
PHD Applicant of the Chair of Criminal Law at the Faculty of Law, YSU

ON THE ISSUE OF THE PERPETRATOR OF THE CRIME

The article discusses problematic issues related to the legislative definition of the perpetrator of the crime and the qualification of the act of the perpetrator in different situations. Referring to the legislative concept of the perpetrator, the author notes that the direct perpetrator of the crime may not be the perpetrator, in case of co-perpetration the perpetrator does not have to participate in the crime directly. The perpetrator may not only involve a person who is not subject to criminal liability at all, but a person, who is not subject to criminal liability for the given crime. The author also discusses issues related to the qualification of the act in some problematic cases of mediated commission of a crime. Based on the research, the author gives his own characterization of the perpetrator.

Key words: perpetrator, directly commit a crime, co-perpetration, mediated commission of a crime, attempted crime, a person, who is not subject to criminal liability by law.

ԳԱՌՆԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Արովյանի քննչական բաժնի պետ

ՍԱՄՎԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի Ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող

ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆՄԻԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Սույն հոդվածի շրջանակներում ուսումնասիրվել են առանձին քննչական գործողությունների և օպերատիվ հետախուզական միջոցառումների իրականացման պայմաններում մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման հիմնահարցերը, ներկայացվել են գործող իրավակարգավորումները, ինչպես նաև փորձ է արվել վերհանելու առկա օրենսդրական բացերը:

Բանալի բառեր. մասնավոր կյանքի անձեռնմխելիություն, քննչական գործողություններ, ՕՀՄ, սահմանափակում, երաշխիք:

ГАРНИК МАТЕВОСЯН

Начальник Абовянского следственного отдела следственного управления Котайкской области РА

ՏԱՄՎԵԼ ԱԿՕՍՅԱՆ

студент 4-го курса Академии Образовательного комплекса Полиции Республики Армения.

УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНЫЕ И ОПЕРАТИВНО-РОЗЫСКНЫЕ АСПЕКТЫ ВМЕШАТЕЛЬСТВА В ПРАВО НЕПРИКОСНОВЕННОСТИ ЧАСТНОЙ ЖИЗНИ

В рамках данной статьи были изучены вопросы ограничения права человека на неприкосновенность частной жизни в условиях проведения отдельных следственных действий и оперативно-розыскных мероприятий, представлены действующие правовые порядки, а также предпринята попытка выявить существующие пробелы в законодательстве.

Ключевые слова: неприкосновенность частной жизни, следственные действия, ОРД, ограничение, гарантия.

GARNIK MATEVOSYAN

The Head of the Abovyan Investigation Department of the Investigative committee of RA District of Kotayk

SAMVEL HAKOBYAN

The fourth year law faculty student in the Educational Complex of Police of the RA

CRIMINAL PROCEDURE AND OPERATIONAL SEARCH ISSUES OF INTERFERENCE WITH THE RIGHT TO PRIVACY

In this article the issues of restricting the human right to privacy in the context of individual investigative actions and operational search activities were studied, the current legal order was presented, and an attempt was made to identify existing gaps in legislation.

Key words: inviolability of private life, investigative action, OSA, restriction guarantee.

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.դ., պրոֆեսոր, Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամ

ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ

Եվրոպական համալսարանի իրավաբան, իրավագիտության ամբիոնի դասախոս, ի.գ.թ.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ՍԿԶՐՈՒՆՔԸ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ «ՈՐՈՂԱՅԹ ՓԱՌԱՑ» ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ

Գիտական հոդվածը նվիրված է մեր օրերում արդիական համարվող հիմնահարցերից մեկի՝ աշխարհիկ պետության հայեցակարգին և դրա իմաստավորմանը Շահամիր Շահամիրյանի իրավաբաղաքական հայացքներում և մասնավորապես նրա «Որոգայթ փառաց» սահմանադրության նախագծում: Երբ դեռևս մարդկությանը հայտնի չէր ֆրանսիական և ամերիկյան սահմանադրությունները Շահամիր Շահամիրյանը Հնդկաստանի Մադրաս քաղաքում նախաձեռնել էր հայոց ստեղծվելիք պետության համար նախատեսված սահմանադրության նախագծի մշակման աշխատանքները և ստեղծել իրավամբ պատմաիրավական կոթողային արժեք, որը այսօր էլ ժամանակի հեռվից շատ ուսանելի և արդիական է թվում: Մեր կողմից փորձ է արվել վեր հանել և վերուժել այնտեղ արտացոլված իրավադրոյթները պետության և եկեղեցու փոխհարաբերությունների, նրանց ինքնավարության, ինչպես նաև դավանանքի ազատության և նրա շրջանակների վերաբերյալ: Այնհայտ է դարձել «Որոգայթ Փառացի» արժեքանական և իրավաբանական հզոր ներուժը, Հայ առաքելական եկեղեցու և քրիստոնեության դերի գնահատման կարևորությունը, միաժամանակ առաջադիմական այնպիսի գաղափարների առկայությունը, ինչպիսին է պետության և եկեղեցու տարանջատումը և դավանանքի ազատությունը:

Բանալի բառեր. Աշխարհիկ պետություն, պետության և եկեղեցու տարանջատում, դավանանքի ազատություն, Հայ առաքելական եկեղեցի, աստվածային իրավունք:

АРТУР ГАМБАРЯН

Заведующий кафедрой теории права и конституционного права Российско-Армянского (Славянского) Университета, доктор юридических наук, профессор, заслуженный юрист Республики Армения, Член Профессиональной Комиссии по конституционным реформам Республики Армения

ВАГЕ ТОРОСЯН

Юрист Европейского университета, преподаватель кафедры права кандидат юридических наук

ՔՐԻՍՏՈՆԵՍՏՈՒԿԱՆ ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՆՍՏԻՏՈՒՄԻ ՍԵՂՄԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ «ՈՐՈՂԱՅԹ ՓԱՌԱՑ» ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ

Научная статья посвящена концепции одного из актуальных вопросов – понятие светского государства и его значение в политико-правовых воззрениях Шаамира Шаамиряна, в частности в проекте конституции "Ворогайт Парац". Еще до того, когда человечеству еще не были известны французская и американская конституции, Шаамир Шаамирян в индийском городе Мадрас инициировал разработку проекта конституции для зарождающегося армянского государства, создал поистине историческую и правовую монументальную ценность, которая до сих пор кажется очень поучительной и современной. Мы сделали попытку выяснить, анализировать правовые положения об отношениях между государством и церковью, их автономии, а также о свободе вероисповедания и ее рамках. Стало очевидным аксиологический и правовой мощный потенциал Ворогайта Параца, важность признания роли Армянской Апостольской церкви и христианства и в то же время наличие прогрессивных идей, таких как разделение государства и церкви и свобода вероисповедания.

Ключевые слова: Светское государство, отделение государства от церкви, свобода вероисповедания, Армянская апостольская церковь, божественное право.

ARTHUR GHAMBARYAN

Head of the Chair of Theory of Law and Constitutional Law of Russian-Armenian (Slavonic) University, Doctor of Law, Professor, Honored Lawyer of the Republic of Armenia, Member of the Professional Commission for Constitutional Reforms of the Republic of Armenia

VAHE TOROSYAN

Lawyer at European university, Lecturer at the Chair of Law, PhD in law

PRINCIPLE OF SEPARATION OF STATE AND CHURCH AND FREEDOM OF RELIGION IN “VOROGAYT PARATS” DRAFT CONSTITUTION

The scientific article is dedicated to the concept of one of the actual issues - the concept of a secular state, its evaluation in Shahamir Shahamiryan's legal-political views, particularly in the draft of his "Vorogayt Parats" constitution. Before the french and american constitutions were not known to mankind, Shahamir Shahamiryan In the Indian city of Madras initiated the elaboration of the draft constitution for the newly formed Armenian state and create truly historical and legal monumental value, which even today seems very instructive and modern. We have made an attempt to raise and to analyze the legal provisions reflected there on the relations between the state and the church, their autonomy, as well as the freedom of religion and its scope. Has become obvious the powerful axiological and legal potential of "Vorogayt Parats", the importance of assessing the role of the Armenian Apostolic Church and Christianity, at the same time the existence of progressive ideas such as the separation of church and state and freedom of religion.

Key words: Secular state, separation of state and church, freedom of religion, Armenian Apostolic Church, Divine law.

ՎԱՆԹԱՆԳ ԲԱԲԱՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի ինստիտուտի հայցորդ,
 ՀՀ Սոցիալական ապահովության ծառայության Ճամբարակի տարածքային բաժնի պետ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԷՌՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում մանրամասն վերլուծության է ենթարկվել պետության սոցիալական գործառույթի էությունը, անդրադարձ է կատարվել պետության սոցիալական քաղաքականության ուղղություններից մեկի՝ սոցիալական պաշտպանության համակարգին վերաբերող հիմնախնդիրներին և առանձնահատկություններին, կարևորվել է սոցիալական պաշտպանության առավել արդյունավետ համակարգի առկայությունը և այդ համատեքստում սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության արդյունավետ իրագործումը և պետության սոցիալական գործառույթի ամբողջական իրականացումը:

Բանալի բառեր. սոցիալական գործառույթ, սոցիալական քաղաքականություն, սոցիալական պաշտպանություն, նվազագույն կենսամակարդակ, սոցիալական պետություն:

БАБАЯН ВАХТАНГ

Соискатель Института философии, права и социологии НАН РА,
 начальник Чамбаракского территориального отдела социальной службы МТСВ
 Республики Армения

СУЩНОСТЬ И ОСОБЕННОСТИ СОЦИАЛЬНОЙ ФУНКЦИИ ГОСУДАРСТВА

В статье был проведён глубокий анализ сущности социальной функции государства; были затронуты проблемы и особенности, касающиеся одного из направлений социальной политики государства - системы социальной защиты; были подчеркнуты наличие более эффективной системы социальной защиты, а также эффективная реализация государственной политики социальной защиты и полное выполнение социальной функции государства в этом контексте.

Ключевые слова: социальная функция, социальная политика, социальная защита, минимальный уровень жизни, социальное государство.

ՎԱԿՏԱՆԳ ԲԱԲԱՅԱՆ

PHD applicant, Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA,
 Executive Head of Chambarak Territorial Department of Social Security Service

THE SUBSTANCE AND PECULIARITIES OF THE SOCIAL FUNCTION OF THE STATE

The article provides a thorough analyses of the essence of the state's social function and highlights the problems and peculiarities of one of the directions of the social policy of the state, the system of social protection, highlights the existence of a more effective social protection system and the effective implementation of the state social protection policy and the full implementation of the state social function in that context :

Key words: social function, social policy, social protection, minimum living standards, social state.

ՀԱՅԿ ԱՎԵՏՅԱՆ

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ,
ԵՊՀ Իրավագիտության Ֆակուլտետի Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Սույն հոդվածում, նախ քննարկվում է Սահմանադրական և գերագույն դատարանների դերը իրավական համակարգում: Այդ համատեքստում վերլուծվում է Հայաստանի, Գերմանիայի և ԱՄՆ-ի բարձրագույն դատարանների գործառույթներն ու կարգավիճակը: Ինչպես նաև քննարկվում է այդ դատարանների դատավորների կարգավիճակը:

Հոդվածի 2-րդ հատվածում վերլուծվում է Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման դադարեցումը օրենքի կամ հանրաքվեյի հիման վրա՝ առանց Սահմանադրական դատարանի որոշման: Մասնավորապես քննարկվում է «ինքդ քո գործով չես կարող դատավոր լինել» իրավական սկզբունքը, ցույց է տրվում, որ այն բացարձակ սկզբունք չէ, և որ Սահմանադրական դատարանի դատավորների պարագայում այն չի կարող գործել:

Հոդվածի վերջում ներկայացվում է ժողովորդն իբրև սահմանադիր (pouvoir constituant) և իբրև սահմանադրություն փոփոխող օրենսդիր (pouvoir constitué) տարբերությունները և հեղինակը հանգում է հետևության, որ իբրև սահմանադրություն փոփոխող օրենսդիր ժողովորդը կաշկանդված է համաչափության սկզբունքով և հանրաքվեով դատավորների պաշտոնավարման դադարեցումը պետք է իրականացնի այդ սկզբունքի պահմանմամբ:

Բանալի բառեր. Սահմանադրական փոփոխություն, Հանրաքվե, համաչափություն:

АЙК АВЕТЯН

Прокурор Прокуратуры административных округов Кентрон и Норк-Мараш,
соискатель кафедры уголовного права юридического факультета ЕГУ

ПРЕКРАЩЕНИЕ ПОЛНОМОЧИЙ СУДЕЙ КОНСТИТУЦИОННОГО СУДА

Объектом исследования первой части данной статьи является роль Конституционных и верховных судов в правовых системах. В данном контексте анализируются правомочия и статус верховных судов РА, ФРГ и США, а также статус судей данных судов.

Во второй части статьи обсуждается прекращение полномочий судей верховных и Конституционных судов на основе закона или референдума без решения Конституционного суда. В частности, в статье обсуждается правовой принцип "сам не можешь быть судьей по своему делу", показывается, что данный принцип не является абсолютным и не действует в отношении судей Конституционного суда.

В конце статьи автор представляет разницу между понятиями "народ как создатель конституции" и "народ как законодатель, изменяющий Конституцию". Автор приходит к выводу, что народ как законодатель, изменяющий Конституцию обязан учесть принцип соразмерности и прекращение полномочий судей Конституционного суда на основе референдума должны соответствовать данному принципу.

Ключевые слова: Конституционный реформ, Референдум, соразмерность.

HAYK AVETYAN

Prosecutor of Prosecutor's Office of Kentron and Nork-Marash Administrative District,
Applicant for the Department of Criminal Law, YSU Faculty of Law

TERMINATION OF POWERS OF JUDGES OF THE CONSTITUTIONAL COURT

The article, first and foremost, discusses the role of supreme and constitutional courts in the legal systems. In this context, the author presents the status and functions of Armenian, American and German highest courts and judges.

In the second part of the article the author touches upon determination of powers of judges based on law or referendum without an opinion of constitutional court. Particularly, the principle "Nemo iudex in sua causa" = "No one can be a judge in his own case" is discussed. The author shows that this principle is not absolute and in case of judges of constitutional court it does not work.

The final part of the article, presents the theory of people as a founding of the constitution (pouvoir constituant) and people as a legislator amending the constitution (pouvoir constitué); the difference between them. The conclusion states that as a legislator amending the constitution people are duty bound by the principle of proportionality and while drafting a referendum they have to consider this principle.

Key words: Constitutional reform, Referendum, Proportionality.

ԱՇԽԵՆ ՍՈԴՈՄՈՆՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի
ամբիոնի դասախոս

ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՃԻ ԴԱԴԱՐՄԱՆ ՁԵՎ

Հոդվածում ուսումնասիրվել են իրավաբանական անձի լուծարման՝ որպես դրա դադարման հիմնական ձերից մեկի վերաբերյալ օրենսդրական ձևակերպումները: Այս հիմնախնդրի վերաբերյալ առկա տեսական մոտեցումների, դատական պրակտիկայի վերլուծության հիմնա վրա հեղինակը առանձնացրել է իրավաբանական անձի դադարման տվյալ ձևի բնութագրիչ առանձնահատկությունները, ներկայացրել այդ հարցի կարգավորման վերաբերյալ օրենսդրական թերությունները, ձևակերպել իրավաբանական անձանց լուծարման հասկացության սեփական տարբերակը:

Բանալի բառեր. իրավաբանական անձ, դադարում, լուծարում, վերակազմակերպում, իրավահաջորդություն:

АШХЕН СОГОМОНЯН

Преподаватель кафедры гражданского права ЕГУ

ЛИКВИДАЦИЯ КАК ФОРМА ПРЕКРАЩЕНИЯ ЮРИДИЧЕСКОГО ЛИЦА

В статье рассматривается нормативная база определения ликвидации юридического лица как одной из основных форм ее прекращения. На основании анализа научных подходов к этой проблеме, сложившейся судебной практики автор выделяет отличительные признаки, характеризующие данную форму прекращения юридического лица, указывает недостатки действующего законодательства по этому вопросу, формулируется авторское определение ликвидации юридических лиц.

Ключевые слова: юридическое лицо, прекращение, ликвидация, реорганизация, правопреемство.

ASHKHEN SOGHOMONYAN

Lecturer at the Department of Civil Law of YSU

LIQUIDATION AS A FORM OF TERMINATION OF A LEGAL ENTITY

The article discusses the regulatory framework for determining the liquidation of a legal entity as one of the main forms of its termination. Based on the analysis of scientific approaches to this problem, prevailing judicial practice, the author identifies the distinguishing features that characterize this form of termination of a legal entity, indicates the shortcomings of the current legislation on this issue, formulates the author's definition of liquidation of legal entities.

Key words: legal entity, termination, liquidation, reorganization, succession.

ԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

**ՕՊԵՐԱՏԻՎ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ**

Մարդու իրավունքների պաշտպանության համակարգի ինստիտուտներն ունեն ընդհանուր նպատակ՝ ապահովել իրավունքների պաշտպանություն: Այս աշխատանքը բացահայտում է գործառնական ազդեցության և իրավունքի ինքնապաշտպանության միջոցառումների իրավական կարգավիճակը: Ուսումնասիրության ընթացքում ընտրվել են վերը նշված հաստատությունների իրավական բնութագրերը: Նաև առաջարկներ արվել օրենսդրությունը բարելավելու ուղղությամբ:

Ըստ աշխատանքի արդյունքների՝ իրավունքի ինքնապաշտպանությունը սահմանվել է որպես իրավունքի ինքնաբավ երեսույթ, իսկ գործառնական ազդեցության միջոցները ներառում են պարտավորությունների կատարման ապահովման ուղիները:

Բանալի բառեր. իրավունքների ինքնապաշտպանությունը ոչ իրավական պաշտպանության ձև, օպերատիվ ներգործության միջոցները ներառում են պարտավորությունների կատարման ապահովման եղանակները, լրացուցիչ պարտավորաիրավական հարաբերություններ:

АННА МКРТЧЯН

Аспирант гражданского права ЕГУ

**СООТНОШЕНИЕ МЕРЫ ОПЕРАТИВНОГО ВОЗДЕЙСТВИЯ И САМОЗАЩИТЫ
ПРАВА В ГРАЖДАНСКОМ ПРАВЕ**

Институты системы правозащиты права имеют единую цель - обеспечение защиты права. В данной работе выявлены правовые статусы мер оперативного воздействия и самозащиты права. В ходе изучения были отобраны правовые признаки выше отмеченных институтов. Также были сделаны предложения по усовершенствованию законодательства.

По результатам работы самозащита права была определена как самодостаточное явление права, а меры оперативного воздействия включают в себя способы обеспечения исполнения обязательств.

Ключевые слова: самозащита права как самодостаточное явление права, меры оперативного воздействия включают в себя способы обеспечения исполнения обязательств, институты системы правозащиты.

ANNA MKRTCHYAN

PhD student of YSU Chair of Civil Law

**CORRELATIONS OF THE INSTITUTES OF MEASURES OF OPERATIONAL
IMPACT AND SELF-HELP IN CIVIL LAW**

The institute of measures of operational impact and the institute of self-help have the same aim – protection of civil rights. The article highlights features and distinctives of above mentined institutes, at the same time providing analyze on their legal status.

As a result the institute of self-help has been indicated as a self-sufficient legal phenomenon in civil law, and measures of operational impact has been defined as a means in the system of protection of rights.

Key words: measures of operational impact, features and distinctives of self-help and measures of operational impact, self-help as a self-sufficient legal phenomenon.

ԱՐԹՈՒՐ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

**ՆՈՐ ԵՐԼԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հոդվածը նվիրված է քաղաքացիական դատավարության բացառիկ ինստիտուտներից մեկին՝ նոր երևան եկած հանգամանքներով գործը վերանայելուն: Իրավագիտության տեսության և սահմանադրաիրավական պրակտիկայի վերլուծության հիման վրա հեղինակը տվել է «նոր երևան եկած հանգամանքներ»-ի հասկացությունը, դրանց կիրառման առանձնահատկությունները, որոնց ճիշտ ընկալումը հնարավորություն կտա ճիշտ և անսխալ իրականացնել դատական պրակտիկան:

Բանալի բառեր. նոր երևան եկած հանգամանքներ, դատական ակտ, գործին մասնակցող անձինք, դատարան, սահմանադրական դատարան, գործի նորոգում:

АРТУР НАЗАРЕТЯН

Соискатель кафедры гражданского права и гражданско-процессуального права российско-армянского университета

**ОСНОВАНИЯ ПЕРЕСМОТРА СУДЕБНЫХ АКТОВ ПО ВНОВЬ ОТКРЫВШИМСЯ
ОБСТОЯТЕЛЬСТВАМ В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ РА**

Статья посвящена одному из исключительных институтов гражданского судопроизводства – пересмотру дела по вновь открывшимся обстоятельствам. На основании анализа теории юриспруденции и конституционно-правовой практики автор дал понятие «вновь открывшихся обстоятельств», особенности их применения, правильное восприятие которых даст возможность правильно и безошибочно осуществлять судебную практику.

Ключевые слова: вновь открывшиеся обстоятельства, судебный акт, лица участвующие в деле, суд, конституционный суд, возобновление дела.

ARTUR NAZARETYAN

Post-graduate student at the department of civil law and civil procedure law of Russian-Armenian University

**REASONS FOR REVISION OF JUDICIAL ACTS UNDER NEWLY DISCOVERED CIRCUMSTANCES
IN RA CIVIL PROCEEDINGS**

The article is dedicated to one of the unique institutions of civil proceedings: review the case with the newly discovered circumstances. Based on the analysis of the theory of jurisprudence and constitutional practice, the author has given the concept of "newly discovered circumstances", the peculiarities of their application, the correct understanding of which will allow the juridical practice to be carried out correctly.

Key words: newly discovered circumstances, juridical act, people involved in the case, court, constitutional court, case repair.

ԱՆԺԵԼԱ ՏՈՆՈՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի
Տեխնիկական առարկաների ամբիոնի դասախոս,
ոստիկանության մայոր

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ ՀՀ-ՈՒՄ**

Աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող դրույթները նախ և առաջ ամրագրված են ՀՀ Սահմանադրության մեջ, իսկ աշխատանքի (աշխատանքի ազատ ընտրության) իրավունքի իրականացման գործընթացը կարգավորվում է ՀՀ իրավունքի միասնական համակարգի կարևոր ճյուղերից մեկի՝ աշխատանքային իրավունքի նորմերով: ՀՀ աշխատանքային հարաբերությունների ստեղծմանը և զարգացմանը նպաստում են նաև ՀՀ միջազգային պայմանագրերով:

Աշխատանքային իրավահարաբերությունները, կախված իրենց բնույթից ու առանձնահատկություններից, բացի վերոնշյալից, կարգավորվում են նաև մի շարք այլ նորմատիվ իրավական ակտերով:

Ուսումնասիրվել են ոլորտային տարբեր առանձնահատկություններ:

Բանալի բառեր. աշխատանքային օրենսգիրք, իրավահարաբերությունների կարգավորում, աշխատակից, գործատու:

АНЖЕЛА ТОНОЯН

Майор полиции,
преподаватель кафедры Технических предметов
Колледжа образовательного комплекса полиции РА

ЗАКОНОДАТЕЛЬНОЕ ПОЛЕ РЕГУЛИРОВАНИЯ ТРУДОВЫХ ОТНОШЕНИЙ В РА

Положения, регулирующие трудовые правоотношения, в первую очередь предусмотрены в Конституции Республики Армения, а процесс осуществления права на труд (свобода выбора труда) регулируется одной из важнейших отраслей единой правовой системы Республики Армения - нормами трудового права. Созданию и развитию трудовых отношений в Республике Армения также способствуют международные соглашения РА.

Кроме выше перечисленного трудовые правоотношения в зависимости от их характера и особенностей регулируются рядом других нормативных правовых актов.

Были изучены различные отраслевые особенности.

Ключевые слова: трудовой кодекс, регулирование правоотношений, государственная служба, работник, работодатель.

ANJELA TONOYAN

Lecturer of the Chair of Technical disciplines
of College of Educational Complex of Police of RA,
police major

LEGISLATIVE FIELD REGULATING LABOR LEGAL RELATIONS IN RA

Regulating clauses of Labor legal relations are, firstly, prescribed in the Constitution of RA, and the implementation process of Labor (Free chose of Labor) Law is regulated by one of the main branches of united system of Law of RA, norms of Labor Law. International treaties of RA promote to creation of Labor relations and development. Labor legal relations, due to their character and peculiarities, except the things mentioned above, are regulated also by other normative legal acts. It has been studied various peculiarities of the field.

Key words: Labor Code, regulation of legal relations, civil service, co-worker, employer.

ՀՀ ԴԱՏԱՆԱԶՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂՎԱԿԱՆ ՀԱՆՂԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՎՈՂ ԴԱՅԱՆՁՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջները բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանք չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել.

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (210x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ծախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը՝ առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցվածը թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 120 2020

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պարտավորված չէ հարգելու հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար: